









ՀԱՅՈՒԹ

ՄԱՍՏԻՇՎԵՅԱՆՆԵՐ



182

182  
1936  
ՅԵՐԵՎԱՆ



Կազմը, Փօրձացը, հեղինակի պորտրետ յիշ  
անվանաբերքը ժող. Ակադիչ  
Հ. Կոջոյան նի



Պատ. խմբ. Ռաֆ. Արայիս  
Տեխ. խմբ. Տ. Խաչվանիս  
Սրբազրիչ Հ. Դոլուխանյան



Պետական  
Գլավիկ 268, Պատվեր 1069,  
Հյուս. 3459, Տիբառ 3000

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Բանաստեղծությունների այս դիբքն ամփոփում և իմ գրական ուղեգնացության քիչ թե շատ կարեոր մոմենտները :

Ժողովածուն կաղմելիս յեռ ազխատել ևմ ընտրել այնպիսի նմուշներ, վորոնք ընհրոշ լինեն իժ գրական ճանապարհի տվյալ ետապի համար և, միաժամանակ, արվեստի տեսակետից՝ դրբի ընդհանուր մակարդակից ցած լինեն:

Դրբի՝ պլխավորապես առաջին յերկու բաժինների՝ (վորոնք իմ գրական սկզբնաշրջանի գործերն են) նյութերն ընտրելիս, յես կատարել եմ վոճական, տաղաչափական, լեզվական և այդ կարգի այլ շտկումներ,—խուսափելով հետին թվով կատարվող դադափարական կարգի վերամշակումներից:

Դ. Ն.

ԾՆՈՒՆԴ

Յես ծնվել եմ մի մութ գիշեր, ժանտ, դիվային,  
Ցերը տարերքը խոլ խորհրդով հեռւմ եյին,  
Ավետել և դաժան ծնունդն իմ՝ համարձակ  
Վորոտներով հրդեհարեր մի շեկ կայծակ:

Ճիչն առաջին, վոր թռել ե իս կոկորդից,  
Խլացել ե, ու չեն լսել այն՝ վորոտից.  
Ցերք բացվել են իմ աչքերը կայծակնավառ,  
Բռնկված են տեսել հրով կյոնք ու աշխարհ...

Յեվ ծծել եմ յես կարմիր կաթ, սով, դեղին ժանդ,  
Որորի տեղ լսել միայն նզովք, գարշանք.  
Չեմ զգացել մի մոր համբույր ջերմ, շողային,  
Ինձ շոյել են հրդեհները դժոխային:


Չեն ժպտացել ինձ ծաղիկներ, արև, լուսին,  
Ցերազով իսկ չեմ ճաշակել հրճվանք մի սին.  
Միտքս մատաղ խռովել են հսկա հարցեր,  
Վորոնց առջեւ տնքում ե ձեր աշխարհը ծեր:

Յես տեսել եմ արյուն ու դի, անթիվ մահեր,  
Մահերի մեջ ծնվող, մեւնող թագեր, դահեր.  
Յես տեսել եմ հազար ծնունդ, հազար արև,  
Ու նըանց հետ կյանքն եմ ապրել հազար մի ձեւ:

Ու ձուլված եմ յես այդ դաժան յերկունքներին,  
Հրդեհներին, արևներին, յերկինքներին.  
Կարծես չկամ, բայց ապրում եմ հավերժաբար  
Ու դեռ պիտի տեսնեմ հազար կյանք ու աշխարհ:

1021

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՆՈՒՐՉՆԵՐ



## ԿԱՐՈՑԻ ԴՈԴԱՆՁՆԵՐ

ԺԱՄԱՅՈՒՅՑ

Լինեյի փոքրիկ,  
Թու սրտի ձեին՝  
Ժամացույց գողտըիկ  
Փարված քու թեին։

Նայեյիր անվիշտ  
Դու նրա վրա  
Ու լսեյիր միշտ  
Մեղմ ձայնը նրա։

— «Ժամանակն հույզ ե,  
Անցնում ե, սահում,  
Թու սերը լուսե  
Ել ժւմն ես պահում...»

Լինեյի անլուռ  
Ժամացույց փոքրիկ  
Ու սեղմած ամուր  
Թու թել գողտըիկ։

## ԿԱՐՈՑԻ ՂՈՂԱՆՁՆԵՐ

Դյուավել ե կրծքիս տակ  
Մի նուրբ քող՝ վոսկեզույն,  
Լույսերի պես հստակ,  
Ցանկության պես անքուն.

Սրտիս մեղմ զարկի հետ  
Ու նրա պես զգուշ,  
Թպրտում ե հավետ  
Այնտեղ մի վոսկե հուշ...

---

Ճաճանչները քո վոսկի  
Իմ կապույտն են յերանգել,  
Կարոտներս, և հոգի,  
Ղողանջներ են անարդել:

Քո վոսկեթել նարոտից  
Իմ զմբեթն ե ճաճանչում.  
Թո մշտավառ կարոտից  
Իմ զանգերն են զողանջում:

Կարոտի ՄԱՅՐ

Որորոց ե սիրտն իմ մոլոր  
Մանուկ կարոտիս համար,  
Վողջ գիշերն յերգում եմ որոր,  
Չի քնում մանկիկն այս համառ:

Դու մւր ես, մայրն իմ կարոտի,  
Վոր այդպես անտես, անքննին  
Շարժում ես որոցքն իմ սրտի,  
Չես թողնում կարոտս քնի:

Թուխս աղջիկ, արեի հարսնուկ,  
Ցեկ, վորպես համրույթ առավա,  
Ու կախիր դեմքդ անարցունք՝  
Իմ լալկան կարոտի վրա:

Ցեկ, հարսնուկ, սիրովդ եմ հիվանդ,  
Ցեկ, քանի անհույս չեմ խամրել՝  
Վարսերդ արցունքով լվամ  
Ու թարթիչներով իմ սանրեմ...



Հոգիս քեզ, մայրն իմ կարոտի,  
Վոր հեռվից ալդպես անքննին  
Շարժում ես որոցքն իմ սրտի,  
Վոր կարոտս յերբեք չքնի:

1922

Ա.ՊՐԵԼՈՒ ՀՈՒՅՍ

Ղինեյին քո աչերը, վոր աչերիս լույս են տվել,  
Քո շուրթերը՝ յերգի աղբյուր, վոր ինձ սիրո հույս են  
տվել,  
Ժպիտներդ անմարելի, վոր ինձ կրակ հույզ են տվել,—  
Կմեռնեյի յես, վոր մահից մի հրաշքով խույս եմ տվել,  
Մահի բերանն ընկած՝ վերջին իմ ճիգերին ույժ եմ տվել,  
Միրած կլանքի դաժան լծին համառորեն ուս եմ տվել:

1922

## ԱՆՐՁԱՆՔ

Ն. Բ.-ին

Զեղնից հեռու լինեմ մի որ,  
Պատանությանս լճի ափին,  
Ու չհոսեն առվակներ նոր,  
Նոր յերանդներ չտա արփին,  
Վոր չհուզվի լճակս խոր:

Ու նոր մի ցալ ինձ չհուզե.—  
Տեսնեմ խաղաղ հուշերի չուն  
Լճակի մեջ ձկներ լուսե,  
Ժպիտը ձեր բարի, հնչուն  
Ու վորբացած իմ սիրտը սե...

Պատանությանս լճի ափին  
Կանդնած լինեմ մոլոր, զվար,  
Դուքս գա լճից, ինչպես արփին,  
Ժպիտը ձեր բարի, գոհար,  
Ու լույս փռե իմ նոր ճամբին:

1922

## ՎԱՅՐԿՅԱՆԻ ՑԵՐԳԵՐ

ՊԱՏՐԱՆՔ

Յերբ լսում եմ հեռուներից  
Զայնդ անչար, վճիտ հնչուն, --  
Թո շուրթերը կարծես նորից  
Իմ շուրթերի մեջ են հալչում.

Իսկ շուրթերովդ անմեղ ու գոհ  
Յերբ շուրթերս ևս մեղրով թրջում,  
Թվում ե թե ջինջ ձայնը քո  
Հեռվում կարոտ յիշգ և հնչում:

1922

## ՆԱԽԱՑԳԱՅՈՒՄ

Յերբ մտնում ես դու բակը մեր  
Ու բարձրանում սանդուխներով,  
Նստած տեղից թռչում եմ վեր՝  
Սիրտս լեցուն ուրախ սիրով...

Վոտնաձայնդ ե հին յերդի պես  
Կարծես՝ պահված սրտիս միջին,  
Թերբ զնգում ե՝ դու գալիս ես,  
Ու ցըգում ե կասկածը սին:

1922

ՅԵՐԳ ՈՒ ՆԱՂԻԿ

Պաղիկնես բերել դու ինձ,  
Ծիծաղդ մեջն ես դըրել.  
Քեզ համար յերգ եմ գըրել  
Իմ սրտի բուլըից-հուրից...

Կատմկ եր, թե՛ կյանքն եր դա. —  
Մաղիկդ թոշնեց անգույն,  
Հնչելով անունը քու  
Յերգս կա, կապրի, կերթա...

1922

Փ Պ Բ Տ

Յերբ արևն հոգնած, անկամ  
Ժպտում ե շիկնած թեթև,  
Յետ նայում վերջին անգամ,  
Վոր անցնի լեռան յետե,—

Թվում ե՝ դու յես կամաց  
Բարձրացել սանդուխներից,  
Ու այնողես հոգնած, շիկնած  
Կարոտով ժպտում ես ինձ:

1922

՚ԻՑՈՒԹԱՆՔ

,, Թովիչ ես, զերիչ, մեղքի պես,  
Զղջման պես անուշ, զժվար.  
Մեղքից վերջ յերկունք կա, զիտես,  
Յերկունքից՝ զղջում, և յար»:

— «Թող լինեմ յես մեղք, մեղավոր,  
Յերկունքը կըեմ զժվար,  
Վոր զղջամ անուշ՝ մի լավ որ,  
Յերջանիկ տխրեմ, և յար»:

1922

Stella

Ընկերները քո անունի  
Աներկրային բոց են անշեց,  
Ճրված ծոցում բիլ անհունի,—  
Մարդկանց համար ցնորք ու տենչ:

Ու դու միայն, ասուպի պես,  
Մի գիշերով իջար յերկիր,  
Հետդ բերիր հուրեր պես-պես,  
Անմարելի հույզ ու թրթիռ:

1922

## ՔԱՂՋԱԿԻՆԵՐ

### ԱՆՀԱՍ

Հայացքներդ ինչժւ այդքան խորն են, խրթին,  
Ցեվ ինչքան խոր, այնքան մոտ են սկրող  
սրտին, --

Աստղերը, վոր ցոլքեր ունեն մեր սրտերում,  
Վառվռում են տիեզերքի անհաս շըթին:

1921

## ԱՍՏՎՈՐ

Տես, յերկնքում,—սրտիս պես լայն,—  
Անթիվ աչեր-աստղեր յելան.  
Ինչու զոհ չես դու ինձանից,—  
Իմ յերկնքում դու յես միայն:

1921

## Ծրասաւ

Դու դարնան յերկինք, յես՝ դաշտ նորացան.  
Անձրեի նման կատակներդ անցան.  
Յու խաղից հետո սիրտս կանաչից,  
Մելնեցիր նրան սերդ ծիածան:

1921

ԼՈՒՅՍՈՐ

Սերդ ուժն ե ելեքտրական,  
Սիրտո՞ լամպիկ,—վառվում ե հեզ,  
Ու յերգերս՝ լույսեր լալկան,  
Վորոնց փայլով տեսնում ես քեզ:

1921

## Գ Ա Ն Զ

Ինչ տվի քեզ, իմ անգին, սրտաբուղիս ե, անհատնուա,  
ինչ վոր մնաց՝ մնում ե, խորունկ պահված հանքի  
պես.

Գուցե հեղեղն ե գալիս, վոսկու հանքերն իմ վատնում,  
Բայց դա անկամ տված ե, մահից տարված կյանքի  
պես:

1981

## ՀԱՑԱԹՐԻ

Ուր ես հառել հայացքդ, իմ սիրելի, իմ անգին,  
թե հառել ես անցյալին, —նա տխուը ե, մոռացիր.  
ինչու տխուը ես նայում՝ թե նայում ես գալիքին, —  
Ո, նա լաֆս ե լինելու, այնքան պայծառ, լուսածիր:

1938

## ԳԱԶԵԼՆԵՐ

### ԼՈՒՅՍՆՐ

Ձեռներդ զուլզ աշտանակներ,  
Շողուն մի-մի լույսի նման:

Թո մատները ճերմակ, յերեր՝  
Վառվող մոմի լույսի նման:

Վարսերը քո, գիշեր ու քուն,  
Աչերդ աստղի լույսի նման.

Քնած լինեմ յես, թե արթուն,  
Դեմս ես շողի, լույսի նման:

Ծիծաղը քհ փրփուր-ալիք  
Տեսնում եմ յես լույսի նման,

Ու փայլերին քո խաղալիք՝  
Այլվում եմ հեղ լույսի նման:

1921

## ԱՆԱՑ ՆԻԱԽԱՆ

Ոքհնյալ լինի մեր հանդիպման ժամը պայծառ՝  
Դարնանային այգն վոսկեթույր,—վոսկե աղջիկ:

Դու շողալով այդ լուսայգին՝ ինձ մոտեցար  
Ու ժպտացիր վորպես հին քույր,—վոսկե աղջիկ:

Այգը անցավ, հալվեց որը այն վոսկեգույն.  
Շատ գարուններ շուտով անցան,—վոսկե աղջիկ.

Բայց ժպտագ, արևի պես, իմ բիլ հոգում  
Հյուսեց անանց մի ծիածան,—վոսկե աղջիկ:

1921

## ՅԵՐԿՆԱՑԻՆ ՍԵՐ

Լուսինը պաղ ու դալուկ, թոքախտավոր սիրական,  
Վարդ աստղերին և հսկում անհորիզոն պարտիզում։

Դիտե, վոր այդ վարդերում բյուր խորհուրդներ, հետ-  
քեր կան,  
Բայց չի տեսնում, չի գգում,—անհորիզոն պարտիզում։

Արև աստվածն անաստված հեռանալիս կվառե  
Այդ վարդերը հրաշեկ,—անհորիզոն պարտիզում։

Վոր իր հետքը կորցնի, և սիրուհին մարմարե  
Մնա մոլոր, հոգնարեկ անհորիզոն պարտիզում։

Արևն այդպես հաղար վարդ-աստղ ե վառում մոգական  
Ու փախչում ե, մալը մտնում անհորիզոն պարտիզում։

Յեվ փնտըրում ե միշտ նրան հոգնած, խարված  
սիրականն,  
Ու չի գտնում, չի գտնում անհորիզոն պարտիզում։

## ՎՈՐՈՆՈՒՄ

**Յերկար յերկար վորոնեցի մի այգածին կախարդականը՝  
Հոգնած, տիսուր, կարոտել եմ ուրախ լացին կախար-  
դական,**

**Վորոնել եմ միայն մեկին ու չեմ գտել հազարներում,  
Սպասում հմ հիմա նրա սիրո այցին կախարդական։**

**Դու ներիք ինձ, բանաստեղծի հոգին՝ գարնան թըռ-  
չունի պես,  
Վոստոստում ե, ո, անգիտակ վոսկե ցանցին կախար-  
դական։**

**Կյանքում բոլորս վորոնել ենք, դու ել ինձ պես վորո-  
նել ես,  
Կյանքը մի մեծ վորոնում ե խոր, մթածին, կախար-  
դական։**

Վլորոնումից վլոմանք դառնում են հին տունը իրենց  
մւ հանձնում են նորից սիրտը իր հին բոցին կախար-  
դական.

Ներիր սիրույս,—պանդուխտ ինձ պես,—վլորոնումներն  
իր մոլորուն,  
Մինչև հասնի իր լերազած կյանքի զանձին կախար-  
դական:

## ՈՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Դու ջատ դաժան ես յեղեվ յես որհնում եմ՝ լավ  
լինեաւ,

Ու սրտերում զնգացող պոետի համբավ լինեաւ  
ինչքան դռներ վո՞ր բացվեն ու հոգիներ քեզ ժըպ-  
տան,

Անզրկելի լինես դու, անհուն ու անբավ լինեաւ

Հազար ծովեր թող լինեն խաղաղ ու անփոթորիկ,  
Այդ ծովերում մշտալող դու մի լուսե նավ լինեաւ

Դեղ համար հուր եմ վառել ու այրում եմ ինքս ինձ  
Զմատնվես այդ հրին, անկարոտ, անցավ լինեաւ

Ոյրվեմ տապից, ծարավից ու վորպես ջուր տենչամ-  
քեզ,

Անապելի, մշտալի անմահ ջրի գավ լինեաւ

Թող յես այրվեմ, մոխրանամ, միայն յերգերն իմ  
մնան,

իմ յերգերում մնաս դու, ու մնալով լավ լինեաւ

1931

## ԻՄ ԴՆԶՈՒՆ

Ան մի անդամ յես տեսա, անցավ՝ գնաց այն գնչուն,  
Միայն մի ումալ խմեց ջուր սրտիս ծաղկած պարտի-  
զում.

Նրա ձայնը ազբյուրի արծաթ կարկաչն ե հնչուն,  
Հողանչում ե քաղցրալուր սրտիս ծաղկած պարտի-  
զում,

Փղիտների ցնցուղով, հայացքներով իր զվարթ  
Վոռոգել ե նա վարդեր սրտիս ծաղկած պարտիզում:

Ու իմ միտքը լարել ե սիրո անմեղ վորոգայթ,  
Չի վորսացել նրան դեռ սրտիս ծաղկած պարտիզում:

Կարծեցի թե անցել ե սեաչ աղջիկն, իմ գնչուն,  
Ու չեմ տեսնի նրա չուն սրտիս ծաղկած պարտիզում:

Բայց ասացին բույրերը և ծիծաղներն իր հնչուն,—  
«Մոլորվել ե քույր գնչուն սրտիդ ծաղկած պարտի-  
զում»:

## ՎՈՍՏԱՑՆ

Արեւը բիլ յերկնքում ցանց և հյուաել վոսկեթել,  
Որորվում ե վոստայնում ինքն ել վորպիս վոսկե  
սարդ:

Ու քո կապույտ աշխարհում հոգիս իրեն և բանտել,  
Որորներով, յերազով՝ քնել վորպիս վոսկե սարդ:

Հավաքելով իր ցանցը, վոր հինել եր լույսերով,  
Մալր և մանում արեւ գաղթող, վորպիս վոսկե սարդ:

Բայց իմ հոգին խճճում և իր վոստայնը նոր սիրով,—  
Շղթայվում ե քո յերկրին հաղթող,—վորպիս վոսկե  
սարդ:

1991

## Շ ԵՐԱՄԻ ՊԵՍ

Իրեն համար հոգիս հյուսեց մի պատանք,  
Շերամի պես, սիրո թելով,—քո հոգում:

Թաղցը և նրան այդպիսի բանտ ու կապանք,  
Քնած և նա յերաղելով,—քո հոգում:

Ու մի որ ել շերամ-թիթեռն անպատրանք  
Պիտի զարթնի նոր զազելով՝ քո հոգում:

Դուցե նորից թռչի ազատ դեպի կյանք,  
Միայն վոսկի հուշ հյուսելով՝ քո հոգում:

1921

ՀԱՄԲՈՒԹՐԻ ՎԱՅՐԿՅԱՆ

Բոլորն են տեսչում, և գիտե ինչ ե վայրկյանն  
համբույրի,  
Աչքերի համար յերկնային նինջ ե վայրկյանն  
համբույրի:

Շուրթերի համար, վոր հազար-հազար համբույր են  
մարում,  
Անշիջանելի, անհապուրդ տեսչ ե վայրկյանն  
համբույրի:

Համբույրի պահին տիեզերքն ե մեր սրտի մեջ յերգում,  
Բայց մենք լռում ենք. լռության ճիշ ե վայրկյանն  
համբույրի:

Ու յերբ սուզվում են շուրթերն իրար մեջ, աչքերը  
նիրհում,  
Սրտերը յերգում,—հոգու թախչք ե վայրկյանն  
համբույրի:

## ՎԱՐՍԵՐԻ ՅԵՐԻ

Գաղելների ձայն լսեցի յերազում, Սեղա,  
Յերգում եյին Հեջազում, կամ Շիրազում, Սեղաւ  
Արևելքի յերկինքներում զընդում եր նա,  
Եյանք եր ծորում Մահարայի ավազում, Սեղաւ  
Խմում եյի կյանքիս գինին այդ լուսե պահին,  
Ու կաթում եր յերգը շիթ-շիթ իմ թասում, Սեղաւ  
Յերբ զարթնեցի քամին գեմքիս քո վարսերի  
Գաղելներն եր տանում բերում, սիրասուն Սեղաւ

1924

## ԲԱՂԱԱՆՔ

Դորիզոնը մռայլ ե մեզ, հուր եմ ուզում,  
Տուր ինձ սիրո արել շեկ, հուր եմ ուզում:  
  
Թո մաղերը՝ կարկտարեր ամպեր մռալլ  
Իսկ յես՝ մըսող պոետ մի հեզ, հուր եմ ուզում:  
  
Հայացքներդ, սուր կայծակներ, ծվատում են  
Վարսերդ խիտ ամպերը սեզ,—հուր եմ ուզում:  
  
Թեկուղ կայծակն այդ միսրճվի, սիրաս բոցե,  
Թո այդ զարկից յես կենսարեկ, հուր եմ ուզում:

1924


## ՃԵՐՄԱԿ ԹԵԼԵՐ

Ո՛, սպասիր, յերգեմ քիչ ել ճերմակ թելեր,  
Քսանամյա կյանքիս մեջ ել՝ ճերմակ թելեր:


Շվարել եմ մտածելուց,—վժը տեղից են  
Զահել գլխիս վրա իջել ճերմակ թելեր:

Ինձ թվում եր՝ թե սև գլխիս հույսը ճերմակ  
Յերկու ալիք լույս ե փշել՝ ճերմակ թելեր:

Բայց յերբ դեմս քո վարսերն են սև ամպանում,  
Դիտեմ, գլխիս ձյուն է իջել—ճերմակ թելեր:



ԱՐԵՐԻ ՃԱՄԲԻՆ



## ՃԵՐՄԱԿ ՏԵՍԻԼՆԵՐ

Հովհ. Թումանյանին

ԴԵՊԻ ՏՈՒՆ

Հին կյանքի սոսկումը սուր,  
Շողացող դաշույն մի շեկ՝  
Արյունեց իմ սիրտը նուրբ,  
Մարսափով առաջ քշեց:

Տենդի մեջ՝ տեսա մեկեն  
Ապագան հորձանք-հորձանք,  
Իմ հոգին, սակայն, հետ եր,  
Իմ կյանքը՝ հին զառանցանք:

Կյանքի զվարիթ քըքինջն ել  
Վոր թմբած սիրտս անսաց,  
Կարծեց թե մահվան ճիշն ե  
Գլխիս վրա թևաբաց:

Ու մգլած միտքս, գիտե՞ք,  
Թե ինչեր, ինչեր ծնավ,  
— Հնար չե՞ փախչել, միթե,  
Ու կրկին յետ, տուն գնալ...

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Յքեղ մի շենք՝ դաշտի մեջ լայն,  
Հազար ճամբի սկիզբ ու վերջ,  
Հանգույցների հանգույց և այն՝  
Դադտնիքներով դյութիչ ու պերճ:

Նստած և նա պալատում այն,  
Յեզ պատանի, և՝ ծերունի,  
Ակոսված և ճակատն իր լայն,  
Բայց աչքերում հուրեր ունի:

Հազարներ են գալիս-գնում  
Մարմարակերտ մեծ դռներից.  
Փրփրում և շենքը այդ նույն,  
Դատարկվում ե, լցվում նորից,—

Ոթեանում նստած և նա,  
Անհուն մի գիրք և լուռ թերթում.  
Այդ տարերքում նստած մենակ  
Նրանց անմահ վեպն և կերտում:

1991

## Հ Ա Յ Ր Ս

Ախսախարխուլ մի խուց ե, հին,  
Ներսը կանթեղ մի դալկարոց.  
Մի ծերուկ իր տխուլը հոգին  
Ծխում ե լուռ, անհեծկլտոց:

Դվիսին կյանքի ձյունն ե իջել,  
Իջել, կախվել մորուքից վար.  
Տաճար դեմքին յերկու աչեր՝  
Հույս հավատի ջահեր են վառ:

Զեն շարժվում զուրթերն իր չոր,  
Հոգու մեջ ե աղոթք անում.  
Յեկ իր սիրտն ե թախծատոչոր  
Աղոթքի տեղ վեր սլանում:

Ծեր աչքերի ու կանթեղի  
Լույսն ե նվազ աղոտանում,  
Ծերն ե դառնում մի լույս դեղին,  
Անեանում, անհետանում:

## Հ Ա Յ Ր Ա

Վիսախարխուլ մի խուց ե, հին,  
Ներսը կանթեղ մի դալկարոց.  
Մի ծերուկ իր տխուլը հոգին  
Ծխում ե լուռ, անհեծկլառոց:

Գլխին կյանքի ձյունն ե իջել,  
Իջել, կախվել մորուքից վար.  
Տաճար դեմքին յերկու աչեր՝  
Հույս հավատի ջահեր են վառ:

Զեն շարժվում զուրթերն իր չոր,  
Հոգու մեջ ե աղոթք անում.  
Յեկ իր սիրտն ե թախծատոչոր  
Աղոթքի տեղ վեր սլանում:

Ծեր աչքերի ու կանթեղի  
Լույսն ե նվազ աղոտանում,  
Ծերն ե դառնում մի լույս դեղին,  
Անեանում, անհետանում:

Ք Ա Խ Յ Ր Ա

Ունի մի դեմք ասես լուսին՝  
Շուրջը յերկու ամպ խոպոպիկ.  
Վարսերի հետ սափորն ուսին՝  
Գնում ե նա վոտաբորիկ:

Ժպիտ ունի աչքերի տակ,—  
Ամպի տակի զողն ե հրե,—  
Ինքն ել այնքան նուրբ ե, հստակ,  
Վոր տեսնում ես իր մեջ իրեն.

Աղբյուրի մոտ կանգնած անհարց  
Նայում ե նա ջրին ալդ ջինջ,  
Նախ ժպտում ե, ապա հանկարծ  
Խառնում ջրին ծիծաղ ու ճիչ...

Ու հալվում են ծիծաղ ու ջուր,  
Հրաշք, ինքն ել ձուլեց, թափով  
Դարձավ ճերմակ-ճերմակ փրփուր...  
Ափին մնաց մի սին սափոր:

Յ Ե Ղ Բ Ա Յ Ր Ս

Ասապետ ե, ճերմակ հաղած,  
Գանգուրները իջած ուսին,  
Սուրն իր՝ շանթի մի շեղը կանգնած,  
Ինքն ել կարծես սիրան ե լույսի:

Ճերմակ մի ձի ունի արձակ,  
Լույսի մի գունտ՝ հողմ հորձանքով,  
Ասպանդակում ե համարձակ,  
Ինչպես արեն ե իր յերկնքով:

Ծիծաղ լույսեր ցանելով շուրջ  
Դեպ ինձ ե նա գալիս շտապ՝  
Բայց հեռու յե, վորպես անուրջ՝  
Տիեզերքի ծովում անափ:

Մեր միջև մի խորխորատ կա,  
Ո, այն անցնելն անհնար ե.  
Խորտակվեցավ... կերթա այնքան,  
Վորքան հոգին իմ նշմարե:

ՎՈՐԲԸ

Քնած ե նա անզոր, անկամ,  
Ու ակացիան սիպ-սաղափե  
Աչիկների վրա մանկան  
Թերթիկներն իր լուռ կթափեւ:

Շոյանքներն այդ մեղմ, մայրաբար  
Մանկան հոգում,—ջինջ մթնոլորտ,—  
Շողացնում են կապում կամար  
Ծիածանի գույներով յոթ:

Ի՞նչ ե տեսնում մանուկը հեղ  
Ամեն թերթի մեկ հպումին.  
—Այն լերջանիկ վայրկյանն ե մեկ,  
Անկրկնելի հանդիպումին:

Յերբ զարթեցրին՝ նա հեծկլտաց,  
Հաբցրին. — ասաց խեղճն անամոք,  
— Ինչպես պատմեմ այն, վոր գնաց,  
Վոր չտեսավ ձեզնից վոչ վոք:

1921

## ԼՈՒՍԽԻ ՄԱՎԸ

Մի իրիկուն գորշ ու մթին  
Մի բանաստեղծ խորհրդասեր  
Զուլված միստիկ հին հեքյաթին՝  
Լուսնի ծագման լուռ կսպասեր։

Բացվեց զուռը անճռնչյուն,  
Լույսի մի հորձք նրան հասավ,  
Ու մի մանուկ քաղցրահնչուն  
Զայնով, լույսի միջից, ասավ.

— «Մի յերազիր լուսինն անհույս,  
Մենք թաղեցինք յերեկ նրան,  
Սառած եյին և՛ փայլ և՛ լույս,—  
Բայց նորանոր արեներ կան»։

• • • • • • • •

Յերբ նա ուշքի յեկավ թեթև  
Թափուր եր սիրտն այն հին հույզից.  
«Ա՞հ, լուսինն եմ կարծել արև,  
Ու սառել եմ նրա լույսից...»։

1991

## ԽԱՐԽԱՓՈՒՄ

Այն գիշերն այնպես բարդ եր,  
Այն գիշերն այնպես եր մութ,  
Վոր ահի ակընթարթը  
Թվում եր մի դար անգութ:

Այն ուղին այնքան ձիգ եր,  
Անորոշ եր, անհատնում.  
Մաքառման վերջին ճիզը  
Զուր եյինք ճամբին վատնում,

Ո՞ւր եյինք գնում, ուր եր  
Մեր կայանն աստեղարիր,  
Ո՞ւր եր մեզ դյութող հուրը՝  
Մեզ հանձնած այդ խարխափին.

Այն ուղին ցնորք, մութ եր,  
Մահն եր նրան պարուրում.  
Ինչ դյութել եր մեզ՝ սուտ եր,  
Մենք՝ շրջիկ, ճերմակ ուրու

## Մ Ե Ղ Ո Ւ Ն

Այն Թվ եր, ճիշտ լսեց  
Ու յեկավ հրե հոգով.—  
Արևն եր՝ յեկավ, կիզեց.  
Չորացավ ճահիճը գոլ:

Շեկ լույսի յերկու բյուրեղ  
Արևն իր սուրբ կնճիթով  
Իմ սրտի վերքին դրեց,  
Ու հոգիս բացվեց խինդով

Մշուչը հազար փեղեն  
Լուռ ծալեց թերեն իր հին,  
Յեկ հազար քաղաք ու շեն  
Ժպտացին փախչող նիրհին:

Իմ ծաղկած սրտի վրա  
Ախորժով անուշաղու  
Հյուսում եր մեղքը իրա  
Լուսաթե մի նոր մեղու:

1022

Վ Ե Ր Ձ Ե Ր Գ

Իմ բարի աչքերով, ընկեր,—  
Ցերբեմն չար, արնակալած,—  
Ցես մարդն եմ տեսել մարդակեր,  
Ու կյանքը մեր՝ մահահալած,

Ահից սիրտն իմ քարացիլ ե,  
Խեղղվել ե ճիշն իմ կոկորդում...  
Տեսել եմ՝ մարդն արածել ե,  
Ու կերել ե մայրը վորդուն...

Ընկել եմ յես դաժան գեհեն,  
Ցերք յելա կրկին լույսի տակ,  
Թողած արել վոսկեղեն,  
Ցես տեսա ուրուներ ճերմակ:

Բայց հիմա մշուշը արյան  
Ցնդել ե խարող արեով,  
Ներիր իմ մեղքը հնորյա,  
Ընկեր իմ, որ իմ արեոտ:

# ՈՐԵԲԻ ՍԵՐԸ

ՎԱՅՆԼԻ

ՏԻՊԱՆԻՆ

Աշխարհի բախտի վրա,  
Վորպես վիթխարի մի դույլ՝  
Արեն և կախվել շռայլ  
Ու լույս և ծորում անդուլ

Շորում և ժպիտ ու սեր,  
Մըռում և գրգիռ, զարժում,  
Վառում հմայքներ լուսե  
Ու կյանքը առաջ քաշում . . .

Բացել են սիրտ ու սինի  
Մարդիկ արեի դիմաց,  
Խմում եմ պուրապուր գինի,  
Արբում են կյանքով հիմա:

Ում ինչ փույթ՝ թե յես ու դու  
Զենք խմել մի ումալ անգամ,  
Շրջում ենք շվար, անտուն,  
Մեսնում ենք լուռ, արնաքամ:

1928

## Ա Ր Ե Ա Վ.

Առը մարդիկ հաղթ, անհամբեր,  
Հողմի պես շտապ, արագ  
Որերի մեջքը թամբել  
Նստել են թամբի վրա:

Դալարք ե, վազք և անդուլ.  
Քշում են, քշում, քշում,  
Յետեռում վոռնում և թույլ  
Անցյալը անտեր մի շուն:

Որերի վաշտերը խիտ  
Թռչում՝ են թափով, անսանձ,  
Ու նրանց բաց յերախից  
Թափովում ե փրփուրը թաց:

Ու վազքի այդ գալարքում  
Բացվում են սրտերը քաջ  
Յեվ իրենց կարոտն անքուն  
Որերից նետում տռաջ:

Վ Ա Զ Ք

Ո', ի՞նչ արագ ե այս չուն,  
Ուղին՝ քար ու առապար,  
Թող մտրակը քո շահուն,  
Կամաց քշիր, կառապան:

—Ո', տես, ճամբարդ, թռչում են  
Ուղեկիցներդ՝ հեծած հողմ,  
Նրանք հրե թռչուն են,  
Դու՝ դեռ կառքով ճամբորդող,

Ճամբարդ, կանցնի կյանքը շուտ  
Ու կմնաս դու մենակ  
Քո դեմ դժգոհ ու փակշուրթ,  
Կոտրած կառքդ՝ քեզ հենակ:

—Լավ ե ուրեմն, յերբ կարմիր  
Ցողած ուղիդ առապար,  
Յետ չես մնում, կանգ առ մի,  
Քշիր, քշիր, կառապան:

## Կ Ա Ր Ո Տ Ա Ն Ք

Արբել են այսոք ամենքը՝  
Կյանքի ու մահվան կռվում.  
Փախչում ե, հաջում ե մեգը,  
Այն ինչ ե վառվում հեռվում...

Յերկուսն են, -- մեկը հասուն ե,  
Դեղնել ե վոր բարկ վառվի,  
Իսկ մեկը կրակ՝ կիզում ե,  
Վոր կյանքը առաջ տարվի:

Այս խինդը անսանձ, այս ահը  
Թովվել են յերազ ու յերգ,  
Վայրկյանը ե՛ կյանք և մահ ե,  
Վաղը՝ վարդ, անցյալը՝ վերք:

Անցնում են այս բարկ որերը, —  
Նրանց հուրն յերբ աղոտի,  
Կայրի մեզ այսորվա սերը,  
Կայրի մեզ հուրը կարոտիւ

## ՎԱՀԱՆ

Արևի բարկ հրի դիմաց  
Բարձրացել ե դեղին մի թաթ.  
Կույս աչքեր ել դեռ կան հիմա,  
Վոր կարծում են արևն ե դա:

Նրա լույսը պաղ ու դեղին  
Բավական ե պղերգ մարդուն,  
Վոր մոռացել լույսի ուղին  
Մրափում ե կիսաարթուն:

Իսկ ում սիրտը վառ ե հիմա  
Ճեզ տենչում ե արև կիզուն,  
Տեսնում ե, վոր թաթի դիմաց  
Ծառացել ե զողուն մի սուր.

Գիտե, վոր սուրն հղորազարկ  
Պիտի ճեղքե թաթն այդ դեղին,  
Վոր մոխրանա վահանն այդ չար  
Բացվի լույսի փառփառ ուղին:

Ն Ա Ր Ս Ե Ր

Իմ սիրաց բըռնզե մի թաս.  
Թափել եմ արյունն իմ հին,—  
Գիտեյի՝ այսոր կգաս,  
Կլեցնես քո նոր գինին:

Լցրել են որերն այս հուր  
Իմ սրտում կարմիր ծիծաղ,  
Ցոլում ե այնտեղ մի սուր՝  
Քո սերը, — դաժան մի խաղ:

Վառվռուն սրիդ չեղըին  
Արյունս ե ցայտում թափով,  
Քո սուրը ամուր սեղմիր,  
Վոր սիրաս հևա տապով:

Վոր զգամ խոր ու անմոռ  
Քո սերը, յերբեք չեղած,  
Որերի իմաստը նոր՝  
Գալիքի գոհասեղան:

1928

## Զ Ա Հ Ը

Որերի զոհի սեղանին  
Դրել ե ջլուտ մի բազուկ  
Իր զոհը վոսկե գլխանի՝  
Աչքերում սոսկում ու ցասում։

Իր զոհը,—մի ցուլ վոսկեղջյուր,—  
Դողում ե մահվան տագնապից,  
Տեսել ե նա դանակը սուր,  
Նայում ե անով ակնապիշ.

Աչքերով իր չար ու անկար  
Տեսնում ե յերազը հետին.  
Բառաչ ե թողնում խելագար  
Սարսելով յերկինք ու գետին։

Իսկ զոհողն այնպես հաղթական  
Վառել ե խարույկ խնդրումի,  
Նայում ե դեպի ապագան,  
Վոր սիրով նա զոհն ընդունի։

1928

ԴԵՊԻ ՄԵԿԱ

1

Պալմս եմ յես հեռու հեռվից՝  
Սրտիս մեջ կարոտ ու բաղձանք,  
Խոչպես մի թափառիկ բեղվին՝  
Մանեման ճամբաներ անցած:

Տանում եմ յես ուրուն մահի  
Գալիքին, վորպես մի նվեր,  
Զարհուրանքը, լուռ ամայի  
Շեների, անկյանք ու ավեր ...

Մի գիշեր, յերբ մահը կարող  
Հողոտում եր շեն ու քաղաք,  
Յես՝ լույսի ու կյանքի կարոտ՝  
Թողեցի մեր տունը, փախաւ.

Թողեցի մահվան մահիճում  
Սրտերը հարազատ ու մոտ.  
Զուր ելին նրանք սուր ճշում,  
Աղերսում գթություն, ամոթ:

Հրդեհը հազարանկեղու  
Լատաղած կրքերին իր գերի,  
Լիզում եր, խելազար լիզում  
Մարմինը մեռնող շենքերի:

Ու մինչև յերկնքի հեռուն,—  
Բոլըքոքված աստղերի ջահով,—  
Հրդեհված յերկիրն եր փռում  
Մի գարզ պղծության ճենճահոտ»

Փռում եր սև թռւյն ու թարախ.  
Հրեց հաղարդ լսանի.  
Աշխարհը դառնում եր, ավաղ,  
Գիշահոտ, արյան բաղանիք...»

Ու սըտից թռած ճչի պես,  
Հեղակարծ թռած, անգիտակ.  
Մենմենակ փախչում եյի յեւ.  
Անկարեկիր յերկնքի տակ:

Այդ վերջին, կույր լուսադեմին  
Վերջին կենդանին եր մեռնում.  
Մեր հին, հայրենի տան շեմին  
Մեր շունն եր վորբացած վունում»

Այլեվս յես յետ չդարձա,  
Վոր չհուզեմ նիրհը փողու.  
Ու հանգավ անարե, անձախ  
Այն կյանքը մոխրի մշուշում»

Արտիս մեջ կարոտ ու բաղձանք  
Յես, ինչպես մի շրջիկ բեդվին,  
Վոլորուն ճամբաներ անցա,  
Աչք հառած ինձ կանչող հեռվին:

Յես կայան առ կայան անցա  
Սարսափի մի դաժան ուղի,  
Յեվ ամեն կայանում անձայն  
Մի այրող, դառն արցունք թողի:

Յեվ ամեն մի նոր կայանից  
Գողացա հույսի մի նոր չող,  
Արևի լույսերից մի գիծ՝  
Միշտ կյանքի մասին ինձ հուշող:

Յերբ հասա գալիքի ափին  
Փոշոտ ու խոնջած, արնագին  
Իմ հոկին ուզում եր արբի  
Այդ բախտով յերջանիկ կյանքի:

Սակայն իմ անողոք ուղին  
Քամել եր արյուն ու կըակ,  
Ուզում եր հանձնել ինձ հողին,  
Խնչպես մի վարակիչ դիակ...

Յեկ ահա այդ ուղու վրա,  
Խնչպես մի մարմնացած լքում;  
Ընկել եռ անոք, անկրակ,  
Լերդացած արյուն եմ թքում:

Իմ դեմը հազար հրապույր,  
Գալիքը, մշտատե գարուն.  
Յեկ որելն արևափրփուր  
Գրգիոներ, տենչեր են վառում:

Ույժերը բորբոք հու ըհուրան  
Ընկել են մըցումի արշավ,  
Կժպտա բախտը լոկ նրան,  
Ով վոր այդ գալիքին հասավ:

Ուզում եմ, ո, յես ել վազել  
Հասնել այդ գալիքին ազնիվ.  
Ո՞վ ե, ով իմ չափ յերազել  
Վոր գալիք այդ կյանքին հասնի:

Թոշում են որերը շըջիկ.  
Ընկած եմ յես մենակ թեև,  
Բայց ահա մի որ մի աղջիկ  
Ինձ ասաց ժպտադեմ «դե», յելք:

Լույս, արևածագ և կարծես  
Յերկու բիլ ծովերի վրա.  
Վառվում են շքեղ, սիրակեղ  
Զինջ կապույտ աչքերը նրաւ

Շուրթերը կարմիր են ու կաս,  
Տենդեր հարուցող յերկու բոց,  
Շուրթերում ճերմակ մի յերաղ  
Մադափի մի դլութիչ շարոց:

Շարժվում են այդ շուրթերն ազահ  
Սիրո վեհ խոսքերով կիզուն,  
— «Կանչում և մեղ լույս ապագան,  
Կհասնենք, նստել ես իզուր»:

Զգում եմ վոր հուրը հասավ  
Ու լցվեց սիրտս անեղեր,—  
Այդ արեն և հրահոսան,  
Վոր լցնում ե կյանքի նոր սեր:

Նրա կրծքի դաշտի վրա,  
Ուր բացվել են հազար շուշան,  
Զարկել ե սիպ յերկու վրան  
Կյանքի գարունն արևաշտաւ:

Ու վորպես արնաշող դրոշ,  
Ճեփ-ճերմակ վրանի զլխին.—  
Յէրկու կայծ դյութիչ և ախորժ  
Բոցկլտում են վառ զգլխիչ:

Իր յերկու այդ վրաններում,  
Վորպես բանակներ միշտ զգաստ,  
Միրազեն հույզերն են յեռում,  
Վոր գալիք գըռհն յես զգամ:

Ու վաղը պիտ յեռա վարար  
Միրո բանակների հորդան,  
Յեվ խուժե լեցվի անվարան  
Աշխարհը հզոր մայրության:

Կլինի յերգ ու հաղթանակ,  
Կյանքը պիտի վառե լույսեր,  
Յեվ ցնծան բանակ առ բանակ  
Մանկություն, մայրություն ու սեր:

Վոտքի եմ յելնում յես թեթև  
Լի սերով այդ քաղցը ու անգին,  
Հանձնվում կյանքի հարատե,  
Միշտ առաջ մղիչ հորձանքին:

Ինչպես Փաքիրն անկարեկից  
Հանդիպած կայանում ընկնի,  
Հոգնարեկ ճամբի զրկանքից՝  
Հենց սալահատակին քնի,—

Անցորդները վոտքով հրեն  
Յեվ կամ զարթեցնեն բարեմիտ,  
Նա նստի քնատ, ինքն իրեն  
Մտեղծի խնդության առիթ,—

Յեվ վերցնի հեշտ ու անխոկում  
Կուշտ ըմպե գինի և արմդ,  
Ճանապարհ ընկնի, պանդոկում  
Մոռացած ձեռնացուպ, մախաղ,

Ու ճամբին նա միայն հիշե  
Մոռացված իրերի մասին,—  
Այդպես են ահա ինձ քշել  
Յեվ հանձնել շքեղ յերազին:

Ահա խոնջ այդ Փաքիրի պես  
Բռնել եմ իմ կյանքի ուղին,  
Հուշիրն իմ սե հանձնել եմ յես  
Անցյալիս գործ մառախուղին:

Յես ամեն կայանում բերել  
Թողել եմ մի այրող արցունք,  
իմ վերջին կայանից առել  
Նոր կորով ու նոր հիացմունք:

Հիմա մեր որերի ճամբին  
Չի մնա և վոչ մի լըլած.  
Փրկության ձեռներ ջլապինդ  
Վանում են հոգնություն ու լաց:

Յեվ աղջիկն այդ սոսկ աղջիկ չեր,  
Որերի վոգին եր գուցե,  
Վոր յեկալ ինձ կյանք ներշնչել՝  
Կանացի ձայն առած ու ձեւ

Հրահրեց նա կրկին-կրկին  
Նոր ծարավ, փափագ ու կարոտ.  
Վոր սոսկումն ահեղ ընկրկի  
Յեվ զգամ մի նոր առավոտ:

Ու վորպես թափառիկ ֆաքիր,  
Սրտիս մեջ հաղար մի յերազ,  
Յես և իմ ալդ սերն արնագին  
Կանգնած ենք նոր ճամբի վրա...

Յեվ դյութված հեռավոր հեռվից  
Գնում եմ իմ ուղին յերկար,  
Ինչպես մի ուխտավոր բեղվին,  
Վոր վոտով գնում ե Մեկկա:

Թե նորից մի դորշ իրիկուն  
Մնամ մի ուղեհանգույցում,  
Հնկնիմ յես ուժասպառ, նկուն.  
Չգտնեմ վճիռ ու լուծում.

Թե կրկին յես մնամ անսեր,  
Մենակ, զաջտերում ամայի,  
Ու վրաս սավառնի բազեն  
Գիշատիչ, թեի պես մահի.

Թե նորից մաղձոտ ու վահրով  
Յես ընկած, մուգ արյուն թքեմ,  
Կհասնի մի նոր հույս վառող,  
Վոր վառի նոր արև իմ դեմ:

Կցվեմ յես նոր կարոտով,  
Կյանքը կժպտա ինձ նորից,  
Կհանձնեմ ինձ հոգով սրտով,  
Նրան, ով բոնեց իմ ձեռից:

Ով դժնի մահը չի տեսել  
Դաշտերում մենսկ, ամայի,  
Ում կյանքը ահով չի կիսել  
Արնածոր գերանդին մահի.—

Նա այնքան վառ ու վարդագույն  
Չի տեսնում գալիքի հեռուն,  
Ու մահի վայրկյանին թաքուն  
Անկարոտ, անիղձ և մեռնում:

Սակայն յես, յես, վոր որն ի բուն  
Կրում եմ բյուր տանջանք, բաղձանք,  
Արբում եմ, խորագին արբում  
Կյանքի մի վայրկյանով անցավ:

Տեսնում եմ գալիքի հեռուն  
Կյանքի արշավը դեպի նա,  
Կարոտս կյանքի պես յեռուն՝  
Մղում ե ինձ,—«գնա, գնա».

Ու նորից յելնում եմ անքուն,  
Կծկում եմ ուղին իմ յերկար.  
Մինչև մի աստղոտ իրիկուն  
Հաղթական յես մտնեմ Մեկկա:

## ԼՈՒՍԱՑԳ

Ու պոետներ, վոր չեն պղծելու  
իրենց շուրթերն անեծքով  
Պիտի յերգեն քո նոր կյանքը՝  
նոր յերգերով, նոր խոսքով...  
Հովհաննես

1

Ո՞վ առավոտ, վոր բացվում ես,  
Վիթխարաթերթ. մի ծաղկի պես,  
Ծավալում ես բույրերդ լույս  
Ու լույսերդ՝ բյուրեր սնդում՝  
Տիեզերքի մութ ափերում  
Ու մրափը կյանքի բերում:  
Ո՞վ առավոտ թեթև ու հեղտ,  
Բայց ինչպիսի անհրաժեշտ  
Ցերկունքներով ու պայքարով՝  
Խավարի դեմ, այնպես կարող  
Պոռթկում ես դու հուր լուսաթափ,  
Դու կյանք, մահի պես անխուսափ:

Գիշեր, վիթխարի մի թև  
Կախված անհուն բարձունքից.

Ու սե, սարսափի պես սե.  
Ու ծանր՝ քան մահի կսկիծ:  
Բղխած անհայտ ակունքից,  
Փռված ե ահի մի ծով,  
Խուլ ծովում հրի բյուր բիծ՝  
Կապված նվազուն գծով:  
Մութը մահի պես բարդ ե,  
Բայց գիշերվա անդունդը  
Հատակ ունի, և արդեն  
Թույլ նոսրանում ե մութը:  
Ահից հիմա սթափված  
Աչքերը թարթում են թույլ,  
Բացվում են կամաց-կամաց,  
Լայնանում, ձուլվում են ծույլ:  
Մոայլ թկը ծալվում ե  
Աննկատ, մութը մաշվում ե  
Ու հալվում, ծավալվում են  
Լույսն ու լույսի շարժումը...  
Մութը պարտվում ե անկամ  
Ու տեղի տալիս լույսին.  
Ու վորպես լույսի պատգամ՝  
Ցերկնահաս լիրան ուսից  
Նիզակներ, նետեր, տեղեր  
Ճեղքում են լազուրը հարթ,

Ու լազուր լայնը մեկեն  
Ժպտում ե զիկ ու զվարթ.,.  
— «Նահանջիր հաղթված գիշեր,  
Նահանջ, նահանջ ու նահանջ...»  
Գիշերում խեղդված ճիշեր  
Հառնում են լուսապահանջ,  
Մի համբյուր հեռվից, հեռու  
Լեռների ճակտից սահում  
Իջնում ե դաշտերը բերկրուն,  
Վոսկե վարսերը շոյում:  
Ու անտես անթիվ ձեռներ  
Հզոր մի թափով թեր  
Նետում են յերկինքն ի վեր  
Հրաշեկ գունդն արեիւ  
Նա անհուն ճամբի ծայրին  
Վառվում ե, վորպես դրոշ,  
Հետո վոգին պայքարի  
Բռնում ե ուղին վորոշ...  
Ստվերներ յերեր ու թույլ,  
Զարդված բանակի բեկոր,  
Նահանջում, ցրվում են ծույլ՝  
Զորերում անդնդախոր.  
Գնում են լուռ մեռնելու,  
Կամ լոին, արեից անտես՝

Մթին դավեր խորհելու  
Նոր գիշեր բերել հանգես...  
Իսկ արևն հաղթ, հրալանջ,  
Պայքարի հրե զըահ,  
Բարձրանում ե աննվաճ  
Կապույտ զենիթի վրա:

Մութի շքեղ պարտություն  
Լույսի դեմ: Լոռության մեջ  
Լույսը մի աչք ե արթուն,  
Վոր կարդում ե եջ առ եջ  
Մութի թերթերը մռայլ  
Հանգույցով, հարցով լեցուն,  
Ու մեկնում կյանքի վրա  
Իմաստը՝ հարցի լուծում:  
Լույսը մութի ծնունդն ե,  
Ու մահացնողն ե նրա.  
Մութը պարապ անդունդն ե,  
Լույսը լցնողն ե նրա:  
Լույսը ծնվում ե բանառում,  
Մութի մեջ ահ ու մահի,  
Ու հետո բանառը քանդում  
Պոռթկումներով ամենի:

Ո՞վ այգաբաց, լուսե սաղափ,  
 իմ նայիրին, սիրտ լուսատապ,  
 Նայիրարադ իմ կարոտին,  
 Քո աներկըռդ առավոտին  
 Ու արևին քո բոց ու բարկ  
 Վողջույն և փառք, վողջույն և փառք:  
 Խավարի մեջ հուրդ կրող,  
 Տանջանքի մեջ կամքդ կոռդ  
 Զավակներին քո արնածին,  
 Վոր փակ բախտիդ դուռը բացին,  
 Ու ցոլցլաց արեն այս բարկ,—  
 Վողջույն և փառք, վողջույն և փառք...

## ■

Առավոտի թերել վառ  
 Մաղում են ցած լուսե փոշի,  
 Ու ցնդում ե յերազը մառ,  
 Ինչպես լույսի տակ գոլորշին:  
 Կյանքը մտած արեի տակ  
 Նրա անմահ ծիծն ե ծծում,  
 Մի պահ թողած, բայց միշտ անհադ  
 Նա գլուխը վեր ե ցցում  
 Ու բառաչում այնպես անեղ,  
 Վոր ամեն մի մասնիկ զգաստ,  
 Թե կենդանի հուր ե պահել,  
 Այդ բառաչի թափը զգա.

Ահա գյուղերը գետնաթաղ՝  
Խըճիթներով խլրդաբույն,  
Քաղաքները քնաթաթախ,  
Ավանները մեր գորշագույն  
Խայթված հրով մի անխուսափ,  
Վեր են թռել գոչից ընդոստ,  
Դեղին տենդից արդեն սթափ,  
Նոր արևն են դիտում ըմբոստ:  
Ու թափվել են հողի վլա  
Հողի տակի հյուղերը թոն,  
Ու ծծում են արևը Ռա.  
Յեթե մի նոր Քսենոֆոն  
Վաղը անցնի մեր աշխարհքով,  
Ել չի տեսնի կյանքը անկամ  
Մեր հյուղերում հողերթիկով,  
Քաղաքներում նայիրական,

Դյուղը արև եր ուզում,  
Յերբ արևն արդեն առավ,  
Դլուղին գալիքն ե հուզում,  
Գյուղը ելի յե ծարավ...  
Զի ուզում սայլի ճոինչ  
Կամ ծույլ դդում' բոստանում.  
Գլուղը ուզում ե ել ինչ,  
Ինչ գալիքն ե խոստանում,

Գետերը թևեր ունեն,  
Թևերը թրի թափ են,  
Գետը հանում են հունից՝  
Նետում են նոր-նոր ափեր...  
Դաշտերը ել չեն տենդում,  
Զի իջնում ժանդ ու խորշակ,  
Դեղին յերաշտն ե ցնդում  
Զինջ, հնչուն կարկաչի տակ:  
Ցնդում ե ծարավը չոր.  
Հիմա ծարավեն պիտի,  
Յեղուկ, ձկները տոչոր,  
Ուղեփոխ, անջուր գետի:  
Դաշտերը լուսի լիճեր՝  
Գետակի ուժով վառած,  
Արտերը թող կարկաչեն  
Առվի շրթերին շարած:

Լույսերից ամենքն արբել են,  
Բայց ելի զգում են պարզ՝  
Առավոտն հուր ե բերել,  
Զվում են բյուր մեղվապարս,  
Ինչպես գնդացիրն եր մաղում  
Բզեզներ թունոտ ու չար,  
Յերբ կյանքը սև դագաղում  
Անլույս, անդոր կճչար...  
Դաշտերում, այգում, հանդում,  
Լուս ե, առավոտ, շարժում.  
Լույսը մշուշ ե քանդում,  
Արել կյանք ե բաժնում...

Ցերեկը՝ սի՞պ-լույս արտեր,  
Գիշերը՝ լուսաշող քուն.  
Իրիկուն,—բաց և ճամբեն  
Արտից ձգված մինչև տուն:

## 5

Նայիրական գորշ քաղաք,  
Մահի ճամբի սև ափին  
Արնով խեղդված աղաղակ  
Ու սևացած սարսափից.  
Կյանքից ընդմիջտ հուսախափ  
Մահին եյլը զոհացու,  
Բայց ստացավ անխուսափ  
Վերջին իզձդ գոհացում.  
Ու լուսացավ այնպես պարզ  
Քո գիշերը անկրակ,  
Հիմա արեն հրավարս  
Խինդ և մաղում քո վրա.  
Ու գոցիում և ամեն վիճ,  
Ցավը խայթում ե սակավ.  
Դու ծծում ես արեի  
Ստինքները լուսակաթ:  
Դու փռել ես սիրտդ բաց  
Առտվա դեմ հուրնուրան,  
Վոր հողմերը սրբնիքաց  
Լիզեն վերքերը նրա,  
Լեցնեն արլուն ու կրակ  
Նոր որերի հորձանքից,

Մղեն յերակ ուռ լերակ  
Նոր հուզումներ անկսկիծ,  
Պինդ ջլերով լուսալար  
Ողակվել ես դու գյուղին,  
Ու այդ գյուղը լուսավար՝  
Առանց ահ ու յերկյուղի՝  
Հողի ամրողջ բերքը հում  
Թռ ույժերն կզոհի,  
Իսկ բարիքը անհատնում  
Լինում ե հայտ կիսովին  
Նոր ե լույսդ բացվել դեռ,  
Նոր ե յեռում թափը քու,  
Ու արեդ հրաջեռ  
Սիրտդ կյանք ե ներարկում:


Զարթնել ե յերկիրն իմ հին,  
Խոշտանգված, խոցված հնում,  
Ժպտում ե բաց աշխարհին  
Ու իր նոր յերգն ե հինում,  
Առտվա չեկող լույսով  
Իր կեսորն ե նա դարբնում,  
Ու այնպես լի յե հույսով,  
Հույզ ու հրով անհատնում,  
Այնպես ամուր ե, հզոր,  
Վոր ձեռներն իր լուսամատ  
Մեկնել ե հեռվին անզոր,  
Յեղբայրներին հուսահատ...

Զարթնել և յերկիրն իմ հին,  
Խմում և լույսը բռսոր.  
Բոնել և պայծառ ուղին  
Դեպի կապտաշունչ կեսոր:

Յերկիր իմ, լույսով հեղեղուն,  
Յերկիր իմ, բերկուն ու բեղուն,  
Առ ճիշ, խնդությունս ամեն,  
Առ սիրտս զարթնումիդ ժամին.  
Առ սիրտս բողբոջ մի թերի,  
Թող խմել շողքը լույսերիդ.  
Ու յերբ գա կեսորդ հասուն,  
Թող ճեղքվի սիրտս պարտասուն,  
Բացվի, թերթ առ թերթ փովի,  
Ու նորից թող քեզ տրվի  
Այն ամբողջ խինղը հղոր,  
Վոր քեզնից ծծեցի այսոր:

1924

ԽՈՐՀԻՄԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԻՔ



## ՄԵԾ ԴՐՈՇԻ ՏԱԿ

Լ. Յ Ն Ի Ն

Քո անունը դրոշի պիս սրբազան  
Փողփողում ե, ուր տքնում կա, ուր՝ պայքար...  
Յու անունով գրոհում ե մեր աղատ  
Աշխարհն այսոր դիմի կերտվող ապագան.

Դու Մեծերի մեծագույնը, վիթխարի,  
Նոր պատմության ռահանորդ ու ռահվիրա,  
Հորիզոնից անցյալ կյանքի, պայքարի  
Շողջողում ե քո անունը մեր վրա:

Դու մեծ քանդող, վոսկե կուռքի պատուհաս,  
Հիմքից ցնցող հին աշխարհը՝ բանտ ու վիճ,  
Խալար կյանքում դու լուսեղեն պատուհան,  
Վոր կանչեցիր դժգոհներին մեծ կովի:

Հմբոստության մագնիտն ես դու, վոր ձգում,  
Ամբարում ե ատելություն, քեն ու վոխ.  
Դու հավաքած գնդեր ցըիվ ու նկուն  
Ստեղծեցիր անհաղթ բանակ մի կովող,

Հղոր ռազմիկ ու յեղակի Զորավար,  
Վերջին կովի դու մարտնչողն առաջին,  
Հողագունդն ե հիմա լինում վեր ու վար  
Քո առաջին հարվածների շառաչից:

Հոկտեմբերի վոգին, սուրը և դրոշ,  
Հոկտեմբերյան բանակների գորապետ,  
Դու վառեցիր մեծ ընդվղութն ու գրոհ,  
Ու վարեցիր միլիոնները միշտ քեզ հետ:

Մեծ կառուցող, Ճարտարապետ մեր ճարտար,  
Խորհուրդների մեծախորհուրդ Գլխավոր,  
Նոր աշխարհի կերտման բանվոր և հանճար,  
Մարմնացնում ես, մարմնանում ես ամեն որ:

Իմացության, իմաստության վեհ գաղաթ՝  
Վեր ծառացած կյանքի խորքից, ընդեղքից,  
Դու անցյալից տեսար Այսորն, Ապագան,  
Ու հասնելու տվիր մեզ սուր, ուղեգիծ:

Քո անունն ե Առելություն ու Վրեժ,  
Քո անունն ե Ըմբոստություն, Ապստամբ.  
Հին աշխարհը, վոսկեղլուխ մի հրեշ  
Ընկրկեցավ քո պողպատե խստությամբ:

Քո անունը սիրո անուն մեծանիշ  
Թևածում ե յերկրե յերկիր, սրտե սիրտ.  
Նոր դարերում չկա, չկա մի ուրիշ,  
Վոր գալիքում քո չափ սիրվի և հուզի:

Յ Ե Զ Ա Կ Ի Ց Ե Ր Գ

Սոր մարդկության ծննդյան ճիշն առաջին յեղար  
դու, Հոկտեմբերյան մեծ վորոտ, վոր ծայր առար մեր  
յերկըռում՝  
Ծավալվեցիր, փռվեցիր, մտար ամեն սիրա ու տուն,  
Բորբոքեցիր կռվի սեր, ատելություն ու բերկըռում։  
Դու յեղար մեծ զարթոնքի ահազանգն այն ալեկոծ,  
Քայլերգն յեղար մեծ կռվի, տարար դեպի հաղթու-  
թյուն,  
Դու հաղթության հիմն յեղար բանակներին բազմա-  
հոծ,  
Նոր աչխարհի ստեղծման մեծ մարտակոչն յեղար դու։  
Դու յեղար այն յերգը մեծ, վոր յերբեք մարդկության  
Վեհ հանձարն ե ստեղծել իր տքնությամբ դարավոր։  
Բաղխումների, ձայների հակասական բարդության  
Ամբողջություն ներդաշնակ, շքեղարվեստ, փառավոր։

Դու ակունքն ես առաջին ամեն յերգի, արվեստի,  
Վոր կերտում ե մարդը նոր, վոգին ազատ, դյուրդզա.  
Դու հարազատ, մայրենի յերգ կլինես վերատին  
Այն աշխարհի մարդկության, վոր դեռ հետո պիտի  
գա:

Հին աշխարհին դու դարձար մահազանգ ու վերջին  
լող.  
Նոր աշխարհի ծննդյան ճիշը յեղար դու հպարտ.  
Դու մեծ կերտման հիմն յեղար, հոկտեմբերյան մեծ  
վորոտ,  
Ուսորի յերգ կլինես, քանի կյանքում ծնվի մարդ:

1988

ՆԵՐՈՂ ՆՈՅՆՄԲԵՐՑԱՆ ԱՌԱՎՈՏԻՆ

Առյեմբերյան ցուըտ գիշեր, դու գարնան պես  
լուսացաբ-

Դրոշների վարդերով բերիր գարնան բույր և գույն-  
Տառապանքի գիշերը, վոր տեսում եր դարեղար,  
Հնամենի մեր յերկրից քաշվեց պարտված և նկուն:

Ո՞, վորպիսի ծիլերով մեր յերկիրը կանաչեց...  
Հողն արյունով հագեցած իր արդանդում այնքան

սերմ

Ու սեր սնեց կենսունակ՝ իր որերում դառնահեծ,  
Նոյեմբերյան գարունը մինչև յեկավ ջերմաջերմ:

ՅԵՐԸ սերմեցին, ով սերմեց իր փրկարար ձեռներով  
Տառապալից մեր կյանքում սերմը այդ մեծ խնդության.  
Փառք այն ոյժին, վոր հողը ջերմացըեց վառ իր

հրով,

Փառք այն անմահ սերնդին, վոր յեղավ մեծ սերմնա-  
ցան:

ԵՇ անպառող տքնության հնամենի մեր յերկիր,  
Տերն ես արդեն սրբազան աշխատանքիդ բեղմնավոր.  
Փառք այն ուժին, վոր սնեց ցնծությունը քո բերքի,  
Փառք այն հղոր սերնդին, վոր մշակողն ե այսոր:

Մերն ե հիմա ամեն ինչ, վոր կա մեր նոր աշխարհ  
հում.

Մերն ե բերքը բեղմնավոր մտքի, սրտի և հացի.  
Փառք այն ուժին, վոր անխոնջ յեռանդ ե մեզ ներ-  
արկում,  
Փառք այն պայծառ սերնդին, վոր պատրաստվում ե  
հնձի,

Բազմարեղուն մեր բերքի ամեն հատիկ, ամեն հունդ  
Սերմ ե գալիք դարերի յերջանկության մշտատե.  
Փառք քեզ վաղվա շողշողուն ազատածին մեր սերունդ,  
Փառք քեզ գալիք որերի յերջանկության վառ արե... .

Եջ առաջին՝ մեր յերկրի նոր պատմության, հին  
հողի,  
Դուռ յերջանիկ փրկության՝ դեպի գալիքն անհառաչ,  
Նոյեմբերյան առավոտ, փառք արդ եղը գրողին,  
Փառք նրան, ով դուռը մեծ լայն բաց արեց մեր  
առաջ՝

Իռապեն անգամ մեր կյանքի այս հարատես ստեղծման  
Քեզանից ե ուժ առնում ու մեզ մղում նոր կովի.  
Փառք այն գրչին, Նոյեմբեր, վորով վեպդ սրբազն  
Սերունդների համար նոր, վորպես ավանդ, պիտ  
գրվի:

ԵԱՀՈՒՄՑԱՆԻ ԱՐՁԱՆԻՆ

Վորքան ել վոր հանճարեղ  
Լիներ վարպետը այն մեծ,  
Վոր քեզ համար այս քարե  
Հուզարձանը քանդակեց,  
Արձանացնել չեր կարող  
Միշտ ապստամբ քո վոգին,  
Կամքդ՝ կռվի մեզ վարող՝  
Ու հայացքդ կաթոգին:

Մըրիկների համար մեծ  
Ստեղծված վոգին պայքարող  
Արձանանալ քարի մեջ՝  
Յերբեք, յերբեք չի կարող,—  
Շարժման մեջ ե նա հավերժ,  
Նոր գնդեր ե միշտ կռում,  
Վոր թշնամին դահավիժ  
Պարտված մնա միշտ կռում:

Մեր թշնամին, ո՛, յերբեք քեզ՝  
Ընկերներիդ հետ հերոս՝

Ավագներում արևկեզ  
Խողխողում եր բարբարոս,—  
Նույնիսկ, նույնիսկ ալդ պահին  
Մատնվում եր պարտության.  
Ու պարզված եր աշխարհին  
Դըոչը մեր հաղթության:

Դու չկայիր, — վոգիդ կար,  
Սավառնում եր նա կյանքում,  
Ու մնում եր դեկավար՝  
Բանվորական մեծ Բագուն  
Յերբ բարձրացրեց նորից վեր  
Մեր դըոչը սրբազն,  
Վոր այնուհետ փողփողեր  
Կյանքի վրա անսասան:

Դու չկայիր, մեր անահ  
Բանակների զորավար,  
Բայց քո կամքը լենինյան  
Զորավար եր մեզ համար,—  
Կասպից ծովից մինչ Աև ծով  
Ու կազբեկից Արագած,  
Յերբ Կովկասը զնդոցով  
Ապրում եր վեհ այգարաց:

Դու չկայիր, բայց վոգիդ  
Մնաց հյուսված անբաժան  
Այս մեծազոր դաշինքին,  
Միացումին սրբազան,  
Վոր հողը մեր հայրենի  
Մեծ Միության հետ կապեց,  
Ու հին յերկրում արյունի  
Մեր հայրենիքն լեղավ մեծ:

Զկաս, չկաս... Բայց այսոր  
Մեր աշխարհի սանձակոծ՝  
Սլացքի մեջ գերազոր,  
Կառուցման մեջ ստեղծագործ,  
Վոգեփոխման հիասքանչ  
Այս կռվի մեջ սիրտդ կա,  
Վոր մզում ե մեզ առաջ  
Միշտ դեպի մեծ ապագան:

Վաչ, վորքան ել հանճարեղ  
Լիներ վարպետը այն մեծ,  
Վոր քեզ համար այս քարե  
Հուշարձանը քանդակեց,  
Չեր կարող, մեծ Շահումյան,  
Բանդել վոգիդ այս քարում.  
Նա հեգնելով ահ ու մահ,  
Դեռ կռվի յե մեզ վարում:

1985

**Արագաքայլ մոտենում և գալիքն արդեն.**  
**Կառուցվում և որ ըստ որե ձեռքերով մեր,**  
**Ճամբին ինչքան սպառնալի խութեր բարդվեն,**  
**Յեկ աղմկեն ու շառաչեն ինչքան հողմեր։**

**Հոկտեմբերյան մի առավոտ սուրբ խնդությամբ,**  
**Կործանումով և արյունով հիմքը դրինք.**  
**Թմբուկ յեղալ մեր առամբերի պայթյունը բամբ,**  
**Յեկ մահասփյուռ հրացանները՝ ահեղ սրինգ։**

**Դարերում դեռ վոչ մի ռաղմերգ, վոչ մի նվազ**  
**Չի վողողել այնպես բախտով կյանքը ցալու,**  
**Ինչպես յերգը ալդ աներկրորդ, արյունլվա,**  
**Վոր վորոտաց հոկտեմբերյան մի առավոտ...**

**Ո՞ւր և արդյոք հրացանն այն անտիք, անգին,**  
**Վոր առաջինն ինքը մեր մեծ յերգը սուլեց.**  
**Յեկ վժը տեղ և վերքն առաջին այն գնդակի**  
**Յեկ ստեղծման մեր առաջին քայլը ուր և։**

**Ո՞վ քանդումի և ստեղծման առաջին քայլ**  
**Նոր դարերի բախտը նշող կարմիր կրակ,**  
**Թող առաջին յերգդ ահեղ և արնափալլ**  
**Բոցավառվի վողջ աշխարհի յերկնի վրա։**

## ՅԵՐԵՔ ՔԱԽՑԱԿ ՏԱՐԻՆԵՐ

Յերեք քառյակ տարիներ հնամենի մեր յերկրում  
Բազմալեզու զնդոցով, հաղար ոիթմով ու

Զընդում և անընդմեջ, բորբոքվում և ու ըեր  
հանգով

Հոկտեմբերյան մեծ յերգը նոյեմբերյան յերան-  
գով:

Բազմադարյան մեր յերկրի անտառն ավեր,  
հողմահար՝

Քո ջերմ շնչով կենսատու իր նոր կլանքը  
Ծնձյուղեց.

Մեր նոր, գալիք յերգերի միակ ակունք միշտ  
վարար՝

Ինչքան հեռու՝ քո յերգը այնքան զնդուն,  
այնքան մեծ:

Նոյեմբերյան առավնոտ, հուշաշարդ՝ վորպես լար  
Այսոր յետ և քաղում իմ հոգին, հպում աղեղիդ,  
Վոր իմ յերգը, վորպես նետ, ուղղաթոիչ,

անգալար  
Նոր ավյունով և թափով առաջ թաշի իր տեղից:

ԿԱՐՄԻՐ ԺԴԻՏԸ

Հոկտեմբերյան ուրերի արյան պես, վոր ծերացած  
Հին աշխարհին նոր կյանքի առավոտը հոչակեց,  
Դուրս են հորդում այս տոնին, Հոկտեմբերյան  
տարեղարձ,  
Դրոշները փողփողուն, կարմիր-կարմիր լաշակներ,

Լաշակների ծակքերում, կարմիր-կարմիր գրքի պես,  
Պայքարների մեծ վիպը վերապրում եւ և հուզում.  
Քամին եջերն եւ թերթում ու կարդում եմ հիմա յիս  
Նոր աշխարհին հաղթանակ, հին աշխարհին փլուզում:

Հոկտեմբերյան քանդումի կամքը այսոր խտացած  
Ստեղծագործ կամքի մեջ՝ նոր աշխարհն եւ կառուցում-  
Ու լենինյան բանտկլի հատվածները համընթաց  
Ավետում են աշխարհին նոր հաղթանակ ու ցնցում:

Ու թվում ե ինձ, ահա՝ լաշակների փողփողուն  
Այս հորձանքը խնդության, հաղթանակի ժայռուն ե,  
Վոր մեր կյանքի հոյակապ պայծառ դեմքն ե վողու-  
ղում,  
Նոր աշխարհի դարպասից յերբ արդեն ներս ենք  
մտել:

Ա. Ի. Ա. Վ. Ո. Տ

Բացվում ես, առավհատ, սիրելի աչքի պես,  
Յեվ այնքան ցնծություն կա այդ թարմ հայացքում,  
կան հույզեր խլատուն, կամքեր կան դիմացկուն,  
կրքեր կան մաքառող, խոհեր կան հեռատես:

Տեսնում եմ, առավհատ, հայելումդ արեջող  
Մի ամբողջ աշխարհի կերտումը—նոր աշխարհք.  
Բարձունքներ կան հսկա, սլացիկ, վորպես փառք,  
Ծավալներ աներիզ, թռիչքներ սանձաթող:

Ցելնում ե, առավհափ, նոր մարդը պայքարով,  
Կերտում ե բարձունքներ և ինքը բարձրանում.  
Մարդը Մարդ ե արդեն, հերոս ե բարձրանուն,  
Հոգին իր խոյանք ե և կամքը՝ մաքառող:

Բացվում ես, առավհատ, սիրելու աչքի պես,  
Մարտու ու սեր և իղձեր կան քո թարմ հայացքում,  
Իղձերը ծաղկում են, սերերը հիացնում,  
Մարտերը վճռում են ու դու խոր ժպտում ես:

## ՅԵՐԳԵՐ ԱՌԱՎՈՏՅԱՆ

### 1. Ամերիկա

Կանչում են ամեն առավոտ,  
Աքլորները կանչում են դիլ.  
Այդ յերգ չե դյութիչ, փառավոր,  
Կոչ ել լաց աղեխարշ, կիզիչ:

Բայց թնդում ե այդ պարզ կանչից  
Իմ սիրտը ցնծությամբ մի վիս...  
Ի՞նչ ընազդ վեճիմաստ ու ջինջ,  
Վոր լուսայդ ե ավետում մեզ:

Ել ի՞նչ յերգ այդքան փառավոր  
Ցեվ վեհ իմաստ ունի հուզիչ...  
Կանչում են ամեն առավոտ,  
Աքլորները հպարտ ու դիլ

1927

Տ. Ա. Ր Ե Վ Բ

Յելնում ես վառ ու կայտառ,  
Զարթոնքի լրաբեր, դաւ,  
Աքլոր իմ կարմրակատար,  
Արև իմ վոսկեփետուր:

Թևերդ և թափահարում,  
Կտուցդ պարզած վստահ՝  
Թողնում ես առու առու  
Հույսերիդ յերգը հստակ:

Թո յերգերը խուրձե խուրձ,  
Վորպես՝ լուսեթել կծիկ,  
Մեր կյանքը նօրակառույց  
Կապում են յերգող կտցիդ:

1927

### Յ. Առավոս

Յերկրում իմ առավոտ ե,  
Զարթնել են գյուղ ու քաղաք...  
Դեռ սրտիս վորքան մոտ ե  
Քո յերգը, ով աքաղաղ.

Թեև յերակե յերակ  
Զգում եմ՝ աշխուժ մի այլ  
Շրջում ե յերկրիս վրա  
Հաստատ ու յերկաթափայլ —

Նա յե մեզ հանում վոտի,  
Նա յե պայքարի կանչում, —  
Բայց քո կանչն առավոտի  
Զնգում ե իմ ականջում:

1927

Ա. Գալուստ

Ճչակները այնքան թովիչ  
Սուլում են զիլ ու շոգեշունչ,  
Աքաղաղներ յերկաթավիզ՝  
Առավոտյան վոսկեփոշում։  
  
Հաղթանակի յերդ վոսկեթի,  
Ստեղծումի հզոր ձգտում. —  
Ահա ինչ են մեզ ավետում  
Կոկորդները այդ յերկաթե։  
  
Նրանց կանչից յելնում ե վեր  
Մեր աշխարհը յերկաթ հազած.  
Յեվ գալիս ե հանդարտ ու վեճ  
Մեր ապագան։

1927

## ՊԱՌԱՎԻ ԼԱՑԸ

Լալիս ե պառավ մի, ճչում, թքում ե.  
Քանդում են այնտեղ խարխուլ մի տուն,  
Հզոր, մի զինարար ձեռք արթուկում ե  
Փողոցները ծուռ, տներն անդուր:

Վոչինչ չի դիմանում, փուլում, ծալվում ե  
Ընթացքի տակ այդ ծանր հսկայի.  
Այդ նորն ե, վոր գալիս ու ծավալվում ե  
Ու ծալում, հարթում ե ինչ կա հին:

Այդ մենք ենք, մենք, այդ ե դարերի ուժը,  
Վոր արյուններից ահա հարլավ,  
Ամեն ինչ գծված ե ու կանխորոշ ե,  
Վոչինչ չես կարող անել, պառավ:

Քանդլած ե արդեն խարխուլ այն տան  
ծածկը,  
Հիմա քանդում են հիմքը պատի,  
Դեռ չես հասկացել դու՝ այդ ինչ ընթացք ե,  
Ու յերբեք չես հասկանա, տատի:

Լալիս ե պառավը, անզոր թքում ե  
թանդում են դեմք՝ ինչ կա խարխուկ.  
Մի շինարար ձեռք ամուր արթուկում ե  
Տներն անկարդ, փողոցները խուլ:

1928

ՅԵՐԿՈՒ ԱՐԵՎ.

**Յ**երկարում ելին ստվերները գորշ,  
Ստվերներ ծառի, քարի ու ժայռի.  
Նախ լցնում եյին բյուր խոռոջ ու խորչ  
Ցեղ ապա ձորը ահասիկ, վայրին

Խտանում երսև խավարն անթափանց,  
Ու խավարակուլ այդ վայրի ձորում  
Անտառներ, ժայռեր, լեռներ վեհապանծ  
Մեղմվում ելին խիտ և իրար ձուլվում:

**Ծ**անր խավարի անլուր սարսափից  
Գետն եր գալարվում, զոռում մռնչում,  
Ու գետը ճնշող այս ու այն ափից  
Ժայռատամ չարքերն եյին քրքջում:

**Լ**ուսնի դաշույններն իջնում եյին ցած,  
Ստու փայլով ցոլում ջրերի վրա.  
Ալքերը նրանց շողքից վախեցած՝  
Թավալվում ելին խառնվում իրար:

**Ա**ստղերը վախկոտ թռչնիկների պես  
Կծկվում ելին լուր ծառերի վրա...

Անտառի յեղբին, կայծոռիկ ասես,  
Մարմրում եյին ճրագ ու կըակ...

Ծանր խավարից գետն եր մռնչում,  
Սոսկումից ծառելն եյին խշրտում,  
Գաղանն ուտում եր մի փռքրիկ թռչուն,  
Յեվ այդպիս մարդն եր մարդուն հողոտում,

\* \* \*

Սպասում եյին ահով ու դողով,  
Վոր առավոտյան արևը շողա՝  
Լույսի սրերով, սրերի շողով,  
Յեվ մութը դեպի այրելը սողա:

Արեն յելնում եր սեպ լեռան ուսից,  
Նրա ջերմությամբ ձորն եր ծիծաղում,  
Ու ժպտում եյին ծառելն այդ լույսին  
Յեվ կանաչ զողեր եյին ցնցուղում:

Անտառի կողքին մարդը ծվարած  
Անմասն եր մնում ժպտին ծառերի.  
Այդ հին արեից անհույս շվարած  
Ակնկալում եր ուրիշ արեի...

\* \* \*

Մեր այդ արևը վոչ թե վերեկից՝  
Չորերից յելավ, խորերից լելավ  
Ու վողջագուրեց վերին արևին  
Նրա պես պայծառ թևերով իր լայն:

Մեր բազուկներով նա քամվեց ջրից,  
Չուրը դարձավ լույս, կենդանի կրակ.  
Յերկաթ վոտներով բարձրացավ ձորից,  
Վառվեց մեր զարթնած աշխարհի վրա:  
  
Վառվեց արտի մեջ, վառվեց մարդու մեջ.  
Արյան պես հոսեց յերկրի յերակով.  
Կյանքն ե տաքանում և աճում անվերջ  
Մեր այդ ձեռակերտ նոր արեգակով:

\* \* \*

Լույսերն են խոսում, լույսերն են հոսում  
Լույսերն են վառում կռվի կիրք ու սեր,  
Լույսերը կյանքի նոր յերգն են հյուսում,  
Լույսերն աշխարհն են յերկուսի կիսել:

Մեր լույսը յելավ մկանից, կամքից,  
Մեր լույսը ջրից յելավ շառաչյուն,  
Մեր լույսը վառվեց ջերմությամբ կյանքի.  
Մեր լույսին վողջույն, մեր լույսին վողջույն,

## Լ Ա Խ Ս Ա Տ Ո Ւ

Տոն ե այսոր, լույսի տոն,—խորհրդային ցնծություն  
կերտում ենք մեծ լուսատուն, խորհրդային ցնծու-  
թյուն։

Գալիս ե մի հուր հրաշք՝ կերտված կամքով ու բազկով՝  
Մեզ բորբոսից ազատող,—խորհրդային ցնծություն։

Բարձրանում ե մեր կյանքում անջնջելի մի սահման  
Հինն ու Նորը խոր զատող,—խորհրդային ցնծություն։

Խլրտում ե ամեն սիրտ, ամեն հյուղակ, ամեն գյուղ,  
Ցերկիրն ամբողջ լուսաթով,—խորհրդային ցնծու-  
թյուն։

Վաղը վերջին խրճիթում ճպռոտ լամպն ե ջարդվելու,  
Քո լույսերն յերբ վառես դու,—խորհրդային ցնծու-  
թյուն։

Ու վարակող ժպիտով, յերգի նման սրտազեղ, Յ  
Լույսը կանցնի տնից տուն,—խորհրդային ցնծու-  
թյուն։

Դործարանում նորաշեն անիմսերը ծանրադարձ  
կաջխուժանան մշտարթուն, խորհրդային ցնծություն:  
Կարագանա կյանքի չուն, կարագանա կյանքի չուն,  
Նոր թափ կառնե զզրդուն,—խորհրդային ցնծություն:  
Դեպի, դեպի կոմունիզմ վաղքի յելած մեր յերկիր,  
Ոլանում հս ահա դու, խորհրդային ցնծություն:  
Այսոր տոն ե, լուսատոն. մեր յերկիրը լուսաթու  
իերտում ե մեծ լուսատուն,—խորհրդային ցնծություն:

1927

Խաղաղություն, խաղաղություն խորին  
Այս գիշերում, աշխատանքից հետո.  
Ու անցնում են շարան-շարան նորից  
Խոհեր, մտքեր, հույզեր ու սեր հերթով:

Ցեվ լսում եմ այս խոր լոռության մեջ  
Մի հեռավոր յերգի անուշ կարկաչ...  
Հույզերի մի հանդարտ, լուռ յելեեջ,  
Ապրումների պահեր՝ խոր, անհառաչ:

Մազիկներով ելեկտրական լամպի՝  
Կարկաչում են առվակները սարի.  
Կարկաչը լույս, լույս և դարձել անրիծ,  
Ո՞վ և լույսը՝ յերգ, յերգն արել լույս բարի:

Աշխատանքը, մարդը, մարդն և քամիչ,—  
Քամում և տարերքը՝ քար, ջուր և հող.  
Նա սանձում և ջուրը, քարը, քամին,—  
Աշխատանքին, կերտող մարդուն՝ ներբռող:

Ահա, ահա լամպը՝ բռունցքի պես,  
Այդ բռունցքում ճղմըվում և, քամվում  
Տարերային ուժը՝ ջուրը, ջրվեժ,—  
Ու նրանից լույս և, լույս և հանվում...

Գիշերվա հանգստի այս իսկ պահին  
Ցես լսում եմ յերգեր վառ, չմարող.  
Մռնչում են, բաղխվում ուժեր տարերային,  
Մարտնչում և մարդը միշտ պայքարող:

## Ս Ր Կ Ա Հ Ա Ր Ը

Դանդիպում եմ դեռ նրան, սրնգահար այն  
կույրին,  
Վոր Շահումյան փողոցում, հենված փլչող մի  
պատի,  
Շուրթերն հանձնած սրբնակի մեղրածորանն համ-  
բույրին,  
Իր յերգերն և կաթեցնում ախորժալուր, հանդար-  
տիկ:

Մրինգը ինձ թվում ե մի լեռնային ջինջ առվակ,  
Ու հոսում ե նրանից կույրի յերգը, վորպես ջուր,  
Մերթ ճշում ե այդ յերգը՝ սահանքներից ուժ  
առած,  
Մերթ մրմնջում տիրածայն, մնրթ ել ուրախ  
խոխոջում:

Վորքան, վորքմն հեռու յե, միայն աչքերդ  
փակած  
Դու կարող ես նշմարել ակը, ակը այդ յերգի.  
Թայց յերգողը, սրինգը, սրնգի յերգն ահա կան,  
Մայթի վըս տեսնում ես և լսում այդ յերեքին:

Թեղ ոտար և թվում այդ, խորթ և հնչում

ականջիդ

Այդ հովվական սըընդի շունչը տխուր նվագուն,  
Ունկընդիր ես որերի դղբդացող շառաչին,  
Բայց ինչ վոր բան այդ յերգից հարազատ ե քո  
հոգուն:

Մեռնում ե նա, այդ յերգը, այդ սրինդը հով-  
վական,

Բայց զգմում ես, զգմում ես, վոր քո հոգում ել  
նույնպես

Մեռնում ե մի տխուր բան, փոխվում ե մի ինչ  
վոր բան,

Դու ապրում ես, բայց վաղը չես ճանաչի ել դու  
քեզ:

Այդ մահի մեջ հնչում ե մի անսահման ցնծություն,  
Ինչպես հատիկն ե մեռնում, մեռնելիս ծիլ արձակած,  
Ծիլը կանաչ խնդության, վոր ծաղկում ե հազար գույն  
Ցել ծիծաղում, ասես թե՝ մահի վրա չե ծաղկած:

Ո, ցնծացեք, ցնծացեք, մայթեր քանդվող, կառուցվող—  
Ցնծա, սրբնդ, վոր հիմա տխուր քո յերգն ե մեռնում,  
Ցնծա քաղաք՝ մահի դեմ, ցնծա յերկիր, ցնծա հաղ,  
Սրտեր, սրտեր՝ ցնծացեք, ցնծության յերգն ե յելնում:

## Ս Ե Վ Ա Ն

ԵՌ, բազմած ես դու վերը՝  
Մեր լեռների ծոցում լուրթ,  
Դու նման ես մի թասի  
Գինով լեցուն և բարձըր,  
Վոր մեր յերկըրի լեռները  
Բարձրացըրել են՝ խմելու  
Ճերմակափառ Մասիսի  
Հավերժական կենացը,

ԵՌ, բազմած ես դու վերը,  
Անմահական ջրի պես  
Յեվ առաջդ պինդ փակած,—  
Ինչպես կասեր հեքիաթը,—  
Մեր աշխարհի արտերը  
Ցեղագել են դարեր քեզ,  
Ու խամրել են պապակած  
Նրանց և՛ հասկն, և՛ վարդը.

ԵՌ, բազմած ես դու վերը,  
Պահած ծոցում քո անմար  
Բախտը՝ լույս ու խնդություն,  
Յեվ այդ բախտը անգութ եր:

Մեր աշխարհի վոտները  
Անշարժ ելին, վորպես քար,  
Լույս չկար մեր խրճիթում,  
Գյուղելը տնզոր և մութ եր...

Ե՞լ, բազմած ես դու վերը՝  
Լեռների մեջ մեր մշուշ...  
Այդպես մնալ չե լինի,  
Պիտի գաս ցած, ել բարձր,  
Վոր լույս առնեն հյուղերը,  
Վոր անիլներն առնեն ուժ,  
Արտերն ըմպեն քո գինին  
Մեր նոր կյանքի կենացը:

1984

Փ Ա Ղ Ո Յ Ը

Յես անցնում եմ ամեն որ նույն փողոցով,  
Վողջունում են յերկարք ծառերն ամեն որ.  
Իմ ականջին առավոտյան խշոցով  
Հաղարաձայն յերգում են պարզ յերգ մի նոր.

Այս փողոցը, վորից ամեն, ամեն որ.  
Յես անցնում եմ առույտ քայլով, սրտաբաց,  
Նմանվում եր մի քերանի ալեոր՝  
Ատամները սև ու խարխուլ և թափած,

Անցքեր դեռ կան, վորից ատամն և ընկած,  
Մնացել են չենքից միայն սև հետքեր,  
Կան տնակներ կիսաքանդ ու ծուռ կըքած,  
Ատամի պես, ատամի պես վօրդնկեր:

Բայց տհանում եմ հիմա, սրտի բարախով,  
Բարձրանում են մաքուր, վոսկի ատամներ,  
Ու բացվում են ժպտով, վորպես ուրախ որ,  
Պատռհաններ նոր՝ փողոցի վրա մեր:

Ու հիմա յերբ անցնում եմ այս փողոցով,  
Մեր ծառերն իսկ, մեր ծառերն իսկ յերգում են  
Մեծ կառուցման յերգը կայտառ խշոցով,  
Վոր փախում ե անծայրածիր յերկրում մեր:

1981

## Լ Ո Ւ Ո Ւ Չ Ո Ր Ը

Այն Լոռու ձորն ե...  
Հովհաննեանց ան

Այս Լոռու ձորն ե... վոր այնպիս սիրով  
Յերգել ե մի որ մեծ պոետը մեր.  
Դեռ, թվում ե թե, նրա հույզերով  
Լի յեն այս ձորի այրերն ու ծերպեր...  
Բայց դա մի պահ ե, վոր բանաստեղծի  
Դյութիչ յերգերի պատրանքին հլու՝  
Թոշում ե հոգիդ անսանձ, սլացիկ՝  
Դեպի այն, ինչ վոր ել յետ չի գալու:  
Ո՞ւր են անուններն սիրած պոետի,  
Ո՞ւր ե այն կյանքը ժպտախառ լացով,  
Ո՞ւր են այրերի չարքերը հըտպիտ,  
Սաքոյի գոմը՝ լի նենդ կանանցով...  
Ծնդել են նրանք, մշուշում սահել,  
Մնացել են լոկ այս ձորը, ժայռեր,  
Փրփրած Դեղ-Բեղի գոշումը ահեղ  
Յեկ բանաստեղծի յերգերը անմեռ:

Այս Լոռու ձորն ե... ջրի յեղերքով  
Քալարգում են զույգ յերկաթե գծեր՝

Նետված հյուսիսից մի ծանր ձեռքով,  
Վոր այս աշխարհի գանձերը հնձեն։  
Բռնության ուժն և այս ուղին ձեւ,  
Վորի վրայով Մոլոխը ոռւսի  
Պիտի արշավեր դեպի Արևելք՝  
Նստելու նրա մտրակված ուսին։  
Հենց այս յերկաթի շաչ ու շառաչից  
Թփաց՝ պիտի վառվի այս յերկրում մի չահ...  
Բայց փոխվեց հույսը անհույս հառաջի,  
Վոսկու լծի տակ գյուղերը իջան...  
Հիմա այս գծով հոսում և մի այլ  
Նորոգված կյանքի արյունը ըռսոր...  
Վողջույն քեզ, գալիք, պայծառ, հրափայլ,  
Վողջույն՝ ապագան կառուցող այսոր։

Այս Լոռու ձորն ե... ժայռերն ահագին,  
Վորպես հսկաներ՝ վոտները ձորում,  
Պահում են իրենց անխոնջ քամակին  
Լեռներին կըռթնած գյուղերը լոռու։  
Հենց այս ժայռերից, տարիներ առաջ,  
Ժայռերի վրա թառած գյուղացին  
Քարերով ձորի այս ճամբան առավ,  
Առավ ու կապեց մեծ, կարմիր գծին։  
Այդ որից հետո հորդեց այս ձորով  
Վերջին կոփվը աշխատող մարդու,  
Հորդեց մեծ կամքը այս զույգ գծերով,  
Վոր հին աշխարհի հիմքերն ե քանդում։

Այս զույգ գծերը գնում են, հասնում  
Հին Արևելքի դռան, ուր հողի  
Յեվ մուրճի մարդը դիզում ե ցասում՝  
Մի նոր աշխարհի պութկումով հղիւ

Այս լոռու ձորն ե... այստեղ պղինձն է,  
Պղինձը՝ ձուլված հողին և քարին,  
Պղնձի համար մեր կամքը թըրծել,  
Յելել ենք ահա կրկին պայքարիւ  
Քանդում ենք ահա արդանդը հողի,  
Վոր թագցրել ե գանձերն իր հլու,  
Խլում ենք, քամում պղինձը դեղին՝  
Նոր աշխարհ, նոր կյանք վերածուլելու,  
Ահա յելնում ե ծուխը կաթնագույն,  
Չուլվում ամպերին՝ կալվարի վրա.  
Հալվում ե քարը, կրակ ե թքում,  
Մընվում պղինձը՝ հեղուկ և կրակ,  
Քանդում ենք, չկա հանգիստ և անդորր,  
Կյանքին տրվում ե նոր իմաստ ու ձև,  
Դեռ լերբեք, լերբեք այդպիսի խանդով  
Մարդը չի քանդել և չի կառուցել

Այս լոռու ձորն ե... գետը սըրընթաց  
Նոր մարդու կամքով պիտի կանգնի մի պահ,  
Ուսի, գալարվի, մի նոր հուն գտած՝  
Հենց ժայռի միջով հոսելու ապաւ  
Մարի արգանդում վոլորվելով նա,  
Թունելի վողորկ կողերին բախվի,

Հսկա ոձի պես դուրս պիտի սողա՝  
Մի ուրիշ ժայռի շրթունքից կախվի:  
Խողովակներով սեղմված ամուր  
Խոյանա պիտի կրկին դեպի վար,  
Մինչև հին հունին հասնի շեշտասույր,  
Նրանից արդեն կլինեն քամված  
(Ստեղծող մարդու ձեռքերով հզոր)  
Անսպառ ուժեր և լույսեր դվարթ.  
Այստեղ մեր ձեռքով կանգնում ե այսոր.  
Զորագետի մեծ կայանը հպարտ:

Այս Լոռու ձորն ե... ուր Զորագետի  
Մեծ ամբարտակն ե, այս ժայռի վրա,  
Մեծ մարտնչողի և առաջնորդի  
Հըսկա արձանը պիտի բարձրանա:  
Պիտի բարձրանա Լենինը, նա, վոր  
Հեղափոխության մեր հանճարն ե մեծ՝  
Պողպատե կամքով, վոր միլիոնավոր  
Մարտնչողների ուժերը խմբեց  
Յեվ հոկտեմբերյան կարմիր որերին  
Տվեց բախտորոշ, վճռական գրահ,  
Հին կյանքը մատնեց կործանման հրին,  
Վոր նորը ծընվի այդ կարմիր, հրով:  
Պիտի բարձրանա արձանը, վորպես  
Պայքարի դրոշ, վորպես հաղթանակ,  
Վոր նրա կոչով նորեր գան հանդես,  
Յեվ կյանքն իր տնհայտ գանձերը բանա:

Այս կոռու ձորն ե... շուտով այս ձորում  
Անիվներ, փոկեր պիտի դըղըրդան,  
Հուժկու, հոյսկապ այդ նոր ժխորում՝  
Փոխվի պատկերը վայրի բնության։  
Ավելի շքեղ, չըքնաղ, գեղանի  
Պիտի փայլվի զմբուխտն անտառի,  
Ցերբ «Զորագեսը» հաղարաչքանի  
Այստեղ յերկրային աստղերը վառի։  
Ժաւաները կախված անդունդի վրա՝  
Չեն լինի մոայլ չարքի ոթևան,  
Լուսով վողողված ջրում գիշերվա,  
Ցերբ նրանց խորհող գլուխն յերևա։  
Վողջույն քեզ մարդու, նոր մարդու կոխվ,  
Բնությունը փոխող, նոր իմաստ ծընող, —  
Դու լրացնում ես բնության թերին  
Մարդու հոյակապ ստեղծագործումով։

Այս կոռու ձորն ե... քայլով տիտանի  
Սյուները ձորից բարձրանում են վեր,  
Հասնում տներին այն գյուղաստանի,  
Վոր սեգ լեռների լանջին ե հենվել։  
Շուտով, ո, շուտով պիտի սյունե սյուն  
Բարձրանան ձորից առուներ լույսի,  
Անցնեն գյուղեղյուղ, անցնեն տնետուն,  
Խնդությամբ լցնեն ամեն տուն ու սիրտ  
Նա, վոր թշնամուց քարե կարկուտով՝  
Այս ձորը խլեց՝ զարկով մահացու,  
Այդ ձորից, ահա, կըստանեա շուտով

Իր զարկի շանթը, լույսը՝ հատուցում:  
Կըստանա լույսը, ուժը կըստանա,  
Վոր խոր ակոսի հին գյուղերն այս մառ,  
Վոր այս կոխվը լարվի, խստանա,  
Վերջին թշնամին վերանա խպառ:

Այս կոռու ձորն ե... մեր աչքի առաջ  
Փոխվում են նրա անդունդները խուլ,  
Ու փոխվում ե նա մեր կյանքը արագ՝  
Ինչքան վոր արագ նրան ենք փոխվում:  
Նա,—ով պղինձ և ձուլում այս ձորում,  
Ով հսկում ե այս յերկաթե ուղին,  
Ով մեծ կայանի թունելն ե փորում,  
Ով Զորագետի ընթացքը փոխի,  
Ով այնտեղ, վերև; լեռների ծոցում,  
Փոքրիկ տները իմի հավաքած՝  
Սոցիալիստական գյուղն ե կառուցում,  
Ով ստեղծում ի պայծառ ապագան,—  
Կըրծքի տակ ունի, արյան մեջ, անհուն  
Մերը՝ գալիքին, քենը՝ անցյալին,  
Ցել այսորվա մեջ ժանտն ե մահանում,  
Ցել այսորվա մեջ աճում անձկալին:

Այս կոռու ձորն ե... միայն մի անկյուն  
Մեր խորհրդային լայնածիր յերկրում,  
Ուր բանակները համառ, աննըկուն  
Համայն աշխարհի նոր բախտն են կըռում:  
Ամեն, ամեն տեղ, ուր վառ հնգաթե

Աստղն ե շողջողում և կարմիր գըռց,  
Բոլնկված են այս նոր ու մշտատե  
Վերակառուցման սաստկացած հրով՝  
Այս յերկու գիծը, յերկիր Հայաստան,  
Կապում են հողդ Մեծ Հայրենիքին,  
Ցեղ գու ստեղծագործ ուժերիդ վստահ՝  
Կերտում ես այստեղ մասը գալիքի:  
Հինը փլչում ե, նոր կյանքն ե ցընծում.  
Սահմանավորումն ավելի խորն ե,  
Թան այս ճեղքվածքը լեռների ծոցում,  
Թան այս անդունդը... այս լոռու ձորն ե:

1981

## ՍԱՀՄԱՆԱԳԱՀԸ

Դայացքն իմ սուր, վոր կտրում և անծիր  
Լայնություններ, դաշտեր անհորիզոն,  
Յես հառել եմ ահա այս մի գծին,  
Սահմանածրին աշխարհը կիսող:  
Ինչպես կանգնած ջինջ գետափին, կամ թե  
Կամրջող գերանին վոտքդ դրած՝  
Տեսնում ես քո վոտներին հակագիր  
Կանգնած և մեկը իր գլխի վրա,—  
Ահա, այս սահմանագծում այդպիս  
Իրար հակոտնյա յերկու աշխարհ կա՝  
Վոտները դեմ առ դեմ տված, ասես,  
Հրում են միմյանց համառ վոխակալ:

Հսկում եմ յես այս սահմանն, անսահման  
Մի վիթխարի հաղթանակի համար,  
Վոր մեր աշխարհից փարոսանման  
Լուսարձակում ե, բորբոքում պայքար.  
Զճանաչելով սահմաններ ամուր,  
Ճեղքելով անցնում բանակներ արթուն՝  
Նա թափանցում ե, համնում ամեն ուր,  
Վոր տեղ մարդն և դեռ կեղեքու մ մարդուն:

Հսկում եմ յես այս սահմանը, սակայն  
Մի սահման ե մեր գործը ճանաչում,—  
Ամեն մի յերկրում մեր հերոսական,  
Բանվոր դասակարգն ե հար մարտնչում՝  
Թշնամու թիկունքում գծած սահման.  
Մեր այդ յերկու սահմանների միջև  
Ճղմվում ե նա՝ մեր թշնամին համառ,  
Մեր այդ յերկու գիծը՝ մի գիծ դառնա մինչև

Կարմիր աստղը, վոր կա սեզ ճակատիս,  
Մոքիս վորքան պայծառություն, վորքան  
Արիություն ե իմ վոգուն տալիս,  
Կամքիս՝ պողպատ, բազուկներիս՝ մկան...  
Յել վորպիսի, ո՛, վորպիսի՞ զարկով՝  
Ինքնավստահ գալիք հաղթանակին՝  
Յես կարող եմ փշրել բաց, անսքող  
Ժանիքները այն գազազած վագրի,  
Վոր խելակորույս, կրակե ողակում,  
Պիտի ծառանա իմ հայրենիքի  
Ապառաժներն ի վեր, իր արնախում  
Յերախը բաց՝ դաժան և անհոգի:

Ահա որն ե բացվում. և սվինն իմ  
Խաղում ե՝ արևից մի շող կտցած,  
Կաթկթում ե նրանից ցոլքն արևի՝  
Շեկ ճառագայթներ են ասեղվում ցածր  
Ո՛, նա կարող ե լույսի փոխարեն  
Հենց այսոր, թե մարտի փողը հնչի,

Արյան, կարմիր արյան շիթեր ծորել  
Յեվ մարտնչել մինչև շունչս վերջին:  
Վորքան ել դժվար լինի այդ, դաժան,  
Յես հանուն աւն նոր, անարյուն կյանքի,  
Վոր մենք կերտում ենք այսոր՝ ժամե ժամ,—  
Ո՛, արյուն կարող եմ թափիլ հանգիստ:  
Յեվ այդ կլինի մարդկային արյան,  
Ով գիտե՝ գուցե, հեղումը վերջին,  
Մարդկային ձեռքով. ո, հանուն դրա  
Յես չեմ խնայի յերբեք, վոչնչի:

Որն ե բացվում. յերկնի հայելու դեմ  
Խմ կարմիր հայրենիքն այս առավոտ  
Թե վեհաբար կանգնի, իրեն դիտե,—  
Չի ճանաչի իրեն հազարավոր  
Այն նոր հսկաներից, վոր այս գիշեր  
Հասակ նետած մահ են գուժում անսքող  
Այն աշխարհին, վոր չպիտի իշխե  
Այս սահմանից այն կողմ, ինչպես այս կողմ...  
Այս անսահման աճումն իմ մեջ աճում,  
Դառնում ե կամք, դառնում կռվի կորով.  
Աճումն այդ, վոր սահման չի ճանաչում,  
Պաշտպանում եմ իմ արյունով, սրով:

Ահա որն ե բացվում: Սահմանից դեն  
Նվազում ե հացը, ցասումն աճում.  
Միակ հացը հիմա զայրույթն ե թեժ,  
Վոր հիմա վերջին կռվի յե կանչում:

Աճում և նա ամեն գիշեր վորքամն,  
Հասունանում և նա որը որին,  
Վոր մի գիշեր, ահեղ գիշեր պռռթկա,  
Խնչպես այստեղ կարմիր Հոկտեմբերին,  
Պիտի պռռթկա և մի ալ առավոտ,  
Սվինները նետած արլունափայլ,  
Հենց այս սահմանում, յեկած իրար մոտ  
Պիտի համբուրվեն, ո, յերկու յեղբայր...

1982

## Հ Ա Յ Ր Ը

— Դաստակներիդ վրա, հայրիկ, ի՞նչ հետքեր են,  
Վորպես ճերմակ ապարանջան, ողակաձեւ...

— Նույն հետքերը կան, զավակս, իմ վոտքերին,  
Հին աշխարհի կնիքն ունեն և, վոտ, և ձեռք:  
Շղթաների հետք են դրանք, ճերմակ սպի.  
Շղթաների հին աշխարհի սե, ցարական,  
Վոր կրել եմ Հայաստանից մինչև Սիրիը  
Տասը տարի շղթայակապ, աքսորական:

— Այդ ի՞նչ հետք եքո ճակատին փայլում, հայրիկ,  
Ինձ պատմում ե նա անցյալից հզոր մի քան...

— Նույն նշանը կա, զավակս, կըրծքիս արի.  
Նա նշում ե մեր յերեկվա անցած ճամբան:  
Հերոսական կավով, զենքով և արլունով  
Խորտակեցինք հին աշխարհի շղթան դաժան.—  
Խորհուրդները ստեղծեցինք արյան գնով,  
Այդ որերից սպիներ եմ պահել նշան...

— Կրծքիդ փարած այս լնչ շքեղ նշան ե, հայր,  
Հերոսության, փառքի այդ լնչ մարմնացում ե...

— Այդ անցյալից յես յեկել եմ հերոսաբար.  
Մասնակից եմ այսորվա մեծ կառուցումին:  
Նորի կերտման, հին աշխարհի քանդման, ճնշման՝  
Պայքարմներում դրած արյանս, ուժիս համար, —  
Դասակարգը ինձ տվեց մի փառքի նշան,  
Վոր կրում եմ կրծքիս վրա հերոսաբար:

1982

## ՊՂԻՆՉ ԳԱՆԴՈՂՆԵՐԸ

### 1. ԱՆՀԱՆԳԻՍՑ ԳԼՈՒԽԸ

Նրա դլխում, այդ հանքափոր բանվորի,  
Մի անհանգիստ միտք եր աճում և վառվում, —  
Ինչպես ինքն եր միշտ անհանգիստ, —այն որից,  
Յերբ ասացին թե՝ «յերակն և սպառվում»:

Տեսնում եր նա աչքերով իր փորձառու,  
Զգում եր նա հանքի պաշարն անսպառ.  
Նույնիսկ մուրճը, շոշափուկի պես՝ առնում,  
Հաղորդում եր նույն կարծիքը անբարբառ:

Սակայն ինչժե ինժեները չի թողնում  
Այդ ուղղությամբ հողը քանդել և գնալ...  
Ու բանվորի զսպլած կամքն եր վրդովվում,  
Ինչպես անփորձ ձեռքով բանող մեքենա:

Ինչժե սակայն խորհել զգալ ոչ լոել  
Յեվ տագնապել պետք ե անցնել և դործի,  
Ինժեները ինչ ուղում է՝ թող դրե,  
Ինժեները թշնամի յե մեզ զուցե:

Ճնկերների հետ նա յերկար միտք արավ,  
Ճին բանվորներ՝ կռվի, կամքի մարմնացում.  
Հանքահորը կարծես դարձավ «գաղտնաբան»,  
Յերեք հոգով գործի անցան լուռ, անցույց:

2. ՅԵՐԱՅԻՆ «ԸՆԴՀԱՎԱՏԱԿՅԱ».

**Գ**իշերը լուռ թանձրացել ե, խտացել,  
Հանքահորում ջոշափվում ե նա նույնիսկ-  
Խավարի մեջ, հողի տակը ընթացել՝  
Աշխատում են յերեք բանվոր անհանգիստ:

Ու կարբիտի փոքրիկ լամպը՝ պահապան  
Աչքի նման պլազում ե խիստ զգուշ,  
Միայն նա յե տհանում, լսում գաղտնապահ,  
Ինչ անում են բանվորները, ինչ զգում:

Յեվ թվում ե բանվորներին թե՛ մի պահ  
Յետ գնացել ամբողջ տասնեհինգ տարի,  
Նիստ են արել, վճիռ հանել զաղտնաբար  
Յեվ անցել են ընդհատակյա պայքարի:

Ու թվում ե՝ խորախորհուրդ գիշերով՝  
Մեքենա յեն դնում այդտեղ պայթուցիկ.  
Ու հիշում են հին որերը ..հիշելով՝  
Ամրանում են մկանները պիրկ ու ձիգ:

Ու քանդում են՝ լի անսպառ յեռանդով,  
Վորոնում են պղնձի մի նոր յերակ,  
Հարվածներից կալծ ե տալիս ժայռն անթով,  
Ու սրտերում բոց ե աալիս մի կրակ:

Յ. ՅՆՇՈՒԹՅԱՆ ՓԱ.61.

Համառությունը՝ վստահ հաղթանակին մոտակա՝  
Խլուրդի պիս փորում ե, հողի սիրտը խարխըլում...  
Արդեն, արդեն պղնձի հարուստ շերտի հետքը կա,  
Ո՞վ ե հիմա հաղթության կարմիր դրոշը խլում:

Ահա, ահա կարբիտի պլազմոդ լույսի տակ  
Բացվում ե գորշ, փայլվլուն հանքաշերտը պղնձի...  
Հաղթանակի պես շքեղ, ուրախության պես հստակ՝  
Բանվորական աչքերը վառվում են գեղեցիկ:

Հիշողություն քմահաճ... նորից հիշում են նրանք  
Հին որերի պայքարից դեպքեր, դեպքեր բնորոշ,—  
Ինչպես այս նույն հանքերում՝ յերբ գտան մի նոր  
յերակ,  
Խսկույն գաղտնի ծածկեցին հող ու քարի շերտով  
գորշ...

Ու հիշում են... հիշելով՝ ամրանում են մկաններ,  
Կամքն ե աճում, բարձրանում հերոսության հորձանքով.  
Մարդիկ հիմա գործում են, վորպես հզոր հսկաներ,  
Փառք ե հիմա առորյա աշխատանքը մեր կյանքում:

Հերոսական ժպիտով ճակատներն են վեհանում,  
Բարձրանում են կրծքերը՝ հաղթանակով վահանված.  
Այդ կըրծքերին նստում ե, դրոշի պես վեհանուն,  
Աշխատանքի հերոսի նշանը մեծ, վեհապանծ:

## Ա. ՎՈԳԵՓՈԽՈՒՄ

Դին կյանքի տակ դժոխային, գաղտնակերտ  
Մեքենաներ զրած ահեղ, պայթուցիկ,  
Պայքարի մեջ մերթ հաղթական, պարտված մերթ՝  
Հերոսության մեծ որերը պայթեցին:

Հերոսություն, հոկտեմբերյան որերի,—  
Հերոսություն մեծ քանդումի, փլուզման.  
Քանդում, վոր հենց կառուցումն եր և նորի,—  
Մարմանում ես որերում այս կառուցման:

Մեր աշխարհում, այսպես, այսոր ամենուր  
Հերոսությունն ե միշտ աճում, լեռնանում...  
Ու նոր մարդը, վոր աճում ե ամեն որ,  
Հերոսական իր գործով չի լիանում:

Ու նայում ենք այլ աչքերով, այլ վոգով  
Աշխատանքին, վոր եյությունն ե մարդու,—  
Հենց այս հանքը, վոր քանդեցին յերեքով,  
Յերեկ միայն ատում եյինք և ատում:

Ահա այսպես, յերեք հերոս ընկերներ,  
Դուք քանդում եք վոչ թե, վոչ թե լոկ պղինձ,  
Դուք կերառում եք նոր եյություն, վոր մերն ե,  
Վոգեփոխում աշխատանքը, ձեզ և ինձ:

1981

Պ Ե Ն Զ Ա Ք Ա Բ Ի

Ահա դրված ե սեղանիս վրա  
Այս գորչ կտորը պղնձաքարի՝  
Գեղեցիկ լոռու ձորերեց բերած։

Մի բանվոր ընկեր, վոր տամը տարի  
Լոռու ձորերում պղինձ ե քանդում,  
Նվիրեց ինձ այդ կտորը քարի։

«Պոետի համար, ընդունիր և դհւ,  
Մեր այս ձորերում սրանից... քնքուիշ  
Նվեր ել չկա»—ասաց նա ժպտուն։

Յերբ ձեռքս առա յես քարը այդ գորչ,  
Լոկ այն ժամանակ հասկացա լրիվ  
Բանվոր ընկերոջ ակնարկը զգուշ...»

Իսկ յերբ նվերը գրպանս դրի, —  
«Զմոռանաս, հա, այդ քարի մասին  
Անպայման, — ասաց, — մի պոեմ՝ գրիր»։

Վորքան յես հիմա կարող եմ հիշել՝  
Զկար իր խոսքում վոչ վիրավորանք  
Ցեվ վոչ ել կծու հեգնության մի շեշտ։

Բայց, յերբ հրաժեշտ յես տվի նրան,  
Սեղմելով ձեռքը ջղուտ, պողպատե, —  
Դեմքիս զգացի ամոթի կրակ,

Ու յերբ հեռացա, ինձ թվում եր թե՝  
Ընկերս վոչ թե նվեր տվեց ինձ,  
Այլ սրտիս վրա այդ քարը նետեց:

Կարող եր հենց նա, հենց նա ինձանից  
Ավելի պայծառ պոեմներ գրել  
Այդ քարի մասին, վոր նվիրեց ինձ:

Յես կարող եյի այդ քարը բերել  
Հողի արգանդից, հենց իմ քրտինքով,  
Յեվ մեր կառուցման յելքին նվիրել:



Ընկեր, նվերիդ փոխարեն, ահա  
Այս փոքրիկ յերգն իմ նվիրում յես քեզ,  
Դեռ այն ամոթի կսկիծը պահած, —

Մինչև վոր ինքդ, հենց ինքդ յերգես  
Քո նոր շեփորով պայծառ, պղնձե՝  
Այդ աշխատանքիդ հմայքը պես-պես.

Մինչև վիճակվի պոետին, ինձ ել՝  
Կյանք կառուցելու նաև կուռ բազկով,  
Յեվ յերգը քո վառ հալոցում թրծել:

Իսկ մինչ այդ, մինչ այդ՝ թող հոգիս դժգոհ  
Այդ բաժանումից (արդեն չքացող),  
Այս մեծ կառուցման մասնակցեմ յերգով։

Բայց արդեն, արդեն դյուլթիչ զնոգոցով  
Զուլած պղնձիդ և յերգիս միջից  
Բարձրանում ե մեր վաղը լուսացող։

1931

ՓԱՆԳԸ

Հերթափոխի ազդանըշանն յերբ յեղավ,  
Դործարանում յերբ սկսվեց նոր գրոհ,—  
Նա մոտեցավ մեքենային... սրտնեղած  
Կանգնեց հանկարծ մռայլված ու մտախոհ։

Մեքենայի գլխի զրա մի սև լաթ,—  
Ամոթի սև դրոշակն եր քարձրացել.  
Նախորդ հերթից դասալիքը դրոշն այդ  
Թողել եր սև ժառանգություն, գնացել։

Նա վճռական մի շարժումով՝ անշվար  
Դուրս քաշեց այդ սև կտորը դրոշի,  
Նախատինքի այդ նշանը նետեց վար,  
Ու զայրույթը փոխվեց կամքի և ուժի։

Լցվեց, վառվից ներքին ուժով, հրով նու,  
Հոսանք տվեց անիմսերին, փոկերին,  
Բայց անախորժ ճորնչյունով մեքենան  
Նորից մի ամպ նետեց նրա հոնքերին։

Աճեց նորից զայրույթը նոր հորձանքով,  
Բայց և կամքը մնաց համառ և տոկաց.  
Մեքենալի մի պտուտակն եր ժանգու,  
Խանգարում եր անիմսերին պտույտ գալ։

Դիտեց, քանդեց, յուղեց անիվ, պտուտակ,  
Յուղով՝ ժանգը, կամ քով սրբեց ամոթանք,  
Փոկը սողաց, սկսեցին պտույտ գալ  
Անիմները արագ-արագ դըղրդան:

Յերբ մեքենան զարկեց, առողջ սրտի պես,  
Բանվորն զգաց, վոր իր սրտում հորձանքով  
Արագացավ արյան վաղքը, և կարծեա  
Մեքենայի հետ եր մրցում այդ վաղքով:

Դեղին ժանգից յերբ ազատվեց մեքենան,  
Արագացան պտույտները կրկնակի,  
Ու բանվորի սիրտն սկսեց հագենալ  
Մեծ հմայքով աշխատանքի նոր փառքի:

Դեղին ժանգը, ծուլությունը՝ ժանգի մեջ,  
Դասալիքը՝ մարդկարին ժանգ մահամոռ՝  
Դեռ ապրում են աշխատանքի, կյանքի մեջ  
Ունեն իրենց սեւդրոշը, սև ամոթ:

Աշխատանքը, կամքն աշխատող նոր մարդու,  
Մաքրագործող յուղի նման, վողողում  
Մաքրում են այդ գեղին ժանգը, կենսաթով  
Հերոսության փառքն ե միայն շողջողում:

## ՅԱՐԿՈՒ ՊՈԵՏ

Հ. Մարգարյանին

### 1

Կարյուրների մեջ եր,  
Հարյուրների նման,  
Ցես., «Պառնասից իշել»՝  
Հանդիպեցի նրանու  
Տեսա աչքերում իր  
Գարնանային մի շող՝  
Առանց դեգերումի  
Ցերգեր վոգեկոչող:

Թեև մի ընդհանուր  
Բան կար յերկուսիս մեջ,  
Վոր պայքարի հանում,  
Բորբոքում եր անվերջ,—  
Բայց նրա մեջ ինչ վոր  
Հերոսական մի գիծ՝  
Սուր, շեշտակի իշնող՝  
Տարբերվում եր ինձնից:

Յերբ նա ձեռքս սեղմեց,  
Յես... սուր ցավ զգացի...  
Բայց ժպիտը մեղմ եր,  
Դուրեկան և անծիր:  
Ճանաչեցի նրան,  
Աչքերի մեջ մի շող՝  
Յերկախս միանըման  
Մանկությունը հուզող:

Մանկատանը ինձ պես  
Պոետ եր նա մանուկ...  
Ու խաղի մեջ նա մեղ  
Միշտ կռվի յեր տանում:  
Բացի պոետական  
Իր շնորհքից, —ուներ  
Մարդված, ամուր մկան,  
Կռիվների մեծ սեր:

Բաժանվեցինք. ինձ պես  
Հիմա ով և հիշում՝  
Թե ի՞նչ յեղանք, ի՞նչպես,  
Անցյալ կյանքի մուժում:  
Հիմա, հիմա սակայն,  
Չարհուզ այդ հին որից,  
Կռվում հերոսական  
Հանդիպեցինք նորից:

Նա պոետ ե կրկին,  
 Կրկին մարտի պատրաստ,  
 Առնական ե վողին,  
 Ահազանգին զգաստ.  
 Նա կովի յե հանել  
 Մի նոր ջոկատ,—սակայն  
 Ել խաղ չե այդ անմեղ,—  
 Դրոհ ե հերոսական:

Չունի ընկերս՝ հիմա  
 Հրացան ու դաշույն...  
 Նոր կառուցման համար  
 Նա քարեր ե տաշում...  
 Այդ կովի մեջ ե նա  
 Խնում արվեստ ու կամք,  
 Միտքը բազմահընար,  
 Արյուն, քրտինք, մկան:

Ահա՝ շենքը՝ կերտվող՝  
 Պոեմ հերոսական,  
 Ստեղծում ե քերթող  
 Մի կոլեկտիվ նրան:  
 Բառ ե ամեն մի քար  
 Պատի ամեն՝ շարքում,  
 Տող ե ամեն մի շար  
 Վոր զնդում ե, յերգվում:

Այդպես, այդպես հերոս  
Մեր այս բանակն ահա,  
Վորպես նոր Հոմերոս,  
Դարի եպոպեան  
Կերտում ե յերկաթով,  
Քարով, կրով, ջանքով  
Յել Լենինյան հաղթող  
Պատգամների գենքով:

Ահա յերկու պոետ,  
Յես՝ բառի, նա՝ քառի,  
Ու պատրաստ ենք զոհել  
Մեզ նույն այդ պայքարին,—  
Զենքը նրա թեև  
Քարն ե, մուրճն ե կոփող,  
Իմը՝ թուղթն ե թեթև,  
Իմը՝ գրիչ դյութող:

1981

## ՀԱՅԻ ՅԵՐԳԵՐ

### ՅԵՐԳ ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

Իմ յերկըի համար ի՞նչ առավոտ ե,  
Իմ յերգի համար ի՞նչ որ լուսացավ...  
Բայց քեզ հիջում եմ... դեռ ինչքան մոտ ես,  
Իմ սև մանկություն, հողի վիշտ ու ցավ...

Հուլիսն եր իջել մեր գյուղի վրա,  
Շեկ ասեղներով արևն եր կիզում.  
Հեռմ եյին թույլ ծառերը լռած,  
Տերևները կախ, վորպես շան լեզու:

Արտերում սուգ եր: Տիսուր կույսերի,  
Աղջիկների պես, վարսերը թողած,—  
Ցերազում եյին հասկերը թերի  
Զըերի սերը, համբույրները թաց:

Զըստութիւն որը առնական որ եր,  
Յերբ, ինչպես սըմնդն իմ, վտիտ առուն  
Զըերի յերգով պիտի որորեց  
Հասկերի սերը; ուսնացումն առույգ...

Բայց այն առավտան, յերբ մեր արտն ի վար  
իջավ յեղբայրս՝ ջրտու բահն ուսին,  
Սուզի իրիկուն դարձավ մեզ համար.  
Արևը դարձավ մի սառած լուսին...

Ա՛խ, ինչու համար ջուրն այնպես քէ՞չ եր...  
Մեր արտի կողքին, այդ ջրի վեճով,  
Դրկիցի բահը թրի պես իջել  
Ճեղքել եր յեղբորս ճակատն անզիջող...

Մարաված արար ծծում եր, քամում  
Նրա արյունը և կյանքը նվազ...  
Հարեան արտում ջրտուք եր անում  
Մարդասպան մարդը լուռ ու գլխակախ...

Անիծում եմ քեզ, (Ի՞նչ ոգում՝ սգայ)՝  
իմ սև մանկություն... Աճած և Հասուն,  
Ինչպես մեր յերկրի այս ներկան զգաստը  
Յես հիմա ուրիշ կյանք եմ յերազում...

Յեզ ի՞նչ յերազել... փլվում են հիմա  
Յեզ սահմանի քար, և վտիտ առու.  
Ու մեր արնախում արտերի վրա  
Բացվում ե կանաչ, համասփյուռ գարուն...

Զի մնում այլևս և վոչ մի սահման...  
Ո՛, վհչ, մնում ե, մնում մի սև գիծ,  
Վոր այն աշխարհը ծարավի, մահվան,  
Բաժանում ե մեր այս լալն աշխարհից.

1980

## ԹԱՂՎԱՌ ԱՅԴԻ

ՊԵՏՐԿԱՆ

Թափուր հանդեր են, — մերկություն հողի, —  
Հողի կույտեր են՝ բլրակ առ բլրակ...  
Նիրհում ե հիմա վորթը խաղողի  
Ցուրտ այգիներում, հողակույտի տակ:

Սակայն յերբ վառվի արեց դարնան,  
Խլրտան աշխույժ հանդերը հղի, —  
Զնզուն բահերը յետ պիտի դառնան,  
Բաց անեն թաղված վորթը խաղողի.

Պիտի բացվի նա, կանաչի հուրթի  
Ու փարթամանա՝ ծծած կյանք ու լույս,  
Եեվ վոստիկներից այդ շքեղ վորթի  
Կախվեն ժպիտներ վողկույզ առ վողկույզ...

Դյաւղաստան յերկիր, դարերով այդպես  
Դու նիրհում եյիր խըճիթներում քո,  
Ու Հոկտեմբերյան բահը բացեց քեզ,  
Բացված զնզացիր մի ուրիշ կյանքով:

Ահա բացվում ես ընձյուղ առ ընձյուղ,  
Փարթամանում ես լի հյութով, հույզով,  
Ցեղ ամեն մի վոստ, և ամեն մի ճյուղ  
Բեռնավորված ե բլուրեղ վողկույզով:

Յ. Խ. Բ. Ա.  
Նիրհած ուժերդ զարթնել են արդեն,  
Շըջվել ե հողդ կորթ ու դարավոր...  
Զեզ, համայնական հանդերժու արտեր,  
Զեղ վողջույն ու սերւ կյանքի առավոտ:

1988

ՀԵՂԻԿԵ ՅՈՒԺԸ Ա

ԱՐՄԵՆԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԴԱ

ԱՐ

ՎԱ

## Խ Ո Հ Ե Ր

Մի բուռ ցորենի, սպանված հերօսի յեզ կարմիր քանա-  
կայինի մասին

Մեր այս նոր կյանքի հերոսավեպի ամեն տողի մեջ  
Վորքմն փառք, վորքմն կոխվ ու կորով, վրեժ ու սեր  
կա...  
Տարիներ առաջ, յես գալիքը մեր՝ այսորվա ներկան՝  
Ու այնքան պայծառ, այնքան վառ տեսա մի բուռ  
հողի մեջ...

Մեր խորհրդային առաջին գարնան վճիտ մի որ եր,  
Դեռ նոր եր անցել ձմեռը վերջին՝ դաժան անցյալի.  
Կարմիր թանակի մեր հերոսական գնդից պանծալի  
Դարձել եյի գլուղ, վոր ամեն ինչով փոխված ու նոր եր,

Այդ գարնանային ջինջ առավոտյան լի յեր իմ  
հոգին

Մի ներքին գարնան անտես ջերմության շողերով  
բերկըուն,  
Դուրս եյի յելել գյուղից՝ շրջելու արտ ու մարգերում,  
Վորոնք ավելի լայն եյին թվում հիմա իմ աչքին:

Նստել եյի յես մի արտի յեղրին, ծաղկած ծառի տակ,  
Ծաղիկների հետ արևն իր խիսդն եր վրաս ցնցուղում.  
Խնչպես այդ ծառի ամեն մի ճյուղում, ամեն ընձ-  
յուղում,  
Իմ մեջ նոր կյանքն եր աշխույժ խլոտում և առնում  
հասակ:

Նայում եյի յես հորիզոններին, ուր,—ինչպես պահակ,—  
Լեռներն եյին սեպ հսկում մեր յերկը աճմանը  
անդորր.

Անդորրությունն այդ հղի յեր կռվի ու կերտման խանդով  
Ու մեզ համար նա նոր հերոսություն ու փառք եր  
պահած...

Նայում եյի յես անափ արտերին, աճուն կանաչին,  
Ուր չեր աճելու շեկ ցորենի հետ ել վոչ մի տատասկ.  
Ու թվում եր ինձ՝ ամեն ճյուղ ու շյուղ, ամեն  
կանաչ հասկ  
Հասկանում եր իմ խոկմունքը խորունկ, հույզերս  
վճիտ...

Աչքերիս առաջ որորվում եր թույլ արտն ալեծածան,—  
Շեկ հատիկներով արդեն ծանրացած գլխիկների ծով,—  
Յեկ իմ նայվածքի անյութ ու գյութված անթի  
մակույկով  
Շրջում եր հոգիս այդ կանաչ ծովի մի ծայրից մի  
ծայր:

Արտի ցեղըին մի բույլ, փարթամ աճած, մուգ-կանաչ  
ցորեն,

Ալիքի նման, վեր եր բարձրացել արտի յերեսին.

Վորպես կրկնվող, կրկնությամբ դյութող մի համառ  
տեսիլ,

Քաջում եր նա իմ հայացքի նավը միշտ դեպի իրեն...

Ինչու յեր այդքան մի բույլը շքեղ այդ ամբողջ  
արտում,

Ինչու յեր այդպես փարթամ հասակը նրա հասկերի...

Մի նոր, անծանոթ հափշտակության իմ հոգին գերի  
Տարուբերվում եր, ծեքծեքում իրեն ու չեր հանդարտում:

Ցես նայում եյի, իմ շուրջը դիտում, վոր իմ սեվե-  
ռուն

հայացքը պոկեմ շքեղ կանաչած ցորենի խուրձից,

Բայց նա, հայացքն իմ,—վորպես սովատանջ, թույլ  
ու տխուր ձի,—

Զգտում եր դեպի այդ բուռ կանաչը մոտիկ և հեռու:

Բայց կամքիս սանձով քաշեցի նրան, կապեցի ծառին...

Այդ ծառը ծաղկուն, այդ ծառը... սակայն այդ ի՞նչ,  
ի՞նչ ծառ եր...

Այդ ծառը հիմա վորքան ծիծաղկուն, վորքան  
պայծառ եր.

Բայց ինչու այդպես իմ սիրտը տխրեց առանց  
պատճառի....

Այդտեղ եր, այո, ճիշտ ու ճիշտ այդտեղ, ծաղկած  
ծառի տակ...

Ու վորպես դատարկ փամփուլտներ՝ դեպի յետ դուրս  
են թռչում  
Անցած որերի հուշերը մեկ-մեկ... ահա թե ինչու  
իմ սիրտը տիրեց, բարախեց այնպես ընդհատ ու  
արագ...

Աչքիս առջեկից անցած որերը նորից անցկացան...  
Մեր վերջին կախվն այս հարթավայրում... և բախտու-  
րոջ մարտ...

Մի թշնամի աչք ծառի յետեկից՝ արնալի, անթարթ.  
Այդ անթարթ աչքից կըծքիս յերկարած մի ու հրա-  
ցան...

Վերջին գրոհին ել չդիմացավ գունդը թշնամու...  
Պոկվեցին մեկ-մեկ քարից ու ծառից, թմրից ու հողից,  
(Պոկվեց այն աչքն ել այն արնոտ աչքն ել փախա՛ի իր-  
տեղից)

Ու հանձնվեցին անդարձ փախուստի զարհուրած  
քամուն...

Այդ ծառի մոտն եր..., բայց տեղն իսկական ինչպես  
ճանաչել...  
Ինչժե յե փարթամ բույլը ցորենի որորվում, զրջում,  
իր շքեղությամբ իմ հիշողության հույլերը քշում...  
Այո, այդտեղ եր, ուր ցորենի այդ մուգ խուրձն եր  
աճել...

Այդ տեղ եր ընկած հրացանը դրկին և յերեսն ի վայր,  
Ընկած արյան մեջ ճակատից զարկված իմ ընկերն  
արի,

Ընկերս կռվի, ընկերս զենքի ու գաղափարի,  
Ընկած մեր գործի, մեր հաղթանակի, մեր փառքի  
համար:

Յես նայում եյի հիմա հասկերի այն փարթամ փնջին,  
Վոր բժւռն աճել եր նրա ավիշով, նրա արյունով...  
Ո, այդ հասկերի քիստերը կանաչ, ասես, արյեւնող  
Սվեններ եյին... ու հոսում եյին արցունքներն իմ  
ջինջ:

Յերկար նայեցի հսկա արտի մեջ յես այն բուռ հողին,  
Վոր իմ ընկերոջ արյունը ծծած՝ դարձել եր բերբի.  
Այդ արյամբ ահա մնուցում եր նա փունջն այդ հաս-  
կերի,

Ու հասկերն այնպես ձգտում եյին վեր արեի շողին:  
Յեվ այդ ափ հողը տարածվեց իմ դեմ անսահման,  
անծիր,

Ու փռվեց իմ դեմ չքնաղ ճոխությամբ այդ հողին  
աճած  
Մի հեքյաթային, յերազված աշխարհ՝ շքեղ կանաչած,  
Մի շտեմարան մեծ յերջանկության անսպառ գանձի...

Այդ բուռ հողի մեջ, այդ հարուստ աճած հասկերի  
խրձում

Զգացի մեր մեծ հերոսավեպի վոգին տոգորված,  
Խմաստությունը մեր ողայքարների ու մեր՝ վոգորման  
Ու նոր կառուցման ահեղ մարտերի փառավոր ցնցում...

Յես վոտքի յելա... ծանր խոհերով վերադարձաւուն...  
Հաջորդ առավոտ մեկնեցի կլկին յես կարմիր Բանակ...  
Ու մինչև հիմա թվում ե թե յես դեռ այս ծառի տակ՝  
Լսում եմ հողի և այն հասկերի զջունջն իմաստուն.

1988

Հ Ա՞Յ Ը

Մի իմաստություն ուներ մայրս ծեր  
Այնքան հասարակ, վոր վոչ մի անգամ  
Յես նրա մասին չեյի մտածել:

Նա մոռացված եր, մոխիրում հանգած.  
Սակայն հուզերիս կայծքարից այսոր  
Իմաստությունն այդ բռնկվեց հանկարծ:

Յեվ պարզ, գեղջկական այդ խոսքն այնքան  
նոր

Հնչեց ականջիս,—մի հանճար, կարծես,  
Դարերի խորքից իր մեծահղոր,

Իր անմեռ յերգը կտակում եր մեզ  
Մայրիկիս խոսքը պատկերացավ ինձ,  
Վորպես նոր հնձված ցորենի մի դեղ.

Ու ծղոտների շեկ դեղի միջից  
Ճորենի անտես հատիկն հատիկին  
Պատմեց իր կյանքը խոր, իմաստալից

Ու յես մայրիկիս խոսքերը կրկին  
Լսեցի խորունկ, անհուն կարոտով.  
Այնքան խմաստուն, պայծառ ու մեկին:

— «Դու հացը յերբեք մի կոխիր վոտով,  
Հացը կտրիր լոկ ձեռքով, անդանակ,  
Հացը սուրբ ե, սուրբ, դատած քրտինքով...»

Ու մեր որերի պայծառ լույսի տակ  
Ցես նոր հասկացա խմաստն այդ խոսքի՝  
Այնքան խորախոր ու այնքան հստակ:

Դարեր շարունակ, մայր իմ կաթողին,  
Դարեր շարունակ մեր հացը մաքուր  
Հազար արյունոտ, անառակ վոտքի

Կոխան ե յեղել ու պողպատակուռ  
Պղծված դանակով, սրով հաճախ ել  
Մեր հացն են կիսել, մեր սիրտը տիսուր:

Մեր իսկ քրտինքով ցեխ են շազախել  
Ու այդ ցեխի մեջ մեր հացն արնագույն,  
Մեր սիրտն են դաժան տրորել, թաղել...

Ակ տառապալից, տրորված կյանքում,  
Քրտինքով դատած մեր հոցի մասին  
Մեծ խմաստությունն ստեղծեցիր քու

Բայց քո այդ խոսքը անիմաստ ու սին  
Հնչեց աշխարհում, քանի զեռ այնտեղ  
Հարթաւտ և աղքատ կային միասին...

Միմիայն այսոր, մեր արյունահեղ  
Մեծ կովից հետո, մեր հացը մաքուր  
Ել չի կոխուավում վոտքերով ահեղ:

Ու վոչ մի դանակ, վոչ մի արնոտ սուր  
Չի կարող կիսել մեր հացը հիմա...  
Իմաստությունդ վոր այնքան իզուր

Հնչեց հին կյանքում դժնի, արնամած,—  
Վորպես անանուն հանճարի մի յերգ,  
Վորպես ցորենի հատիկը անմահ,

Հիմա յե միայն առնում ծիլ ու յելք,  
Հիմա յե միայն դառնում իրական,  
Ինչպես մեծ հղղի անկապտելի բերք;—

Մայր իմ կաթոգին, հեղ անապական:

1984

## Գ Յ Ո Ւ Դ Ա Կ Ա Ն

Սիթելի Ականվին

Այսոր հոգիս ապրում ե հրճվանքը մեր գյուղերի,  
Վոր ընկել են ճանապարհ և չեն ուզում լինել գյուղ,  
Մի անհողդողդ, հղոր կամք նրանց հանած հյուղերից,  
Առաջնորդում ե դեպի մի նոր աշխարհ՝ աներկյուղ:

Գյուղը, գյուղը հայկական, հազարամյա այդ կրիան,  
Խնչ ընթացք ե վերցրել՝ փոփոխելու ինքն իրեն.  
Խլուրդային բույները, տնակներն ընդյերկյա  
Բարձրանում են հողից վեր, վոր ջնչահատ չնիրեն:

Փռքրիկ այդ հին տները՝ իրենց հոգսով և ցավով՝  
Մեծանում են միաձույլ, նոր տեսք առած և իմաստ.  
Ու ժպտում ե արտերին մի նորաբաց առավոտ,  
Արտեր, դաշտեր, վոր անթումբ և անբաժան են հիմա:

Արոր ու տայլ դեռ այսոր ճըռնչում են, բայց արդեն  
Նահանջում են արտերից՝ աշխատելու անկարող,  
Ու մեքենան, մեքենան, այդ փրկիչը յերկաթե,  
Դուրս ե վանում գյուղերից սայլ ու գութան և արոր:

Արտաքինը գյուղերի դեռ տխուր ե, գուցե հին,  
Բայց ինչքան և փոխվել և նոր մարդդարձել գյուղացին,  
Նոր աչքով և նայում նա աշխատանքին և հողին,  
Նոր իմաստ և տալիս նա ստեղծագործած իր հացին։

Բայց հողի մեջ և հացի դեռ մնում և հին մի քան,  
Ու կառչել են նրանից դեռ շատերը գյուղերում,  
Խնքն իրենից նահանջում, մոտենում և նորին նա,  
Ու ձուլվում ե, լուծվում նա ընթացքի մեջ մեր  
յեռուն։

Ու թշնամին գաղաղած, մեր այդ վերջին թշնամին,  
Դավ և նյութում ընթացքի, արշավի դեմ նոր զյուղի,  
Պայքարի մեջ թողնելով իր դիրքերը մի առ մի,  
Նահանջում ե՝ հանձնված խորտակման սև յերկյուղին։

Ընթանում և գյուղը նոր՝ դադարելու գյուղ լինել,  
Մոտենում ե, վոր լուծի իր սահմանը քաղաքին...  
Հաղթանակ՝ վոր այսոր խորհրդային գյուղին ե,  
Դասակարգին և մեր մեջ վաղջ աշխարհում ահագին։

1981

## Ս Ե Ր Մ Ե Ր

Դեղձան ե արտը, զեղնել ե մարզը, վոսկի յե այգին,  
Խարտյաջ արել հասել ծորում ե վերից բռւյր ու խեժ.  
Խններորդ ամիս, ով դռւ մայրություն յերկրիս

կաթողին,

Այս ակնապարար շեկ լիությունը մեզ պիտի բաշխեա:

Յերգս քեզ, աշճւն, դու հասակն տռած, անցած

գարունն ես,

Այս լիությունը մեր ջանքի բերքն ե, գարնան ուժը  
մեր...

Նոր զարունների համար վորպիսի՛ հմայքներ ունեա,

Ու պառազներդ՝ գալիքի համար վորպիսի՛ սերմերս

1980

## Ա Շ Ն Ա Ց Ա Ն

Վիթիարի ու գորշ մի ցընցուկ  
Եիթերով, թելի պես բարակ,  
Մոր հերկված դաշտերի վրա  
Իր թաց գուրգուրանքն ել լցնում:

Դաշտերի սիրառատ կրծքից  
Այդ հեղուկ թելերն ի վեր  
Յելնում են կանաչող ծիլեր...  
Թվում ե գարուն ե կրկին:

1980

## ՀՈՒՆՁՔ

Դաշտերի դեղձան աշունն ե.  
Հասկերը փոթորկում են ծով...  
Ու հզոր մի ձեռք քշում ե,  
Նավի պես, մեքենան հընձողւ

Անցիր դաշտերից մեր, անցիր,  
Մանգաղի անգույն լիրիկա,  
Հանրային դաշտերի հացից  
Թաղաքի բուրմունքը թող գտւ

1980

## ՅԵՐԿՎՈՒԹՅՈՒՆ

Սյս յերկշագիլ հունտը, այս հատիկը  
Մի յերկվություն ունի իր ամբողջում,  
Ծիլ և արձակել նա և մոտիկ և  
Նրա մահը, յերբ ծիլն և կանաչում։

Աճում, բարձրանում ես դու, ցողուն իմ,  
Յերկշագիլ այդ հատիկից ամբողջական...  
Մեր աշխարհն, ուր վոր մի ափ հող ունի,  
Այդ յերկշագիլ սերմի ցոզունները հագալ։

1980

## ՀԻՌԻԹՑՈՒՆ

Լիանում ե աչքս, յերբ նայում եմ այսպիս  
Անսահման և անթումը այս կանաչ արտերին,  
Լեցվում ե իմ սիրտը, ու ծաղկում ե, ասես,  
Իմ սրտում խնդության մի կարմիր վարդենիւ:

Այդ մի պահ ե սակայն, հիացմունքի մի պահ՝  
Պայքարներից հետո՝ թումբերը կործանող,  
Խնչպիս անձրեից վերջ թաց դաշտերի վրա  
Խնդությունն ե իշնում դյութիչ ծիածանով:

Ահա նորից, նորից կովի զեփոր, գրոհ...  
Ու զարժվում են կրկին միլյոնները մեղ հետ...  
Աչքերիս մեջ հիմա՝ մի կատկարմիր դրոշ,  
Ու սրտիս մեջ՝ ժայթքող ատելության գեցզեր:

Արտերն այս, վոր ժպտում են կանաչով լի, —  
Ուր հաղթ խըրխնջում եր հենց այս կովի գարնան-  
Շոգեշարժ ծիերի մի յերկաթե ջոլիր, —  
Մվեն-ծվեն եյին թըմբով, քարով, արյամբ,

Փլվեցին թմբերը հենց մեր, հենց մեր ձեռքով,  
Ով փլղրեց՝ հիմա ինքն իրեն և փոխում.  
Դա լինում ե ներքին պայքարով ու կրքով,  
Խնչպիս հունտն ե ճայթում, արձակում նոր ցողուն:

Այս քանդումի, այս մեծ այլակերպումի դեմ,  
Եյափոխման, ստեղծման յերկունքի դեմ, ահա,  
Վերջին կատաղությամբ նոր դավեր և նյութել  
Թշնամի մի բանակ, դատապարտված մահվան:

Մահվան գալարքի մեջ՝ մագիլներով անգոց  
Հետ և պահում լերթից ուշացողին, նրան՝  
Ով չի լուծել սրտում մի յերկվության հանգույց,  
Ով տատանվում է դեռ յերկու ճամբի վրա:

Փակված ե առ ընդմիշտ, լսիր, լսիր, ընկեր;  
Փակված ե առ ընդմիշտ այն հին, այն մի ուղին,  
Դու, վոր յերեկ մեզ հետ ճանապարհ ես ընկեր,  
Հենց դու այդ որ, այդ որ այն հին ուղին թողիր...

Լայնանում են հիմա այս արտերը, փռվում,  
Միանում են նրանց կանաչի նոր շերտեր,  
Նոր ուժեր են մտնում այս նոր ձեփ կովում,  
Փողփողում ե արդեն հաղթանակը մեր դեմ:

Լիանում ե աչքս, յերբ նայում եմ այսպես  
Անսահման, անթումբ, ծավալուն այս արտերին,  
Լեցվում ե իմ սիրտը, ու բուրում ե՝ ասես՝  
Այնտեղ հաղթության կարմիր վարդենին:

1981

## ԿԱՐՄԻՐ ԼԱԶԱԿՆԵՐ

ՔՐՈՉՍ ԼԱԶԱԿԸ

ՆՅՈՒԱՀԻ ԽՆՁԻԿԱՆԻՆ

Տեսիլներ կան չար, չարաչք,  
Հուշեր սև, անասելի...  
Չես ուզում, բայց, — ի՞նչ արած, —  
Հիշում ես, մարդ ես ելի:

Մեր տուն յեկավ են Հարոն,  
Վոր քրոջս հավանի, —  
Թույրս տասներկու տարու,  
Քույրս անմեղ աղամսի:

Հավանեց! Արին հարսանիք:  
Թրոջս Հարոն տարափ:  
Խսչքան լաց յեղավ Զանին,  
«Ճակտի զիրն եր անիրավ»:

Ցերկու անգամ յետ յեկավ,  
Հայտնեց սրտի մորմոքը,  
Հեկեկաց, հատակին ընկավ,  
Բայց հայրս անողոք եր:

Ամեն ինչ ել կարճ յեղավ,—  
Յես գնաց՝ ճարը կտրած  
Իմ քույրը, խեղճ յերեխա,  
Այլս չտեսա նրան!

Յես տեսա միայն նրա  
Լաչակը, վոր ալնոտ եր.  
Մայրս լաչակի վրա  
Հալիս եր իր կարոտը...

Ու ամեն մարտի ութին,  
Կարմիր տոնին մեր կանանց,  
Սիրտս կարծես պիտ պայթի,  
Հոգիս՝ բացվի, մերկանա:

Այս, գիտեմ քույրս չկա,  
Բայց կանանց դրոշը վոր կա՝  
Կարծես քրոջս լաչակն ե՝  
Նրա արյունով ներկած:

1926

## ՄԱՅՐԵՐԸ

Հերթափոխ ե գործարանում։ Ալիք—ալիք  
Վարդակարմիր լաչակները դուրս են հորդում։  
Ներս ե խուժուս մի նոր հործանք աղսկալի։  
Դործարանն ե կրկին յեռում ու վորոտում։

Իլիկները նորից իրենց պարն են դառնում,  
Մեր որերի հոլովման պես արագ-արագ,  
Ու բամբակն ե անվերջ հոսում առու-առու,  
Թել ե դառնում ճառագայթի նման քարակ։

Խնչ վոր մի բան կանանց սրտից ու աչքերից  
Հոսում ե այդ թելերի հետ անվերջ, անծալը,  
Հյուսվում գործվող կտավների բյուր ծալքերին,  
Ու ժպառում են կտավները ճերմակածալ։

Ցեվ իլիկի ամեն մի դարձ, ամեն պառյատ,  
Ճառագայթի նման ձգվող ամեն մի թել  
Ու կտավի ամեն մի ծալ՝ նրանց սրտում  
Նոր յեռանդի հուր ե վառում, մրցման հրդեհ։

Հերթը փոխվում, նորոգմում ե, գործը աճում  
Ու կապվում ե մեր աշխարհի աճին արագ,  
Ամեն մի հերթ հետն ե բերում մի նվաճում,  
Նորոգվում են միտքը, սիրտը, կենցաղ ու կարգ...

Ահա նրանք, վոր բըղիսեցին դռներից լայն-  
ջրիվ յեկան հսկա բակում, կարծես մի հողմ  
Մի վիթխարի վարդի թերթերը ալվըլան  
Ցրիվ տվեց դաշտի վրա՝ այս կողմ, այն կողմ.

Ցրիվ յեկան, բայց մնացին կապված իրար,  
Վորպես յերգի անքակտելի, շնչող բառեր.  
Կյանքը հիմա Խորհրդային հողի վրա  
Հենց այլպես և սնում սերունդ, բորբոքում սեր-

Ցրիվ յեկան, բայց խումբե խումբ ահա նրանք-  
Հետեւում եմ յես հուզմունքով ամեն մեկին.  
Նրանց դիմքին խաղում ե մի պահառ կրակ,  
Վոր չեմ տեսել վոչ մի ուրիշ մարդու դեմքին:

Յեվ ինչքան վոր մոտենում են այն սպիտակ,  
Նոր շենքերին, դործարանից մի քիչ հեռու,  
Այդ կրակը ավելի յե վառվում հստակ:  
Ու դառնում ե ծիծաղների հոսող առու:

Այդ շենքերում աճում ե մի նոր մարդկություն,  
Վոր սնվում ե ազատ կնոջ մաքուր կաթով, —  
Մի հոյակապ ամբողջության լի և խնդուն  
Սերմիկները՝ վաղլա կյանքի համար ճայթող:

Ահա նրանք որրոցներում սիպ-սպիտակ,  
Վորպես վարդի լի կոկոններ ակնապարար,  
Նրանք այդպես, յերջանկության գեռ անդիտակ,  
Աճ են առնում մի յերջանիկ կյանքի համար.

Յերջանիկ կյանք, վոր կերտվում ե հերոսական  
Զոհողությամբ, պայքարներով դժվար ու թեժ,  
Կերտվում ե նա, ծավալվում ե, աճում, սակայն  
Դեռ բաղխվում են յերկու աշխարհ իրարամերժ:

Ահա նրանք, բանվոր մայրեր, վոր կերտում են  
Բանվորական բանակի հետ նոր կյանքն այդ  
թանգ,  
Ահա նրանք, վոր սընում են, վոր կրթում են  
Այդ նոր կյանքի համար նոր մարդ՝ նոր  
եյությամբ:

1981

ԿԱՐՄԻՐ ՀԱԶԱԿԱՆԵՐ

1

ԽՍՆԴՈՒՆ որին ել հուբնրան  
Յերբեմն մարդ թախծում ե,  
Ինչպես պարզ յերկինքն ամրան  
Թմահաճ ամպե, ձյունեւ

Որերում այս ծաղկող ու շեն  
Յես, պարմանի մի արի,  
Հաճախ վորսում եմ հուշեր  
Լճից անցած որերիւ

Մեր վառ, արևին հանդիպած  
Տեսնում եմ մոմեր շիջող,  
Ու տխուր, տրտում մի բան  
Սողում ե սրտիս միջովի

Բայց յես միշտ հոգեթով մի բան  
Վերցնում եմ հնի ծովից,  
Վոր սիրտս միշտ ձգտի վաղվան  
Ու անցյալը նզովի

Ահա, ահա տեսնում եմ յես  
Մայրիկիս դեմքը պառավ,  
Պատուհանի ապակու պես  
Զմեռվա բուքից սառած:

Տարիներն ահեղ, մոայլ  
Կնճիռ են կիտել դեմքին,  
Ինչպես պող ապակու վրա  
Սառչում են զունչն ու զոգին:

Ահա, ահա տեսնում եմ յես  
Քրոջա՝ փթթած զարուն,  
Տարաժամ փոթորկի պես՝  
Ամուսինն անսիրտ արու:

Տեսնում եմ թե ինչպես նա,  
Քույրս, մի ծազկի ձեփ՝  
Ընկնում ե դեղնած, թոշնած  
Այն անսեր մարդու ձեռից:

Ա ի շողիկ, կարծես ինչ վոր  
 Սառած արեից պոկված,  
 Սառցապատ ապակու միջով  
 Մտնում ե իմ սիրաը բաց:

Ու ճիշս պահած ցավով,  
 Տերը զուռ եմ գալիս մռայլ,  
 Տեսնում եմ մի զեկ առավոտ  
 Բացված աշխարհի վրա:

Այնպես անզուսպ, անհանգուրդ  
 Յեվ տարերային մի տենչ  
 Զարթնում ե, վառվում, աղմկում  
 Բորբոքված իմ սրտի մեջ:

Յես՝ գալիք արեով լի,  
 Յետե՛ խորչակ ու քամի...  
 Ու հնին անդառնալի  
 Դառնում եմ չար թշնամի:

Ո այն, ինչվոր հնում կար,  
Թող մնա այնտեղ խաշած,  
Գովերգում եմ ձեր ներկան,  
Թույրեր իմ կարմրալաշակ:

Մայրիկս՝ տանջված պառակ:  
Ու քույրս՝ կարոտ գարնան.  
Ապակու վրա սառած  
Կհալվեն, կանհետանան:

Ձեր մեջ ինչ կա հարազատ  
Թրոջական, մայրական,  
Նույնն ե, ինչ վոր անազատ  
Իմ մայրիկի սրտում կար:

Նա թպրտաց անոգուտ  
Ու մնաց հնում խաչած...  
Ձեր ներկան եմ քնարերգում  
Մայրեր իմ կարմրալաշակ:

## ՓՈՎՐԻԿ ՑԻԿԻՆԸ

ՔԵզ յերգեմ յես, թե ամենքին.  
Սիրտս լայն ե, անսանձ, աղահ.  
Թեզ յերգեմ յես, փոքրիկ տիկին,  
Թույր իմ, սեր իմ անանձնական.

Ինչ սիրտս ունի՝ ամենքիդ ե,  
Ինչ կաշկա վողջն ամենքին.  
Սերս հստակ ամռան գետ ե,  
Զուր վերցնի թող ամեն կին.

Թեև այսոր յես քեզ տեսա  
Այնպես տխուր, ոտարոտի,  
Բայց իմ սիրտը դարձավ հեսան  
Բոլոր կանանց փակ կարոտին...

Բայց թնչ պիտի յերգս տա ձեզ,  
Կամ իմ սերը անսանձ, աղահ...  
Ձեզ խինդ կտա առատաձեռ  
Մեր նոր կլանքը կարմիր ծագած,

**Մ**ի տիկին մտավ կրպակը դեմի...  
 Գլւիս մեջ շողաց մի հին լուսընկա.  
 Անցած որերի մոռացված յերգ մի  
 Զարթնեց իմ սրտում և մեղմիկ զնդաց  
 Յես սպասեցի. ու դուրս յելավ նա՝  
 Փոքրիկ զամբյուղը լցրած մթերքով՝  
 Այն փոքրիկ, փոքրը տիկինը դեղնած  
 Աշնան թախծալի մշուշի ներքու  
 — Բարե՛ ձեզ, ընկեր... կամ... տիկին  
 այսինչ...  
 — Բարե՛... բայց մվ եք... ո, ընկեր  
 Նորենց...  
 — Այդ վճրտեղ եյիք, ինչպես եք,—ասի.  
 Նա ախուրաբառում դեմքը վոլորեց  
 Միասին անցանք մենք փողոցն ի վեր,  
 Նրա թել ց կախ հոգսերը իր տան,  
 Իսկ իմ սրտից կախ մի կնոջ պատկեր,  
 Անցած որերի հուշերի շղթան,

Պատմելը արժեք չունի,  
 Ինչ խոսել բարակ յերկար...  
 Նախ գյուղում ուսուցչուհի,  
 Հետո յել քաղաք յեկատ

Աղջիկ եյի ժպտերես  
 Անդադար, աշխույժ, տոկուն,  
 Բայց գերի թոչունի պես  
 Փակեցին տան վանդակում...

Այսին՝ սրտի հսկիչ,  
 Յերեխա՝ վոտքի կապանք.  
 Որերս՝ հոգս ու կոկիծ,  
 Կանքս՝ կարոտ տառապանք:

Դառնալով տան մեքենա,  
 Յես կյանքից յետ մնացի»,  
 Ու սրբեց աչքերը նա,  
 Աչքերն անուզ՝ կանացի:

Այնքան գեղնած եր այդ փոքրիկ կինը,  
Աչքերի շուրջը կապուտակ բակ եր,  
Աչքերում տեսա այն անզոր քենը,  
Վոր գալարվում եր իր կըծքի տակը:

Այրը ծծել եր նրա շրթերը,  
Յերեխան քամել յերկու ստինքը...  
Մեկը հագեցել, մյուսը փթթել եր,  
Իսկ ի՞նքը, ի՞նքը.— թոշնել եր ի՞նքը:

Չեր կարողացել տոկալ այդ կինը,  
Գուցե անկոիվ հենց հաղթըվիլ եր,  
Յերիտասարդ ե, բայց ի՞նչ ե գինը,  
Արդեն կտրած են նրա թևերը:

Չեր կարողացել... հին տունը սարդ ե,  
Սարդը նրա շուրջ վոստայն հինել եր.  
Շատ սովորական եակ եր մարդը  
Դեռ այնքան հեղտ չեր հերոս լինելը:

**Ե**ւ ուրիշ վոչինչյ վոչինչ չպատմեց  
 Հին ընկերունիս, այդ փոքրիկ կինը,  
 Բայց ինչ վոր ասաց՝ ասածով մատնեց  
 Հին ընտանիքի ամբողջ ներքինը!

Յերբ հասել եյինք ակումբի դռան,  
 — Ներեցեք, ասաց; յես զտապում եմ,,  
 Ու յես սեղմեցի թույլ ձեռքը նրայ  
 Վոր դողդողում եր փակված ափում իմ:  
 — Հին ընկերներ ենք... նույնիսկ... հիշեմ  
եք...

Մեկ անցեք՝ մեզ մոտ, տղայիս տեսեք...»  
 Հեռվում կիտվում եր աշնան մուժ ու մեզ,  
 Աղոտանում եր մի պատկեր լուսե:

Յես ակումբ մտա,,, Ակումբ գնացի  
 Ընկերներիս հետ զահաւատ խաղալու...  
 Իսկ նա տուն գնաց, յերեխային՝ ծիծ,  
 Ամուսնուն կիրք ու կերակուր տալու:

**Ա**ռըհրդային արեւ, դու հար հզոր  
 Ու հաղթական յելնում ես...  
 Փոքրիկ կինը, վոր տեսա այսոր  
 Դեռ հին տան մեջ դեղնում եւ

Այսքան կամք, այսքան մկան և ուժ...  
 Քրտինք եւ մեր հոգին ել.  
 Բայց այն չորս պատերի մեջ մշուշ  
 Դեռ դեղնում եւ այն կինը

Մեր ուժը նոր կյանքի կառուցման  
 Համար շատ հզոր, վառ եւ,  
 Բայց սրբել ներսը, ներսը հին տան  
 Այնքան դժվար, դժվար եւ

Միայն դու, արեւ մեր հաղթական,  
 Վոր հար ու հաստատ յելնում ես,  
 Պիտի չորացնես գաղջ ողը այն տան,  
 Ուր փոքրիկ կինը դեղնում եւ

## ՄԵՐ ՄԱՆՈՒԿԻՆԵՐԻ

Ծ Խ Լ Բ

Մ' ի յերեսայիւ

Յելար դու, կանաչ ծիլ, վորպես  
Ճուտի կտուց՝ ձվից ծլած。  
Այն մի եր, վոր թխսկան մոր պես  
Թև լույս աշխարհ հանեց հանկարծ։

Արեց վեր, հրեթել կծիկ,  
Զգում ե քեզ, ձգում ե քեզ.  
Վոսկե մի շող ծայրը կտցիդ՝  
Այդ շողն ի վեր բարձրանում ես։

Կանաչ ծիլ, դու զմբուխտ անգին,  
Մանկություն ջինջ ե անապակ.  
Նոր նյութված մի չքնաղ կյանքի  
Առաջին ձե, պայծառ հասակ։

Սպասումով նայում եմ քեզ,  
Կանաչ իմ ծիլ, դեռ նոր ծլած,  
Իմ սրտի մեջ, կյանքում, վորպես  
Հույսի մի շող վառ ցոլցլաւ։

«ԽՈՒԺԱՆԱԿԱՆ»

Յես ել ձեղ պես եմ յեղել՝  
Մի գող ու զբջիկ մանուկ.  
Ու հիմա հացի տեղ ել  
Ձեր հույզերն եմ գողանում:

Դրում եմ ահա յերգեր,  
Վոր ձեր ցավը յես մեղմեմ,  
Բայց յերգս թույլ յեղեգ ե,  
Խչպես դուք ձմենուլա դեմ:

Կգան մեր որերն ուզած,  
Ո՛ կգան շուտով, անդամ  
Կգա մի պայծառ դուսան  
Գրելու «Խուժանական»:

Վեր տեղից պիտի գա նա  
Հզոր ու արեգնափայլ  
Այնտեղից, ուր դու հիմա  
Երջիկ ես, անտուն լեզրայր:

Իու ինքդ, ինքդ ես այդ,  
Կդա նա հենց ձեր միջից,  
Զայրույթի պես հրացայտ,  
Միրո պես մաքուր, վճիռ:

Պիտի գա նա, պիտի գա,  
Այդքան մանուկներ անտուն  
Հիմա վորպես խուլիդան  
Չպիտի մեռնեն տրտում:

Արդեն, արդեն ջարդել ենք  
Կարիքի վողնաշարը.  
Դժվարն արդեն հարթվել ե,  
Կերտում ենք նոր աշխարհը:

Հիմա, հիմա դուք արդեն  
Փողոցից մտնում եք տուն...  
Կյանքը կղառնա հանդես,  
Ձեր տունը տոն ու խնդում...

Գուսաններ պիտի վոգեն  
Ձեր «Եռժանական» վեպից  
Գուսանական նոր յերգեր  
Հպարտ, անողոք, եպիկ:

1926

ՓՈՔՐԻԿ.ԱԴՐԻՆԵՆ

Ո վոքրիկ ես դու  
Իմ լավ Աղբինե.  
Թո վոքրիկ սրտում  
Ճավեր չլինեն:  
Զլինես տրտում,  
Ճամփ այդ հնին ե,  
Մեր կյանքում խնդուն  
Դու ըախտ հորինե.  
Թող աչքերդ արթուն  
Մրատես լինեն:  
Բալց դու զվարթուն  
Յերազներ հինե,  
Զքնաղ մանկություն,  
Թո վմբ տարին ե.  
Մեծանում ես դու,  
Իմ լավ Աղբինե:

1984

## ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

1

Անցնում են, ահա, տեսեք,  
Մանուկներն այնպիս կայտառ....  
Մանուկ հմ յեղել յես ել,  
Բայց ինչպես սիրոս խայտար,

Մի որ որերից այն հեզ  
Զգացի՞ թե ինչեր կան,  
Իմ մտքով անհամվ յիրբեք  
Խնչ ե ապագան, ներկան:

Արեից գեթ մի շողիկ  
Իմ փոքրիկ սրտում ցորմց...  
Գիշեր,—ցեխոտ անկողին,  
Տերեկ,—միշտ զրկանք ու լաց»

Անցնում են, ահա, տեսեք  
Մանուկներն արև հաղած.  
Հիւում եմ հիմա յես ել  
Մանուկ որերս հանգած:

Հիշում եմ, զիտեք, հիմա,  
 Յերբ սրանց յես նայում եմ,—  
 Որերս գառի պես հիմար,  
 Վոր հեռալից գեռ մայում են...

Կարծես թե պարսատիկով  
 Ճնճղուկ եմ վորսում ելի...  
 Պատմում ե մարոն Տիգոն  
 Զրույցը Հայկ ու Բելի

Մազլցիլ պատի վրա՝  
 Բներ եմ քանդում ագան...  
 — «Աշխահը քանդեց, առավ  
 Արտաշեսն աշխարհակալ»:

Մորթում եմ հպարտ ու գոհ՝  
 Ճուտերը նետում եմ ցած...  
 Իսկ մեր վարժապետ Տիգոն  
 Ինչպիսի՞ բաներ ասաց:

**Շ**վռամ և թե հորս ծեծից  
Ճշում եմ մայրիկիս գեմքին...

Նրանց ձայնը հասնում ե ինձ՝  
«Վողջույն Մայիսի մեկին»:

Իմ ականջն ամուր ճգում են,  
Սիրաս, սիրաս չնվազի..

Նրանց ձայնը զբնգում ե՝  
«Մենք, կոմունալի ծաղիկ»:

Թվում ե՝ լալիս եմ, ճշում.  
Դպրոցից փախչում մտադար...

Կրկին նրանց ձայնն և հնչում՝  
«Մերն ե, մերն ե ապագան»:

Մըրում եմ աչքերս ուռած,  
Շոշափում գլխիս ուռույցը...

Նրանք կանչում են. — «Ուռած,  
Նոր կյանք, ապատ կյանք կառուցել».


Ա եհիմաստ ե կյանքը հիմա,  
Անիմաստ մանկությանս որեր,  
Իսկ դուք, միս, գառի պես հիմար,  
Մուժի մեջ մայել եք, կորել

Մանուկի ինչն ել պակասի՝  
Նրա սիրտն ե լի, հոգին՝ լի,  
Իրեն թոռ ե հաշվում Մարքսի,  
Թշնամի՝ կազիտալի:

Ամեն սիրտ, ինչքան ել վոր դա  
Մանկական ու քնքուշ լինի,—  
Լի յե, լի, ընդլացուն, հորդած  
Մշտավառ հրով լենինի...

Միայն դուք յեղաք այնքան սին,  
Ո՛ իմ խեղճ մանկության որեր,  
Ի՞նչ յերգեմ, ասեմ ձեզ մասին,  
Վոր անցաք տխուր, դառնորեն:

ԵՐԱՇԽԱՔ



## ՅԵՐԳԵՐ ՅԵՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ

«ԽՆՔՆԵՐԴՈՒԹՅՈՒՆ»

Յերգում ես անհուն խորքից  
Թվում ե՝ յերգդ քոնն ե,  
Ծնել ե նրան հոգիդ՝  
Ծնել՝ սրտիդ անհունը։

Թվում ե քեզ ես յերգում,  
Քո խինդն ու քո կարոտը  
Սրտիդ մեջ յերբ իրիկուն,  
Ցեղ կամ թե առավոտ ե։

Թվում ե թե անպակաս  
Սիրտն ե յերգիդ աղբյուրը,  
Ու աշխարհը պապակած  
Խմում ե նրա ջուրը։

Մինչ դեռ դու, դու յես ծծում  
Կյանքի դյութիչ հյութերը,  
Նա յե քեզ կերտում, թրծում,  
Քեզ անհայտ՝ քեզ դյութել ե։

Գտել ես դու մի «յերկու»,  
Կյանքը՝ զատ, դու իմաստն ես...  
Բայց քեզնով ի՞նչ ես յերգում,—  
Նա ամբողջ, իսկ դու մասն ես:

1928

## ԶԱՐԿ, ՍԻՐՏ ԻՄ

Զարկ, սիրտ իմ, հատու զարկով զարկ.  
Մի չոկտեմբեր,—հազար գարուն.  
Թող մի զարկովդ զգամ հազար  
Հազար զվարթ զանգահարում։

Ինչու թույլ թպրտավ ինչու  
Տենչալ անթիվ՝ բայց մեղկ գարուն,  
Վորպես խեղճ թևահատ թռչուն,  
Վոր չունի թև, թափահարում։

Այս, այս ինչ վոր ուզում ենք մենք՝  
Դարեր անցավ մեր մի զարկով,  
Անցնում ե վերելքից վերելք  
Դեպի գալիքն անմահ փառքով։

Զարկ, սիրտ իմ, խոր ու գերզգա,  
Պետք չե հազար տարտամ գարուն.  
Թող մի զարկովդ հազարն զգամ,  
Հույզի հազար զանգահարում։

## ՄԱԹԱՌՈՒՄ

Այս գործը, պայքարը, վերելքը  
Ծնում են, սնում են յերգերս.  
Սրառմ իմ պայքար ե, վերելք ե,  
Պայքար են, վերելք են յերգերս:

Կարմղ ես ասել թե վորտեղ ե  
Ամբողջը, և վարն ե մասնիկը,  
Յերբ գործդ յերգի մի նոր տող ե,  
Ու յերգդ գործի մի մասնիկ ե:

Թվում ե հաճախ քեզ՝ թե յերգդ  
Անջատ ե գործից քո, անկապ ե.  
Քո յերգը, դու, գործդ, յերեքդ  
Տարբեր եք, չկա սերտ շաղկապը:

Յերեքը անջատ չեն, ամբողջ են,  
Յեռում են, փոխվում են, բաղխվում են.  
Մեկում դու զգա իմ ամբողջը,  
Ամբողջն իմ մասերի բաղխումն ե:

Ահա յես, իմ յերգը՝ կյանքի մեջ,  
Բնկնում ենք, յելնում ենք, պայքար ե.  
Յես ինքս, ամրողիս, կյանքի պես,  
Իմ դեմ եմ սրում մերթ պայքարը:

1981

## ՅԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ

Ճակատիս նա իր կնիքը զարկել ե  
ու սրտումս նոր հույզեր ե վառում...  
Հիմա հատու յեն սրտիս զարկերը,  
թեվ խնդությունս՝ առու-առու

Իմ յերգերն արդեն անխառն ու պարզ են,  
ինչպես ցնցուղը արեգակի.  
Յերգս հոսում ե, վորպես ավազը՝  
Սիրտս ե յերեսում յերգերիս տակին:

Այս խնդությունը, այս պայծառ սերը  
թեվ այս կարկաչը ուրախ, հոգեթով,  
իրենց թևերը ազատ պարզել են,  
Փոխվել ե, կարծես, կյանքը հեքյաթով:

Իմ այս նվագը, խնդության յերգը  
Մենակ իմը չե, ձեզանից թաքուն,  
Այդ յերգն զգում են, լսում ամենքը  
Թեվ մեր որերի կամքն ե նվագում:

Ամեն մի տողը, ամեն մի բառը  
Հենց ամենքից եւ և ամենքիս.  
Ինչքան հատու յեւ դառնում պայքարը,  
Այնքան հստակ եւ կարկաչը յերգիս  
Յերգերիս նա իր թափը տվել եւ,  
Նոր թրթիռներ եւ իմ սրտում վառում,  
Հզորանում են վոգուս թերը,  
Խինդս հոսում եւ առու-առու:

1929

ԹԱՆԱՐԱՄԱՆԸ

Ճերմակ, ճերմակ հախճապակի,—  
Վերը՝ կիսանդրին, իլիչը,  
Կիսանդրու առաջ՝ թանաքի  
Խստաղեմ ու մուգ լիճը:

Դիտում, խորհում եմ ինքս ինձ,  
Զգում զերագույն հաճույք,—  
Թվում ե թե՝ դա «Զագեսի»  
Մանրանըկարն ե անպահույն...

Գալարվում ե ղեկավարի  
Արձանի հայցքի տակ  
Զրի տարերքը վիթխարի,  
Փրփրուն, կոհակ-կոհակի,

Դառնում ե նա շարժիչ ուժ,  
Դառնում ե լույս ու կրակ,  
Բորբոքում կամք ու աշխույժ  
Ու փոխում մեր կյանքն արագ:

Դառնում ե միս ու արյուն  
Պատղամը ղեկավարի...  
Նրա կամքն ե հրահրում,  
Կառուցումը վիթխարի...

Յեկ ամեն մի՝ տող գրելիս՝  
Նայում եմ նրա կիսանդրուն,  
Մաքերիս խուրձերը խոիվ  
Նրա հայացքով սանրում։

Խորհում եմ լուռ ու հանգիստ,—  
Ինչպես այնտեղ, «Զագեսում»,  
Այստեղ ել նայվածքը խիստ  
Միևնույն բանն ե ասում։

Այստեղ ել տողերով յերգիս  
Թող ույժ և ջերմություն դառնա,  
Դառնա լույս, ընթացք տա կյանքին՝  
«Զագեսի» մանրանը կարն այս...»

Ճերմակ, ճերմակ հախճապակի, —  
Վերը՝ կիսանդրին, իլիչը,  
Կիսանդրու առաջ թանաքի՝  
Ուժերով՝ հղի լիճը։

Յելնում են նրանից տողեր,  
Վորպես հոսանքն ույժի, լույսի,  
Կառուցման յերգով վողողեն  
Յեկ շարժեն ուղեղ ու սիրտ։

## ՆԵՐԿԻՆ ՃԱԿԱՏ

Դավաքական կուռ կամքի պողպատե նոր հրաման,  
Կովի ամբողջ ճակատով տեղաշարժ ե, զորաշարժ,  
Ընթանում են միջտ առաջ, խորանում դիրք, խրամատ,  
Միասնական գրոհ ե, միասնական մեծ արշավի:

Բարձրանում են հսկաներ, փոխում տեսքը մեր յերկրի,  
Ու նրանցով փոխվում ե եյությունը մեր կլանքի...  
Մեր ընթացքը արգելող թշնամական ձեռքերին  
Հատու հարվածն ե իջնում պողպատակուր բանակի:

Քանդրվում են արմատներ ցնցումներով, սուր ցավով,  
Վորպես ատամն ե քաշվում մի ցնցումով ակցանի,  
Արդեն, արդեն անցնում են ցնցումները անցավոր,  
Վերջին դիրքի վրա մեր դրոշը պիտ ծածանի:

Դեռ ճակատներ կան համառ, դեռ կան խըրթին  
Ճակատներ,  
Քողված մեռնող աշխարհի ճահճախոտով, մամուռով,—  
Դա հույզերի, դա սրտի, ներաշխարհի ճակատն ե,  
Շառաչների դեմ հաճախ առտարբեր ու փակ դուռով:

Սակայն, ահա, դրոհի հարվածներից հաղթական՝  
Նահանջում և թշնամին դեպի վերջին խրամատ,  
Խնչքան կուզե՝ թող լարի արնոտ դավեր ու թակարդ,  
Վերանում և հիմա նա, ապրում վերջին դրաման։

Այս հոյակապ բաղխումից, տեղաշարժից ընդհանուր,  
Ճընցըվում են սյուները մարդու ներքին եյության,  
Մարդն և փոխվում ժամե ժամ՝ ստանալով խթանում  
Փոփոխումից ընդհանուր, վոր բերում և առորյան։

Հալածվում և թշնամին, վոր շատ անգամ աննըկատ  
Ապրում և մեր հույզերում ու յերբեմն գերում մեզ.  
Դեմ առ դեմ ենք պայքարում, մաքառում ենք ան-  
• ընդհատ,

Ու հերոս ես մեծանուն, թե հաղթում ես ինքդ քեզ։

1981

## Մ Ա Յ Թ Ե

**Յ**ես ապրում եմ և քո սերն ապրում ե իմ մեջ,  
իմ մայրենի յերկիր, խորհրդային իմ հող.  
Շաղկում ենք յես ու դու զվարթ, վոսկեառեչ,  
Ու յերբ ինձ եմ յերգում՝ քեզ եմ ասում ներբող.

Վորալես քնքուշ մանուկ լիրիկական, վճիռ՝  
Հիմա փարվիլ եմ քեզ, հերոսական իմ մայր,  
Ու աչքերիդ խորունկ յերկնանման լճից  
Պայծառ մեր ապագան ժպտում ե ինձ հիմա:

Հերոսությունը քո ե' իմ կյանքի վրա  
Դնում ե կնիքն իր խոր ու անջնջելի...  
Դարն ե փոխվում ահա իմ աչքերի առաջ,  
Ցեվ յես այսոր մյն եմ, ինչ վոր յերեկ չեյի:

Դեռ իմ սրտի վրա կան անցլալի վերքեր,  
Ասղընտում են նրանք յերբեմն ասեղասեղ,  
Ու յերբ ուզում եմ քեզ սրտիս խորքից յերգել՝  
Տխուը խոսքեր ել կան, վոր չի վինում չասել

Բնդունիք իմ յերգը, վորպես լաց ու ծիծաղ,  
Ու թե զանում ես դու, վոր իմ լացից հիմա  
Կարող ե մեր դավող, նենք թշնամին ցընծալ,—  
Յեղի՛ս սրտանց սիրող, սակայն դաժան մի մայր

Թող քո սերը լինի նույնքան խոր ու անդութ,  
Ինչպես սերը այն մոր, վոր հիշեցի հանկարծ  
Թո անցյալից և իմ, տարիներից այն մութ,  
Հիմա այնքան հեռու մոխիրներում հանգած...

Հալածական,—վորպես չար ուրուրի ահից՝  
Դարնանային ձագեր,—մի պուրակում կանաչ  
Մենք թագնվել եյինք, և այդ դաժան պահին  
Մեզ վորոնող խուժանն ահեղ և արյունաչ

Թաղստոցին մեր խեղճ մոտենում եր արդեն.  
Մեր փրկության թփերն այդ խեղճ ու սրբազն  
Կարող եյին դառնալ զերեզմանի զարդեր,  
Յեթե մեր պուրակից թռչեր թեթև մի ձայն:

Մեր աչքերում պահած սոսկումն ամենաղոր,  
Շնչառություն և ձայն խեղճած մեր կոկորդում,  
Նայում եյինք ահով շարժումներին այն մոր,  
Վոր զարհուրած՝ կաթ եր տալիս գրկի վորդուն...

Տեսնում եմ յես այն մոր աչքերը լի սիրով,  
Ու զարհուրանքն աճող խլրտում ե այնտեղ...  
Լոռությունը կյանք եւ Մահն ե անցնում սրով:  
Լոռությունը կյանք եւ Զայնը՝ վախճան ահեղ...

Ու մանուկը գրկի հանկարծ ճշում ե սուր,  
Մվ գիտե ինչ ցավի, կամ խնդության համար...  
Ցեղ մայրական ձեռքը համբուրելի և սուրը  
Նրան խեղդում ե սկ դահճի ողի նման:

Մահը անցնում ե կույր, ու վայրկյաններն ահեղ  
Հաջորդում են իրար ու դեպի կյանք սահում...  
Մայրը սրտում թող իր կսկիծները պահե.  
Այնքան կյանքեր փրկեց մի մանուկի մահով...

Խորհրդային յերկիր, թեև ահիւմահի  
Վոչ մի տագնապ չունես, հիշյալ այն մոր նման,  
Թշնամիներ բայց կան դաժան ու դիվային,  
Վոր մագիլներ սրած քեզ են դավում հիմա:

Ու յեթե իմ յերգը նրանց արնոտ դնչին  
Կարող ե տալ թեկուզ մի չարիմաստ ժպիտ,—  
Քո մայրական ձեռքով,—յերբ իմ ձայնը հնչի,—  
Անմեղ իմ կոկորդը դաժանորեն հպիր:

1980

## Ո ՏԱՐ ԿԱԹԸ

Ահա յես տուն եմ դարձել  
Աշխատանքից՝ աննըկուն,  
Յեվ հուզական նոր դանձեր  
Շողջողում են իմ հոգում,  
Հանքերից այն, քրտնաթոր  
Ուր հոգնել եմ և տըքնել  
Մնացել են իմ սրտում  
Միայն վոսկու հատիկներ:

Ահա դարձել եմ յես տուն,  
Դանձերից իմ խնդության  
Յեվ խոհերից իմաստուն  
Ուզում եմ ձեզ բաժին տալ  
Իմ զավակներ, իմ յերգեր,  
Իմ պտուղներ աշնային,  
Վոր իմ արնով եմ յերկնել  
Յեվ տվել մեր աշխարհին:

Սիրով մի խոր ու անձակն  
Յես շոյում եմ, փայփայում  
Վարսերը ձեր այս դեղձան,  
Ձեր հոգու խորքն եմ նայում.

Ու... իմ սրտում կասկածի,  
Խանդի շիթեր են կաթում...  
Զեր հոգու մեջ դգացի  
Ոտար հույզի խլոտում:

Տագնապում ե սիրտս հար  
Խանդից այս նոր, նորաձե...  
Մի թշնամի և ոտար  
Մտինքից կաթ եք ծըծել...  
Վժրտեղ ելիր, պահապահն,  
Միտք իմ զգաստ, անհանդիստ,  
Վոր թշնամին գաղտնաբար  
Կաթ և տվել դավակիս:

Թունավորումն այս սակայն  
Թող ահազանգ դառնա քեզ,  
Վոր յերգերս հուղական,  
Զարաճնի մանկանց պես,  
Զթողնես դուրս, փողոցում,  
Առանց արթուն հսկումի,  
Յեվ չլինի խանդը ցուրտ,  
Վոր հիմա յես զգում եմ:

1980

## ՄՈԼԱԽԱԾԵ

Վոսկեգլուխ հասկեր՝ դեղձան մազով,  
Զեփյուռների յերգով ծածան-ծածան...  
Համայնական հնձի յերգը այսոր  
Սրտիս անծայրածիր արտից անցավ:

Յելս, յելս, վոր յես նույնպես հընձեմ  
Իմ յերգերի բերքը համայնական.  
Տեսա՝ կային խուրձեր, յերգի խուրձեր,  
Վորոնք իմը չեյին, վոչ ինձ համար յերգած։  
Վոսկեհատիկ հասկեր՝ շեկ ցորենով հղի,  
Վորոմը կա արտում, մոլախոտեր,  
Իմ յերգի մեջ, ահա, վարոմի պես դեղին,  
Այդ տողերը ոտար որորվում են, և, դեռ:

Ահա հնձից հետո՝ աղնանացան,  
Մաքուր հատիկ և պետք, վոր սերմես դու.  
Սիրոս աղմկում և մեքենաձայն,  
Կատարվում և հույզի, յերգի զառւմ։

1981

205

## ՔՆԱՐԱԿԱՆ

Իմ յերգերում բարախում ե իմ սիրտը,  
իմ արյունն ե կարկաչում իմ յերգերում,  
Բայց իմ սիրտը արդյոք միայն մի սիրտ ե,  
Յեվ այդ սրտում միայն իմ խինդն ե լեռում,  
Կամ տիրության վայրկյանները անցողիկ,  
Վայրկյանները մաքառողի, թախծողի:

Ո՞վ իմ մոտիկ, կամ հեռավոր ընկերս,  
Զես զգում դու խլուամը հույզերիդյ  
Յերբ կարդում ես քնարական յերգերս.  
Զես զգում դու մի ծանրություն ուսիրիդյ,  
Մի ծանրություն, վոր ուսերից պոետի  
Անցել ե իր յերգերին ու իր սրտին:

Մարտնչումի, կառուցումի ընկերս,  
Իմ յերգերում յեթե գտար խորթ մի բան,  
Դա քոնը չե, դա իմը չե, դա հետո  
Հնից յեկած մնացորդ ե գաղտնապահ,  
Վոր հալվում ե, վոր կորչում ե որից որ  
Վոգեփոխման ընթացքի մեջ այս ցնցով:

Յես քամում եմ, յես զտում եմ հույզերս  
իմաստության, կռվող կամքի քամիչով,  
ու տալիս եմ միտքս, կամքս ու սերս  
Մեծ կառուցման պայքարներին անզիջում,  
Թե իմ յերգում խորթ մի բան ե սպրդում,  
Այդ ել քամիր, ընկեր, այդ ել զտիր դու

1981

Յ Ե Ր Գ Ը

Անտիպատրոս հելլենական մեծ բանաստեղծ,  
Դեռ լսում եմ յես քո յերգը՝ խնդության ճիշ,  
Վոր հոսում ե այնպիս հստակ, այնպես անեղծ,  
Հազարավոր տարիների մուժի միջից:

Նման ե քո յերգը խարտյաշ, վճիտ մանկան  
Այն առաջին կանչին ցնծուն, բերկրալի, գոհ,  
Վոր թողնում ե սրտանց, յերբ առաջին անգամ  
Խաղալիք ե տեսնում, յերջանկանում հոգով:

Արևի շուրջ քանի՛, քանի՛ հազար անգամ  
Խուլ պտույտը յեղավ մեր այս հողագնդի,  
Մեռավ քանի՛ սերունդ, վորքան ձայներ հանգան,  
Բայց քո յերգը հասավ այս մեծ մեր սերընդին:

Զաղացքարի այն առաջին պտույտի մեջ  
Եերջանկության մի նոր գարագլուխ տեսար,  
Եեվ քո սիրտը աճեց, բացվեց լուսեառեշ,  
Եեվ ունեցար հույզեր, հույզեր հազար տեսակ:

Ու յերկնեցիր յերգդ և պարզ, և միամիտ,  
Այդ պարզության մեջ իսկ խորիմաստ ու հզոր.  
Ու քո յերգով՝ ահա, դարեր հետո, դարիդ  
Ամբողջ տեհնչը, շունչը հասկանում եմ ալսոր.

Քո ալդ յերգից հետո, ջրաղացի առթած  
Խնդությունից հետո, վորքան մահ ու անկում,  
Քանի վերելք, վայրեջք ու մարտեր սրարլած  
Հոլովվեցին արնով և արցունքով կյանքում,—

Մինչև մարդը հասավ ալս անյերկրորդ կովին,  
Ալս վերելքին՝ դեպի նոր, անարցունք մի կյանք.  
Ալդ մենք, ալդ մենք բացինք ալս սահմանում մի  
վիճ,  
Ալդ մենք ճորտության դեմ վերջին մարտի յելանք:

Մարմնավորվում ենա՝ մեր արլունով ալսոր՝  
Անցած հազարավոր տարիների մարդկանց  
Մեծ յերազը ահա, արմատանում հզոր,  
Հին Մոլոխի սրտին վերջին սուրը դարձած:

Ո, Անտիպատրոս, նա մեծ ե, անչափելի,  
Վոչ թե քո գետափնյա ջաղացի պես մի բան,—  
Առաջին կալանն ե ալն՝ նոր ճամբաների,  
Վորով արշավում ե յերթը նոր մարդկության:

Քո ջաղացը փոքր եր, նույնպես ապրումը քո,  
Բայց նրա դեմ լերզը քո՝ վորոտում ե մեծ,  
Իսկ այս նոր կլանքի կերտումը քրտինքով,  
Այնքան վիթխարի լե, իսկ մեր լերզը՝ տիեղծ։

Վոչ թե նվաստացումն ե մեր ձայնը բանդել,  
Յեկ վոչ հոգնածությունն ե մեր լերզը խեղդում.  
Ո՛, վհշ, մենք ել մեծ ենք՝ ձեր մեծության հանդեպ,  
Բայց մեր գործի հանդեպ մեր լերզն ե թվում թուլլւ  
Այնքան մեծ ե գործը, ճակատն այնպես ե լայն,  
Հերոսությունն այնպէս ընդհանուր և ցնցող՝  
Հաղար տարիներ կուտակումից լելած,—  
Վոր ուզում ե իր պես անհուն լերզերի ծով։

# ՍԻՐՈ ԹԵՐԹԵՐ

ԳԱՐԱՆԱՑԻՆ

Աքա՛մայիսին յեզ Աքաքսուն

1

Յերբ ձնհալն ընկնի, ձլունը հալչի,  
Ալնքմն թովչութլուն, ալնքմն հմալք  
Կալող և ունենալ մի աղջիկ,—  
Կալծկլտուն աչքեր, վարսեր քումալթ...

Իմ սիրտն ել ինչպես իր հուլզը պահի,—  
Սիրտս արնավառ դրոշի հանգույն,—  
Ինձ թովում և քո կրծքի վրալի  
Մետաղե դրոշը հրագույն:

Գարունը ալնքմն ծաղիկ, ալնքմն...  
Ով ինչ բախտ-ծաղիկ ուզի՝ քաղե,  
Քո կրծքի վրա կարմիր ծաղկած  
Իմընաւ դրոշը մետաղե:

Վոչ մի ծաղիկ ալնքան հրապուլը  
Զի վրելու իմ սրտի վրա,  
Վորքան քո կրծքի ծաղիկն անբուլը՝  
Մետաղե դրոշը հուրճուրան:

**Պ**արնան արել կալծկլտուն,  
 Գարնան բուլրերը կիզիչ...  
 Աղդ թնձ և զարթնել իմ սրտում,  
 Վոր հուզում, կիզում և ինձ:  
  
 Արեից մի կտոր կրակ.  
 Վառվում ե, ահ, իմ սրտում.  
 Հոսում են յերակե յերակ  
 Լուլսերը վառ, բոցկլտուն:  
  
 Կալծակվում են իմ բիբերում  
 Գարնանալին բլուր հուզել.  
 Ինչպես շեկ կալծակն ե ալբում,  
 Ուզում եմ յես քեզ կիզել  
  
 Բալց հպարտ քո կրծքի վրա  
 Դու կարմիր դրոշ ես զարկել  
 Հուզերիո դեմ հուրիսուրան  
 Անսովոր մի շանթարգել

**Գ**արունը վորքման խրթին գործ  
Պիտի մեր ուսին բարդե,  
Վոր իմ ճակատի քրտինքով  
Ալտերիդ բացվեն վարդեր:

Կառուցման սրբազան մի տեսչ  
Պիտի մզե լերկուսիս,  
Վոր մանենք մեծ ստեղծման մեջ,  
Վոր քար առնենք մեր ուսին:

Կառուցման հզոր պահին այդ  
Պիտ լեցնեն ըստոր խնդութլուն  
Վիժանուտ վարսերդ քումալթ  
Գարնանալին իմ սրտում:

Կեցվի սիրտս՝ վարար  
Վարսերիդ պիս՝ հուզզերով.  
Ալդ պահին մենք կզգանք ծարավ  
Վեհիմաստ մի նոր սիրու:

## Ն Ա Մ Ա Կ

Սիրելի ընկեր և սիրելին կին,  
Սպասում ես դու անհանգիստ, մռալլ...  
Ի՞նչ պատասխանեմ յես քո նամակին,  
Վոր համառում ե սեղանիս վրա:  
Նրա տողերը կարծես Ամուրի  
Պրկած աղեղի սլաքներ են սուր...  
Թվում ե՝ վոչ թե կարդում եմ լոին,  
Այլ քո կարկաչող ձալնն եմ յես լառմ.  
Յեզ քո շնչի տակ վթթում են, ծաղկում  
Վարդերը հուլզերիս՝ անթիվ, անթիվ...  
Դուրսը ցուրտ ե, ձլուն... ինչ վարդեր...

ախ քո

Սիրո նամակն ե մեղկ ու ոռմանտիկ:  
Գուցե նրանից, նրանից ե ալդ,  
Վոր դու ալրում ես ինձանից հեռու,  
Այնտեղ, ուր ծովն ե ցոլում լուսարծաթ,  
Իր մշտականչ ափերը քերում:  
Յեզ չգրկելով քո մարմինը պիրկ,  
Գհամբուրելով շուրթերդ հասուն,—  
Եերեմն յես ել այսպես ոռմանտիկ,  
Անմարմին ինչ վոր սեր եմ յերազում:

Գիտեմ, կարոտդ և հուրն ալդ ներարկում  
Ու հուզում սիրտս մի քաղցր դողով...  
Կհանդարտվի՝ թե հագնեմ վերարկուս  
Յեվ լենեմ փողոց.  
Կմնա միայն խոր և իմաստուն  
Սերը՝ հուզերիս հատակում նիրհած,  
Յերբ հեռուներից վերադառնաս դու,  
Կժպտա ուրախ ծաղիկով իր բաց:

\* \* \*

«Ամեն սիրո մեջ,—գրում ես դու ինձ,—  
Մի քիչ ռոմանտիզմ և քնքշություն կա,  
Սերը սիրում ե կարոտ ու թախիծ,  
Մշուզոտ ափեր անհայտ, հեռակա»:

Սիրելիս, կլանքիդ ռոմանտիզմն ե ալդ,  
Վոր ցոլանում է սիրուդ մեջ անգոհ.  
Յեթե չլիներ ալդ սերը վճառ,  
Նա պիտի պոռթկար ուրիշ ակունքով:  
Մեր սերը լեղավ այն լճակը ջինջ՝  
Նիրհուն և նիրհուն, քնքշությամբ գերող,  
Վորի թովչական ջրերում՝ աննինջ  
Տեսար քեզ ինքդ՝ տխուր աչքերով:  
Ու քեզ թվում ե, ով ել վոր նալի՝  
Նույն տխուր դեմքը ալնտեղ կերերա,  
Նույնիսկ արել, ժպիտ լերկնային,  
Նրա ջրերում տրատում կերեա:

\* \* \*

Զուգաղիպումն ալս կարծես հեզնում և  
Մեր քնքշությունը, սերը հիմնովին,—  
Նամակդ թողած հիմա գնում եմ...  
Ժողովի:

Յես, բանաստեղծս, վոր իմ սիրո մեջ  
Յերբեմն ակամա թեքվում, ընկնում եմ.  
Դնում եմ հիմա մղելու բանավեճ  
Թեքումների դեմ...

Պոետն լերբեմնի՝ լեթե հողնում եր,  
Կյանքից թեքվում եր դեպ լեթելին անհուն,  
Թեև ինչքան ել կյանքից թեքվում եր՝  
Վոաքը նույն կյանքի հողին եր հենում:  
Հիմա ինչպիսի թեքում ել լինի,  
Մի իմաստ ունի,—վոլոր, մանեման  
Տանում ե կյանքդ ու կապում հնին,  
Թողած մեծ ուղին նոր կյանքի կերտման:  
Մեր ալս հին սերը, ալսպես ռոմանտիկ,  
Ո՞ւր ե տանելու մեզ կամաց-կամաց:  
Տարբեր ձեերով լերգում են մարդիկ  
Միկնույն լերգը, հաճախ ակամա:  
Ահա, ծիծաղի նման հստակ ե,  
Ժպտում ե դեմքիս ալս լաջվարդ լիճը...  
Սակայն պղառըվեց,—տիղմ եր հատակը,—  
Իսկ իմ նետածը մի փոքրիկ խիճ եր:

Դու սիրտդ զննիր զզուշ, կամացուկ.  
Խնչքմն հնություն կա մեր հուզերում,  
Մեր արյունի մեջ, մեղանից ծածուկ...  
ՅԵՂ հին ենք, և՝ նոր,—կամուրջի սերունդը  
Մեր սերը կարծես մի փոքրիկ խիճ եր,  
Դոր մեր ներաշխարհն այսպես խիստ հուզեց,  
Թողնենք թմբուկի աղմուկն ու ճիչը,  
Մեր ներաշխարհի գետերում սուզվենք,  
Այս սանտիմենտալ սիրով հաղիսլ թե  
Նոր իմաստ առնե մեր կյանքը, հազիվ.  
Զտենք մեր սիրտը, մեր սերը զտենք,  
Վոր նոր կյանքի հետ ներդաշնակ հոսի....

1929

Դու ինձ վոչինչ չտվիր, բայց դու այն ես ինձ համար  
Ինչ թեատրիչն Դանտեիին, Պետրարկային՝ Լառւրան:  
Դու, ինչպես կաս այս կյանքում՝ միշտ քմայքոտ ու  
համառ,  
Իմ եյության հատվածն ես՝ իմ սրտի մեջ ու արյան:

Դու ինձ վոչինչ չտվիր, բայց ստացա քեզանից  
Այնքան գանձեր շողջողուն, վոր անհայտ ին  
աշխարհին,  
Ի՞նչ ե հիմա պակասում, թնջն ե հիմա հուղում ինձ,  
Վոր տխուր իմ, յերբ ուրախ աղմկում ե իմ հոգին:  
Դու չստացար ինձանից նույնպես վոչ մի, վոչ մի  
բան,  
Յերբ ուզեցի նվիրել քեզ ամեն ինչ, ամեն ինչ,  
Դու, մնացիր անուրախ, ու հոգուդ մեջ զաղտնապահ  
Մի անկատար իղձ մնաց՝ մշտախոռվ ու կիզիչ:

Տառապում ե իմ հոգին տառապանքիդ հորձանքում,  
Յերբ ինքը մեծ վիշտ չունի և ապրում ե քո ցավով.  
Տեւր ինձ, տուր ինձ քո վիշտը, անցավ յեղիր նոր  
կյանքում,  
Թող յես կրեմ պատիժը, յերբեք չեղած հանցավոր:

## ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Դիտում եմ գլուխդ զոսկեպանգուր  
Յեղ աչքերդ՝ արշալույսներ յերկու...  
Ու յես հասկանում եմ, վոր մի անգութ,  
Մի անամոք թախիծ ե հեկեկում,—  
Թևահատ մի կարոտ կա քո կյանքում,  
Վոր սրտումդ միշտ իր յերգն ե յերգում:

Թող լինի, թող լինի նա անկատար,  
Թքիր դու թախիծին ու մաղձին,  
Թող քո կամքը, կամք՝ վորպես թարթառ,  
Զրասույզ անի ցավդ հնածին,  
Յեղ քո կյանքը շպրտի անվըթար  
Մեր ափը՝ յելքի, կառուցման, հնձիւ.

Միայն, այդ միայն կըուժե հոգիդ,  
Կլեցվես ահեղ վրեժով մի դու,  
Մելամաղձության փոխարեն՝ կրկին  
Պայքարի, կռվի լերգը քո սրտում  
Պիտի վորոտա, պիտի մըրկի  
Անսանձ մի ցասում ե կյանքդ թընդուն  
Խառնե մեր կռվի հզոր հորձանքին:

Միայն ամենքով և ամենքի հետ  
կղառնա կամքդ վճռական, ամուր.  
Թհղ անհատական ամեն արահետ,  
Ընթացիր մեր լայն ճամբով ընդհանուր,  
Յերբ ամբողջի մեջ քոնը կռահես՝  
Թո կամքը կզգա մի նոր խթանում:

Յերբ զգաս, զգաս, վոր զարկդ հատու՝  
Մեր միասնական բոռնցքների մեջ՝  
Եյանքի խոցերի կծիկն և քանդում,—  
Թո սրտում կրկին կրացվի նոր եջ՝  
Կռվի, կառուցման, սիրո մի անդուլ՝  
Նոր հմագքներով լեցուն յելեեջ:

Յերբ կամքդ, կյանքդ իր մասը բերի  
Այս մեր ընդհանուր, մեծ [կատարումին, —  
Թո սրտի զարկված այն իղձը թերի  
Կթվա չնչին, և հազար ու մի  
Իղձեր կկանչեն քեզ նոր ափերից՝  
Առանց տանշանքի և գալարումի:

1981

Ա. Զ Գ Ե Ր Ը

Այնքան խինդ կա քո աչքերում,  
Վոր թաղված ե տիրության տակ,—  
Ինչպես հստակ, վճիռ լճակ,  
Վորի դեմքին՝ քամին բերում,  
Փոշու քող ե քաջում բարակ:

Վառվում ե, տես, մեր որերում  
Նոր կյանքի մի նոր արեգակ,  
Մեր ամենքիս կըծքերի տակ  
Պայքարելու կիրքն ե լիում  
Ցեղ կերտելու տենչը անհագ:

Այս որերում հրահրուն՝  
Կըծքիդ տակից սիրադ արագ  
Թող խնդրության թափով վալրագ  
Քո աչքերից վանե հեռու  
Տիրության այդ քողը բարակ:

1981

## ՍԻՐՈ 8ԵՐԿ

Հաղթանակի տարեդարձ, ցնծության տոն, ցնծություն,  
Հոկտեմբերը աշխարհին՝ նոր առավոտ, այգարաց.  
Ամբողջ աշխարհն և ցնծում, լես եմ ցնծում, ցնծա դու  
Յեզ ցնծությամբ սրտիս դեմ ցնծուն սիրո այզը բաց:

Թող ցնծության ալս տոնին վոչ մի ստվեր մեր  
սրտում

Մեր խնդության լույսերի ծփանքները չաղոտի,  
Միայն կովի կրակով բոցավառվենք լես ու դու,  
Ալբենք բոլոր թելերը լերազանքի, կարոտիւ

Հոկտեմբերը թող հորդի՛մեր սրտի մեջ և արյան,  
Համահնչուն բարախե սիրո լերակն որվա հետ;  
Թող անձնական իմ սերը, քնքուզ լերգերս անվարան  
Ալս տոնական ծփանքին ձուլվեն անդարձ, թերթ առ  
թերթ:

Ու թող ներքին կրակից՝ դեմքիդ վառվեն ժպիտներ,  
Դրոշների նման ալս, վոր ծփում են քաղաքում.  
Դրոշների ծփանքը, վոր մեր կյանքի ժպիտն ե,  
Պայքարներով ե սընդում և արյունով ե ծաղկում.

## ՀԱՄԲՈՒՑՐ

Դատյային

Դու փոքր ես, բայց պարզ ու պալծառ  
Քո աչքերում՝ այնքան հստակ  
Տեսնում եմ մի ամբողջ անցյալ  
Հիմնակործան ու ավերակ,—  
Լիգենդի պես Փարվանալի,  
Վորի լճի տակը կան դեռ,  
Յեզ կտեսնի՝ ով վոր նայի  
Թանդված ու հին բյուր պալատներ:

Դու փոքր ես, բայց քո աչքերի  
Կապույտի մեջ տեսնում եմ յիս  
Հեռու հեռու աշխարհների  
Անդրադարձումն արևագես,—  
Ինչպես յերկինք ջեռ հարավի,  
Վոր ճամբորդին ավազուտում,  
Այնքան կարոտ ու ծարավի,—  
Միքամներով ե միշտ դլութում:

Դու փոքր ես, բայց քո աչքերում՝  
Այնքան վճիտ, անապական,  
Յես տեսնում եմ հազար գարուն,  
Յերջանկության մեր ապագան,—  
Ինչպես կախարդ մի հայելի՝  
Արտացոլիչ ու լուսածիր,  
Վորի մեջ մարդը նայելիս  
Գալիք որերն ե տեսնում իր:

Դու փոքր ես, բայց լերը համբույրով  
Փակում եմ քո աչքերը ջինջ,—  
Թվում ե թե գիշեր ե զով  
Մի ամառվա՝ այնքան թովիչ,  
Ու կռացած առվի վրա՝  
Ուր ցոլում են աստղ ու լուսին,  
Յես խմում եմ ջուր ու կրակ,  
Յերկինք, լերկիր՝ վողջ միասին:

1984

## ՅԵՐԳԵՐ ՄԱՀԻ ՄԱՍԻՆ

Մարգոյի հիշատակին.

Պ Ա Յ Ք Ա Ր

Ընկերունուա, մանկանասակ Մարգոյի  
մանվան առթիվ, նամակ՝ զրված թե-  
ղիշե՛ Զսրենցին, «Եպիկական լուսա-  
բացը» կարդալուց հետո:

Գրում եմ քեզ հիմա, սիրելի Յեղիշե,  
Յերբ կարդացի գիրքդ, սրտիս այնքան մոտիկ...  
Վրաս իջել ե մի տիսրության մառ գիշեր,  
Յել սպասում եմ լես նորից առավոտի...  
Կյանքի ամառ ե, զոգ, զերկինքը պարզ ու բիլ.  
Յեղ վերելք ե, և վաղք, քըտինք և կառուցում...  
Իմ սրտի մեջ կաթեց թույնի մի սև կաթիւ  
Ամառվա յերկինքը թափեց անձրև ու ձյուն...  
Ո՛, վորպիսի տագնապ, ո՛, վորպիսի անկում  
Գահավիժում սիրո անամպ առավոտից  
Մինչեւ գիշերն իմ այս նոր յերկվության, անքուն,  
Մինչեւ անդունդները անհաղ այս կարոտի...

Հիշեմ ես դու քաղաքն՝ այն անտառի լեզրին,  
Ուր դու ինձ հյուր յեկար, սեզ քնարդ ջարդած.

Վերջին հրաժեղութ տված անեղբական սերիդ  
Ցեզ ուսերիդ վշտի հոգնությունը բարդած,  
Հիշմամ ես թե ինչպես լսում եյի լես քեզ՝  
Գլուխս վար հակած և ձեռքս ծնոտիս,  
Ցերբ կերկերուն ձայնով և զղջումով մի հեզ  
Կարդում եյիր վերջին յերգդ «De profundis...  
Ո՛, լի յեր իմ սիրտը պալծառ մի նոր սիրով,  
Ոտար եր ինձ վիշտը, տառապանքը՝ նանիր,  
Սակայն պոետական սիրտս լայն ու սիրող  
Հասկանում եր հոգուդ տագնապը խոր, աննիրհ...»

Հիշմամ ես դու, պոետ, այն աղջկան ժպտուն,  
Պալծառ՝ վորպես արե, քնքուշ՝ վորպես յերազ,  
Աչքերի մեջ հստակ՝ տխուր մի խնդություն,  
Սիրո ցողն առաջին վարդ շրթների վրա...  
Վողողված եր կյանքս նրա սիրովն անզին,  
Միաձուլլ եր հոգիս կամքին իմ մաքառուն,  
Ու ներգաշնակ կլանքի լիահնչուն դարկին՝  
Բարախում եր սիրտս և յերգում եր առուցգ...  
Նա բարձրացրեց ինձ վեր, կատարները մինչեւ,  
Կապույտ յերջանկության վորորտները անահ...  
Անազորույն մի ուշժ բաղդիս զեկը շրջեց  
Ու խորտակված ընկա՝ ջարդած սիրտ ու քնար,...  
Նա գրկիս մեջ, ընկեր, փարված ապրող մարդուն,  
Վերջին անգամ ժպտաց, վերջին, վերջին, անգամ,  
Զգացի թե ինչպես մի սե ակընթարթում  
Գրկիս մեջ ու սրտիս յերկու արե հանգան...  
Հանդան...

Յել ահա յես՝ իմ այս սրտով թափուր,  
ինչպես յերբեմն դու, պայքարատենչ պոետ,  
Շրթներիս մի այրող, մեռած կնոջ՝ համբույր,  
Քայլում եմ լուր, կռվի գնացող բանակի հետ...

Զգում եմ լես, զգում լեռ ու զեռը այս վեհ,  
Անորինակ վերելքն ու տագնապը աճման,  
Ալդ վեհ թռիչքի հետ և՝ իմ սիրտն ե թեել,  
Վոր կլանքն այսպիսի թափ առնի, աճի հիմա...  
Ահա, նույնիսկ հիմա, կամքա՝ վորպես պահակ,  
Գնում ե, վոր իրեն հանձնած դիրքը հսկի,  
Սակայն այրում ե ինձ նրա կարոտն անհագ,  
Արնոտում ե սիրտս մի անողոք կսկիծ...

Անքակտելի և խոր յես կապված եմ այս մեծ  
Մարտնչումին, կռվին, աճման վերասլաց,  
Խնդությունն ալս անխառն, ընդհանրական,  
անեղծ,

Վոր շառաչով, — գարնան ջրերի պես լելած, —  
Վողողել ե կլանքը ստեղծարար շնչով,  
Համակել ե ինձ ել ու տանում ե, տանում...  
Բայց հին աշխարհի պես, ճարճատյունով փլչող,  
Հուզերի փլուզում ե սիրտս հեռաստանում,  
Յեղ տագնապ ե ճնշող և՝ կարոտ ե անսանձ...  
Ո՞վ ե հասկանում, ով, իմ լերկվությունն ալս  
խոր, —

Իմ տրտմության մեջ ով խնդությունս տեսավ,  
Ու իմ ժպտի մեջ ով վիշտս զգաց ալսոր...

Յերգել սրտիս տագնապն, և քնարս հնչի  
կոկիծն այն կարոտի, մահի սերն անողոք,  
Յերգել նրա ժպիտն ու նալվածքը վերջին  
Յել այն սիրող սիրտը, վոր ծածկեցին հողով...  
Թե զթներս կրծեմ ու լուռ քալեմ կրկին  
Յել աշքերս կանչող կատարներին հառեմ,  
Ու վերելքի այս մեծ, լիահնչուն լերգին  
Հեծեծանքի վոչ մի հնչուն յես չխառնեմ...

Նրա մահվան ցալն ե իմ սիրտը մտրակում.  
Թող նոր կովի համար թրծվի ու կարծրանա...  
Ինչպես քոնը անցավ՝ կանցնի գիշերս անքուն,  
Յել նոր առավոտս բացվի, պայծառանա...  
Գրում եմ քեզ հիմա տիսրությամբ մի հանդարտ,  
Սրտիս այնքան մոտիկ գիրքդ լերը կարդացի...  
Վողջուն վերադարձիդ հերոսական, հպարտ,  
Վողջուն եպիկական քո նոր լուսաբացին:

1980

## ՏՈՂԵՐԻՍ ԴԱՍԱԿՆԵՐՈՎ

Տողերիս դասակներով մահի դեմ զըռհ գնամ,  
Մրտիս կոկիծը խեղղած, առնական, խրոխտ գնամ.  
Կյանքի հարաճուն ծառից մահը քեզ պոկեց տարավ,  
Մահի դեմ քո այդ անշեջ մրմուռի հրով գնամ:

Մկաված դեռ անավարտ անաղոք մի կռիվ կա,  
Ծառացել ենք հնի դեմ,—դեռ մի վերջին մըրիկ կա,  
Կավարտվի այդ մարտը մեր, յերբ թշնամին ցըիվ գա,  
Գուցե յես ալդ կռվի մեջ թշնամու սրով գնամ:

Հեր, կռվից հետո կգան բիւ կապույտ որեր, գիտեմ,  
Ու նոր կռիվ կլինի բնութիւն ու մահի դեմ,  
Առանց քեզ թեն, միս, յես կուզելի բարկ, արնաղեմ  
Ալդ մեծ, վեհիմաստ կռվում վորպես վառ դրոշ գնամ:

Ինձ ել կրծում ե համառ ալն ցավը, վոր քեզ տարավ,  
Քեզ նման յես ել կանցնեմ՝ ապրել-կռվելու ծարավ,  
Բայց քանի աչքս բաց ե՝ թող յերգս հոսի վարար,  
Ու այս կյանքից, անուշ ջան, թող ուրախ գրով գնամ:

## ԱՐԵՎԻՆ

Հիվանդ եմ, բարի արե, շողա...  
Մ. Մեծարենց

Արեն ե բարի գթության մի քուլը,  
Շողերը նրա՝ սրսկման ասեղ...  
Սրսկիր, արե՛, կյանքի հուրը քո  
Միրտս, վոր հիմա քո դեմն եմ պարզել:

Մի բաժակ տուր ինձ հեղուկից քո լուլս,  
Հազի դեմ, արե՛, այս չար հազի դեմ.  
Ալսքան սեր, բաղձանք, քնքշություն, մոլուցք  
Կրծքիս տակ պահեմ... պահեմ հազիվ թե...

Ալս ծաղկեփունջը սեղանիս վրա  
Շատ քիչ ե, արե՛, ո քիչ ե, քիչ ե.  
Գարուն ե դուրսը, կյանք ե հուրհուրան.  
Ալս փունջ ծաղիկը ծաղը ե, քրքիջ ե:

Դուրս տար ինձ, դուրս տար՝ ծաղիկների մեջ,  
Լողամ լույսերի ծիծաղի ծովում...  
Սրսկիր, արե՛, կրակ, կիրք ու տենչ,—  
Դուրս գամ, դուրս, կյանքը ինչպես ե թովում...

## ՎԱՀԱՆ ՏԵՐԹԱՆԻՆ

Վերադարձիր, և վերադարձիր...

Յե. Զ ա բ ե ն ց

Սա յեր քեզ ասում, վոր դու անցել ես,  
Կյանքը խանձել ե «յերգերդ թքոտ»,  
Ել մեզ չեն հուզում յերգիդ գանձերը  
Յեվ այնքան աղնիվ տիսրությունը քո...  
Խսկ հիմա նրա կարոտն անծիր ե՝  
«Ո՞, վերադարձիր...» այդ բնչ հրաշքով  
Քո անկարելի վերադարձին ե  
Սպասում նրա սիրտը մորմոքով:

Սիրելի պոետ, հեռավոր Տերյան,  
Քո տիսրության մեջ յես զգացել եմ  
Այսորվա խինդը, —ինչպես ցուրտ ձմրան՝  
Խոխվ խոտի տակ կյանք առնող ծիլը.  
Յեվ խնդության մեջ իմ ամենորյա,  
Ինչպես ամառվա քնքուշ անձրես՝  
Քո տիսրությունը յերգերիս վրա  
Յես զգացել եմ, յես զգացել եմ:

ԵՇ հասակն առելու մեծացել ե՝  
Այն ինչին տվիր և արյունը քո.  
Հիմա աճել ե, ծառ և այն ծիլը,  
Փարթամանում ե նա մեր քրտինքով:  
Արդեն անցել ե կյանքից ձանձիրը,  
Վոր սողում եր լուռ քո կրծքի ներքո...  
Ո՛, դրա համար կարոտդ անծիր ե,  
Վոր մորմոքում ե Զարենցի յերգով:

Սիրելի յերգիչ, յերգերիդ մասին  
Զարենցն եր ասում, թե հնացել են,  
Բայց նա յերգերի իր կարմիր թասին  
Քո գինուց ինչքան, ինչքան ածել ե:  
Քո մեղմ թախիծը, տիրությունն ազնիվ  
Մենք զգացել ենք, խոր հասկացել ենք.  
Մինչև քո յերգի բարձունքին հասնի  
Յերգին մեր պետք են յերգիդ դանձերը:

1980

## ԻՄ ՎԻՐՊԻԼԸ

ՀՈՎՅ. ԹՈԱՄԱՆՅԱՆԻ ՆԻՇԱՏԱԿԲԻՆ

Դեռ հիշում եմ տխուր՝ կյանքն այն մահաղարհուր,  
Աշխարհն այն մութ, անհուր, դժնի անտառն այն, ուր  
Մոլորվեցի յես, դեռ նկուն մանուկ անթե,  
Խնչպես մռայլադեմ մեծաքանքար Դանթեն:

Դեռ հիշում եմ յես պարզ՝ ինչպես առյուծ, հովագ  
Ու գայլ, վորպես որհաս, գալիս եյին վրաս,  
Հին Լարիրինթոսում, պղտոր այն քառում,  
Ուր արյունն եր հոսում, կյանքը մեռնում, դոսնում:

Արնոտ այդ ճամբեքին կորչում եյի կրկին;  
Դու, հայկական յերգի, խոսքի անմահ Վիրգի  
Լարիրինթում անծայր հանկարծ յերևեցար.  
Այնքան մեծ ու պայծառ, այնքան մեծ ու պայծառ:

Ու հանճարիդ ուժով ինձ վարեցիր դժոխք  
Այն աշխարհի միջով, ուր չկար վոչ մի շող.  
Ու յես, ով մեծ վարպետ, լուռ քայլեցի քո հետ՝  
Մինչև թողինք անհետ կյանքն այն սկ, չարադեա...

Ո', ինձ արդեն պետք չեր վոչ մի Բեատրիչե,  
Վոր ականջիս հնչեր սիրո խոսքերն իր ջերմ...  
Նոր աշխարհի շեմքին՝ ինձ հանձնեցիր կյանքի  
Թարմ ու մեծ հորձանքին, նրա անհուն յերգին:  
  
Յել ահա մենք անդուլ այն անտառն ենք հարթում,  
Զարդում ենք ու քանդում այն դժոխքը անդուռ...  
Ընթանում ենք անհաղթ, կերտում ենք կյանք ու  
բախտ,  
Հիմնամուր անխախտ մի յերկրային դրախտ:

Բայց յես զգում իմ դեռ իմ ուսերին մի ըեռ,  
իմ որտի մեջ մի յեռք, վոր դեռ չի դարձել յերգ.  
Ո', նա շուտով մի նոր շողջող խոսքի հունով  
Հին կյանքի դեմքինոտ պիտի պոսթկա թույնով:

Այն ժամանակ ելի, մոռցած զարհուրելին,  
Կհիշեմ սիրելի իմ մեծ, մեծ Վիրդիլին,  
Վոր հին կյանքում անցած, այն քառսում անծայր,  
Ճամբիս յերևեցավ այնքան մեծ ու պայծառ:

1988

## Յի՞ր ՈՒ ՑԱՆ

Ա. Բ Ե Վ

Ամենից վեր, ամենից վառ ծաղկած արև,  
Լույսի ցնցուղ.  
Լույսերի տակ լողանում են ծաղկուն ծառեր,  
Ծափող, ցնծուն:

Ի՞նչ մերկություն, դիրդ ու փարթամ ի՞նչ մերկություն  
Արևալող,  
Ի՞նչ ներդաշնակ, համապարփակ սիրերգություն  
Հալող, ձուլող:

Ստեղծագործման հզոր մղում, վորպիսի թափ,  
Սերմնաթորում.  
Ամեն քայլում, աներեւյթ և լույսի տակ  
Բեղմնավորում:

Ամենից վառ, ամենից վեր բացված արև  
Լույսի ցնցուղ,  
Ցնցուղի տակ ծիծաղում են ծաղկուն ծառեր,  
Ծիլ ու ընձյուղ:

## ՇԻԱՑԼՈՒԹՑՈՒՆ

Գարման, շուայլ ես, չուայլ ես այնքան,  
Չունես վոչ մի կշիռ, վոչ մի հաշխով.  
Ինչքան սեր կա ու խինդ արեգական,  
Այնքան մտորմունք ու այնքան հաշխու

Այս վառ ու պայծառ ծառերի վրա  
Վորքան ծաղիկ կա սպիտակ, սադափե,  
Հանկարծ... կարող ե մի քամի սուրար  
Մառերից անթիվ ծաղիկներ թափեր

Ինչու յես ալդքան դու շքեղ, շուայլ  
Ու սերդ այզպես ահեղ անհագուրդ...  
Կարող ե յերկինքը կարմրաչուայլ  
Մաղել և այդքան ծաղկասպան կարկուտ:

Թող սիրտս հիմա բույրերը ծծե,  
Մաղկանց արբունքը թող չանցնի իզուր...  
Եես այգեկութին չհօսնեմ գուցե,  
Մաղկանց արբունքով գեթ արքե

## ԱթԳԵԿՈՒԹ

Դղոր գաղտնիք՝ մահին դավող,  
Անտառներում, սարում, ձորում  
Այնքան զգուշ, խորհրդավոր  
Սերմնալորում, բեղմնավորում.

Ամեն, ամեն զգայարան  
Զի զգում այդ վայրկյանը սուրբ,  
Միրաը, սիրտը... միայն նրան  
Հասնում ե այդ սարսուսը նուրբ:

Բողբոջումներ, ծլում, ծաղկում,  
Միրո ուժը համատարած,  
Դալար սրաեր սիրով ծաղկուն,  
Ծաղկուն վոստեր իրար փարած...

Այնքան հղոր, վեհ ե, աղդուն  
Գարնան ուժը... բայց իմ հոգում  
Կա մի բաղծանք ել իմաստուն.  
Ա՛հ, ուզում ե նա այդեկութ:

1927

Բ Ե Ա Ը

Այսքան բազմազբաղ գլուխ,  
Մկան՝ պնդապիրկ, համառ.  
Ուսեր՝ բեռի տակ հլու,  
Բեռներ՝ կառուցման համար:

Այսքան մշտաթոր՝ քրտինք,  
Այսքան ստեղծման ուղի.  
Մտքեր՝ ներդաշնակ սրտին,  
Մրտեր՝ գալիքով հղի:

Տանենք, յեղբայրներ հույսի,  
Բեռներ կառուցման համար.  
Զեղ հետ գալիս եմ՝ ուսիս  
Տաշված մի կտոր մարմար:

Արյուն թե թքեմ կրկին,  
Ճամբին ու ուշանամ տկար,  
Թող ըեռս դառնա շենքի  
Դուան սանդուխքին մի քար:

Հոգ չե, թե ընկնեմ անհաս,  
Միայն քարս չկորչի,  
Միայն չմնամ անմաս  
Եքեղ կառուցման դործին:

1927

Ա Յ Ա Խ Մ

Ամեն ինչ յելնում ե, հառնում՝  
Հղի յե նորով մեր հողն ել.  
Նույնիսկ ամենափոքր առուն  
Այս նոր ջրերն են վողողել

Վոչ մի կորթ հող չի արգելի  
Համառ ծլումն այդ, աճումը,  
Այստեղ կորթ եր, այսոր յելիր,  
Ցել տես, քարն ել կանաչում եւ

Աճում ե և թվում ե թե  
Անհայտ ուժն ե, վոր վարում ե  
Համառ ընթացքն այդ յերկաթե  
Ցել այդ ահեղ վարարումը:

Ցերը անցնում ե յերակ-յերակ  
Թո արյան հետ մեծ աշխույժը,  
Զգում ես վոր կյանքի վրա  
Թևածում ե հենց այդ ույժը:

Փոխում ես դու զուրջդ համառ  
Աւ նա նույնպես քեզ փոխում ե.  
Աւ այդ ամբողջն ե կենարար  
Վոր մեր կյանքը վողողում ե:

Ամեն ինչ յելնում ե, յեռում,  
Բարձրանում ե վեր մեր հողն ել,  
Նույնիսկ վտիտ, փոքրիկ առուն  
Այդ նոր ջրերն են վողողել:

1928

ՀԵՐԹԱԹԸ ՄԱՑՐԻԿԻՈ

Ինչպես խուսափուկ մուժում  
Մի աղնան հին յիրազի՝  
Իմ մոր հեքյաթն ևմ հիշում՝  
Մարդու թոփչքի մասին,

Պատմում եր՝ թե ինչպես նա,  
Կախարդը իր հեքյաթի,  
Թռչում եր անմեքենա՝  
Հեծած մի աթոռ փայտե,

Կախարդը մեծ, վիթխարի,  
Դարձած վոգի մի թեթև  
Սլանում եր յոթ սարի  
Յեվ յոթը բիլ ծովիր հետեւ,

Այնտեղից բերում եր նա  
Աղջիկներ հուր-հրեղեն,  
Վոր, իբր, հողի վըա  
Յերբեք, յերբեք չեն յեղելք

Բերում եր արե ու լույս  
Յեվ ջբեր անմահական,  
Վոր հողի մարդը հլու  
Չտրվեր մահին աղահ...

Ու յես, մանուկ մառըուն,  
Լսում եյի շնչաղուսպ,  
Փակած աչքերս ցնորուն՝  
Թռչել եյի յերազում...

Խեղճ իմ մայր, այն և հեքյաթ,  
Վոր անցել ես ու հանգել,  
Յեվ այն ցնորուն տղադ  
Այսոր շարում և հանգերս

Ի՞նչ հեքյաթ, լ՞նչ յերազ, ցնորք,  
Ի՞նչ թոփչք և ինչ կախարդ.—  
Այսոր այստեղից Նյութորք  
Թռչում ե, եյ, ամեն մարդ...

Վորքան, վորքան ինքնաթիռ...  
Հիշում եմ հիմա հաղիկ  
Վախճանը քո հեքյաթի՝  
Կատարումն իմ յերազի,


## ԲՆՈՒԹՅԱՆ ՑԽՐԳԸ

Նղուարգին

Յեղազել եմ յես մի որ  
Այս լեռների զմբուխտը,  
Ժայռերն այս սեպ, ահավոր,  
Դեղին, դեղին այս տուղտը,  
Շաղիկները՝ բույր ու շող,  
Կանաչները՝ թավիշե,  
Առվակները սեր հուշով,  
Սարի վրա պարզ գիշեր:

Բայց իմ հոգին, իմ հոգին՝  
Արքիու ուրիշ մի յերգով՝  
Մլանում ե մոլեղին  
Այս հաճույքի յեզերքով,—  
Խնչպես ահեղ մի բազե,  
Թողած անծիր մի գետին՝  
Սուր սլացքովն իր վազե  
Զարկե ուղիղ մի կետի...

Կիսաղաղվես, իմ հողի,  
Շանթասըլաց իմ ըազե,  
Ցերը կյանքն առանց մոլոմոքի՝  
Դաշտերում իսկ ավազե  
Տրոփե մի խնդության,  
Ցերջանկության մի զարկով...  
Հիմա ահեղ դպրուա  
Պայքարի մեջ քո յերգով:  
Կանդրադառնամ յես մի որ  
Այս լեռների զմբուխտին,  
Ժայռերին այս ահավոր,  
Դեղին, դեղին այս տուղտին,  
Ծաղիկներին՝ բույր ու չող,  
Կանաչներին՝ թավիշե,  
Առվակներին՝ սեր հուշող,—  
Սարի վրա պարզ գիշեր:



# ԱՐԱԳԱԾԻ ԿԱՆԹԵՊՆԵՐԸ

John P. O'Connor, Esq., and

## ՍԱՎԱՐՆՈՒՄՆԵՐ

Սիրելի Աւազանին

Կ Ա Ր Ո Ւ

Պատվիր, պատվիր, կարուսել  
Յես քո յերգը վաղուց եմ լսել...  
Վ. Տերյան

Կարծես յերազ լինի այդ, յերազի պես վաղանցում  
իմ մանկության որերից պահված հուշի մի բեկոր...  
Թող հուզիկն այդ,—մնացած իմ հին կյանքից՝ պաղ,  
անձուկ,—

Նոր թև առնի, թևածի իմ այս յերգում գեթ մեկ որ:

Մեր որերի կրակով թող տաքանա, կյանք առնի  
Փոքրիկ թոչնակն իմ՝ սառած հին աշխարհի խխատ  
ցըտից,

Թող մեր անամպ կապույտում նա մի անգամ  
սավառնի  
Յեղ իր յերկրորդ կյանքի մեջ մի անգամ ել ժպտա  
ինձ...

ՅԱՄ մանկական ջինջ հոգին, վանդակ ընկած թռչնի  
պես,  
ՏԵՆՀԱԳ կապույտ մի յերկինք և դաշտերը լախածիր...  
Ուզեցի վեր սլանալ սակայն անզոր, վհատ յես  
Դիմեցի իմ մանկական միակ ուժին՝ իմ լացին:

ՅԵՍ լաց յեղա՝ արցունքով ամոքելու վիշտ ու ցալ,  
ՅԵՎ մայրիկը իմ բարի, — վոր ծնել եր ինձ անթե, —  
ՍՐԲԵԳ աչքերս արցունքոտ, գուրզուրանքով խոստա-

ցալ  
Տալ ինձ այդ որն անպայման թռիչքի պես մի պարզեւ:

ՀՈՂԻՍ լցրած հույսերով և աչքերս ծիծաղով  
Իմ ցնորքին գնացի՝ մայրիկիս հետ թե թեր...  
Ինձ պես վորքան մանուկներ յեկած ծափով ու  
խաղով,  
Ուզում եյին տիրանալ չնաշխարհիկ պարզեին...

ՅԵՍ նստեցի կարուսել... Ու իմ անշունչ, փայտե ձին  
Սիրտս լցրեց խնդության մի ճախրանքով հոգեթով,  
Յերբ, ինձ անհայտ մի ուժով, կարուսելը շարժեցին,  
Ինձ թվաց, վոր թռչում եմ իմ յերաղած կապույտով:

Փայտե ձիուս լաշը չեկ ամուր պահած ձեռքիս մեջ  
ՅԵՎ վոտներս պիրկ հպած ասպանդակին զընդուն, —  
ԹԱՀՈՒՄ եյի և ալդպես ինձ թվում եր թե անզերջ,  
Անվախճան եր սլացքս, և իմ վոգին՝ աննկուն:

Յերազանքից սթափված յես տեսա մի վայրկյանում,  
Վոր իմ ձիու առջեկց ընթանում եր մի այլ ձի,  
Խնչպես և իմ յետեկց մի ուրիշն եր սլանում...  
Այդ ամենից յես անցնել, առաջ թռչել տեսչացի...

Բայց զուր հոգիս տագնապեց և զուր անցնել ուզեցի,  
Միշտ նույն չափով հեռավոր՝ յես մնացի նույն  
տեղում,  
Շրջագծում շղթայված իմ խարուսիկ փայտե ձին  
Քառասմբակ դոփեց լոկ իմ բոլրոքված ուղեղում:

Յեվ խորտակվեց իմ յերազն ու թեաթափ ընկավ վար,  
Յես լաց յեղա հուսախաբ, թշնամացա իմ մոր հետ.  
Բայց մի կարոտ, մի մարմաջ կյանքիս յեղավ  
կառավար,—  
Ինչ ել լինի սանձաթող, ազատ լինել մի որ գեթ:

Յես մեծացա... բայց կրկին իմ ձին մնաց փայտե ձի,  
Կյանքը մնաց կարուսել, շարժվող անհայտ մի ուժով.  
Ու յես իզուր անզգա իմ գրաստը ծեծեցի,  
Զուր փորձեցի այդ անպետք ձին փոխել մի ուրիշով...

Իմ յետեկց արշավող չհասավ ինձ վոչ մի մարդ,  
Խնձնից առաջ քշողին յես ել, ավաղ, չհասա.  
Շրջագծից այդ անմիտ չծռվեց մի ակընթարթ  
Վոչ մի, վոչ մի ձիավոր՝ ինչքան շարժեց խարազան:

Յես խորտակված հույսերով վերհիշեցի մի առ մի  
իմ մանկական որերը և կարուսելն այնքան վարժ.  
Ու հասկացա յես նրա գաղտնիքն այնքան միամիտ,  
Որենքն այդ խենթ շարժումի, անմիտ շարժումն  
այդ անշարժ:

Բայց այն, վոր յես մնացի այնպես անկամ ու անդոր  
Միշտ նստած նույն փայտե ձին՝ շրջագծում կախարդ-  
ված,—

Մնացել եր առեղծված անլուծելի, ահավոր,  
Վոր հաշմում եր իմ հոգին, ինչպես դաժան մի կաթ-  
ված...

Սակայն յերբեք, ո՛, յերբեք չդադարեց իմ հոգին  
Ազատության թերով թռչել, ճախրել տենչալուց...  
Հանձնվեցի յես կրկին իմ մշտանույն մորմոքին  
Վերջալույսից՝ արշալույս, արշալույսից՝ վերջալույս...

Ու յես ինչքան ուզեցի ազատության յիրգ հյուսել  
Յեվ ինձ մղել թռիչքի՝ կամքի, մտքի և վոգու,—  
Կյանքն ինձ թվաց շարունակ չարագուշակ կարուսել,  
Նրանից դուրս թռչելլ՝ լոկ մի պատրանք անուզուտ...

• • • • • • • • • • • • •  
Բայց հետո մեր աշխարհում կայծակեց մի առավոտ,  
Հոկտեմբերյան լուսածագ՝ շողյուններով հրածին.  
Յերկու հսկա ուժերի բաղխումներից ահավոր  
Կայծակների շեկ խուրձեր անմարելի շողացին...

Խորտակվեցին զղթաներ, գալար-գալար վորպես ոձ,  
Ստեղծագործ մեր վոդին լեցվեց կերտման կրակով,  
Երջագածից դուրս յելան բանակները սանձակոծ  
Յել աշխարհը փոխեցին աշխատանքի հրաշքով։

Յես հասկացա, տեսա, վոր առավոտն այդ զողողաց,  
Եղթան խզվեց, կախարդված զրջագիծը պատառվեց  
Իր անսահման լարումից, ամբողջ ույժը ժողոված,  
Այդ ջերմությամբ շիկացավ արշալույսը և վառվեց։

Յել ահա իմ առջևն ե մի լայնություն մշտաբաց,  
Իսկ իմ յետև ընկած ե մի խորտակված կարուսել.  
Ու յերաղող իմ վոդին՝ աղատությամբ այդ արբած՝  
Հիմա յերկնում, ուզում ե մեծ թռիչքի յերդ հյուսել։

1983

## ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Մազերիս մեջ տեսնում եմ արդեն քանի՛ ճերմակ թել,  
Վոր անցյալիս յեռեսուն տարիներն են արծաթել

Այդ տարիներն իմ անցած, այդ ուղին ձիգ, վոլորուն  
Մազերիս մեջ՝ դառնում են մի վայրկյանի մտորում,

Յեվ այդ ճերմակ մազերիս արահետով վայր ու վեր  
Սլանում են հուշերն իմ դեպի մթին հեռուներι

Ո՛, կարոտից են նրանք այդքան արագ սլանում,  
Սիրո անհաղթ մըրիկն ե նրանց քշում և տանում.

Թե մեծ ատելությունն ե ժառանգորդներն իր ծնում,  
Վոր յերամը հուշերիս դեպի յետ են թոցընում...

Ո՛, յետ դարձեք, յետ դարձեք այդ մազերիս տրծաւ  
թով,  
Իմ հուշերի տատրակներ, հիշատակներ մահաթով...

Մոայլ կյանքի այն ուղին, վորով մի որ անցաք դուք,  
Հիմա մահն ե տրոլում, այնտեղ հիմա ցուրտ ե, բուք,

Այն ահսելի մացառում, ուր ձեր բաղձանքն ե ծնվել,  
Կիսճճվեք, կմնաք թեատ, ծվեն ու ծվեն:

Ո՛, յետ դարձեք, յետ դարձեք, այդ մազերիս ծփան-  
քով,

Զուլիկցեք իմ ներկային և զնգացեք այս կյանքով:

Ենոնալանջից, յես գիտեմ, այնքան հեշտ ե սահել վար,  
Միայն փոքրիկ մի շարժում՝ ու կգնաք ինքնաբար:

Բայց յերբ հասնեք մի կետի, ուր սահմանն ե  
աննշմար,

Արդեն ուղին ձեր դարձի դառնալու յե շատ դժվար...

Ո՛, յետ դարձեք, յետ դարձեք, այդ մազերիս ալիքով,  
Այսորն ի վեր բարձրացցեք՝ դյութված շողշող դալի»

Քով:

Սակայն, հուզեմ, դուք թեթև թերը ունեք ու ճախ-  
բանք

Միայն գեպի անցյալս, արդեն մեռած մի աշխարհք:

Դեպի այնտեղ, ուր հուշը չի կարող թեն իր պարզել,  
Դու սլացիր, խոհերի բարձրաթորիչ իմ բազեւ

Մազերիս մեջ տեսնում եմ արդեն քանի՛ ճերմակ թել  
Վոր իմ գալիք որերի կատարներն են արծաթել

Դու սլացիր արծաթե այդ գծերով դեպի վեր,  
Դեպի պայծառ գագաթը՝ միշտ կորովի, անվեհեր:

Դու սլացիր միշտ առաջ, ուր չի ճախրել վոչ մի հուշ,  
Թող այսորը դառնա հուշ, մնա պայծառ և անուշ...

Ու այն ճերմակ բարձունքին յերբ բարձրանաս, նայիր  
ցած,

Դեպի այնտեղ, ուր մի պահ այս մտորումն ունեցա:

Վայրկենական մտորում, անրոնելի ակնթարթ,  
Եերբ և՛ յետ ե վար սահում և՛ առաջ ե թոշում մարդ...

Վայրկենական մտորում հուշերի և խոյանքի,  
Հանգույց անցյալ հուշերի և խոհերի նոր կյանքի:

1988

## Ա.ՑՑԵԼՈՒԹՅՈՒՆ

Յես խորհում եմ աշխարհի մեծ տագնապի մասին այս,  
կրկնվում ե իմ հոգում անցած սիրո մի յերազ:

Ինձ թվուժ ե՝ աշխարհը տագնապում և ճիշտ այնպիս,  
ինչպես, վաղուց, պատանի իմ հասակում եյի յես...

Փակվում եյի սենյակում, խորհում եյի և զրջում  
Յել կամ, հակված սեղանիս, այն աղջկան անըջում:

Լեցվում եր իմ սենյակը կարոտներով անձկագին,  
Յեվ կարոտի ծովում այդ տառապում եր իմ հոգին:

Տեսնում եյի կարոտի ծովի ափին մի վարոս,  
իմ մեծ սիրտը լեցվում եր նրա լույսով հեթանոս:

Շառաչում եր ծովը խոլ, ցնցում յեղերք և ընդերք,  
Այդ շառաչում լիս մեկին լսում եյի մի նոր յերգ:

Յեվ զգում եր իմ հոգին, վոր յերկունքն այս փառա-  
վոր լույսով պիտի պսակվի, դառնա սիրո առավոտ...

Զգում եյի, վոր ահա նրա վոտներն են բակում,  
Նրա հեռու ժպիտն ե սիրտս անտես կրակում:

Զգում եյի, վոր ահա յելնում ե վեր, բարձրանում,  
Ահա շեմքիս ե հասնում և իմ դուռը բաց անում:

Ու բացվում եր դուռս լայն, ու լույս դռնից մտնում եր—  
Այն աղջիկը սպասված, դարնանային կյանքի սեր:

Ու մնում եր ինձ անհայտ լոկ վայրկանն այն, մի  
վայրկյան,—  
Դուռն արդյոք յԵս բաց արի, թԵ նա բացեց ու յեկավ:

Եես խորհում եմ աշխորհի մեծ տաղնապի մասին այս  
Կրկնվում ե իմ հոգում ահա նման մի յերազ:

Եեվ այն ինչ վոր ապրել ե մի պատանի բանաստեղծ,  
Այսոր աշխարհն ե ապրում, հողագունդը մեր այս մեծ:

Արդեն վեր ե բարձրացել ու այցի յե յեկել քեզ:  
Քեզ, ով աշխարհ, աղջիկը, այն աղջիկը հրագես:

Զգում ես դու, վոր ահա պիտի բացվի դռւոդ փակ,  
Ու ներս խուժեն նրա սերն ու լույսերն իր անապակ:

Գուցե անհայտ մնա քեզ, անհայտ մնա մի վայրկյան,—  
Արդյոք դուռը դժւ բացիր, թԵ նա բացեց ու յեկավ:

## Ձ Ա Հ

Դորիղոնի անսովոր իմ հին հոգին թևավոր  
Լայնություններ յերազեց և աշխարհներ հեռավոր:

Բայց դարերի տանջանքում ագնիվ թևերն իմ հոգու  
կորցրել ելին ուժն իրենց, և հոգիս եր մորմոքում:

Հոգիս այդպես թպլտաց հողի վրա արնաթաց,  
Ինչպես բազե վիրավոր, կապույտներից վար ընկած:

Յերեկը մառ, անարև, գիշերն անաստղ, մթաթե  
Անցնում ելին, բայց մնում կյանքի նման մշտատե...

Յեվ հավաքեց իմ հոգին մի որ ուժերն իր կրկին  
Ու սլացավ հողից վեր՝ բախվելու բիլ յերկնքին:

Նիրհած ուժեր մարդկային, ինչքան հոգուս մեջ կային,  
Նորից զարթնած՝ վարեցին իմ թռիչքը յերկնային:

Ու թևածեց հոգիս վեր՝ հողագնդի վրա մեր,  
Բայց աշխարհն իր յերազած յերկրի վրա չկար դեռ...

Նա սլացավ նորից վեր... աստղերն յեղան ծաղիկներ,  
Վորոնց վրա նստեց լուռ հոգիս վորպես մի թիթեռ

Սակայն նորից մի հին ցավ իմ հոգու մեջ արթնցավ.  
Յերկինքն անհուն, անեղեր, նրան թվաց քարանձավ:

Յեզ յերազեց նա կրկին յերկնքի մեջ յերկնքին,  
Նոր աշխարհներ յերազեց աստեղաճեմ իմ հոգին:

Մեր աշխարհից հեռացած, աստղերի մեջ վերացած  
Նորից աշխարհ նա ուղեց, նորից տենչաց իջնել ցած:

Ու ցած իջավ, ցած իջավ՝ յերկրի վրա տքնաջան,  
Բայց ուր արդեն վառվուս եր շքեղալույս մի վեհ ջահ:

Յերազանքը դարերի, վառված ջահը վիթխարի,  
Անչափելի, անծավալ լույս եր տալիս աշխարհին:

Այն աշխարհն, ուր իմ հոգին մատնված եր մորմոքի  
Շողլողում եր՝ բաց արած ցընծություններ կաթողին,

Բոսորալույս ջահի տակ նույն աշխարհն եր բազմե-  
րանգ,  
Բայց յերազը դարավոր ստացել եր մարմին, կյանք:

Յեզ իմ հոգին տենչասեր աստղերի մեջ անեղեր՝  
Այդ աշխարհից վերացած՝ այդ աշխարհն եր յերազել:

1984

## ՅԵՐԱԶԱՆՔ

Ով ապրում և հիմա մեր հալրենիքում նորաստեղծ  
մւ զնում ե գեթ մի քար կառուցման մեջ նրա մեծ,

Ով վեհ լարումն իր մտքի, կամ աշխատանքն իր  
բազկի  
Զուլում ե մեր աշխարհի ստեղծող ուժին բազմազգի,

Ով իր սրտի ավյունն ե տալիս կերտվող մեր կյանքին,  
կամ իր շքեղ յերազն ե ձոնում նրա գալիքին,—

Կերտծնվում հոգեպես ու փոխվում ե որ որին,  
Հայրենիքի նման մեր՝ հակոտնյա հին աշխարհին:

Նրա սրտում և հոգում, ներայիսաբհում նրա խոր  
կարկաչում են նոր հույզեր, ցանկություններ նորա-  
նոր.

Նոր գանձեր են շողջողում, խնդություններ անծանոթ,  
Տեսնում ե պերճ լերազներ՝ հեռուներում ծածանող...

Սակայն ալահեր դեռ ունի քողված թեթև թախծու-  
թյամբ,  
Ինչպես լերան սեդ լանջին մնացած մի թեթև տմպւ

Բայց նոսրացած, աննըկատ այդ շերտ ամպիկն ե  
ցնդում,  
թեվ արևը մաղում ե վար ջերմություն ու խնդում։  
  
Ու ցնծում ե մարդ նորից, ճախրում հոգին թևաբաց,  
իր այդ անամպ կապուլտի պայծառությամբ զոհ,  
արքած։

Նրա հոգում ծնվում ե կրկին մի նոր բաղձություն,  
Վոր նոր ոլացք ու սույր ե տալիս մտքին այդ  
մարդու։

Իմ վերածին կյանքում ել՝ որեր յերկրորդ մանկության,  
Դեռ թախծության ժամեր կան և ժամեր կան անձ-  
կության։

Իմ թախծության պահերին յես գալիքն եմ անրջում,  
Անուրջով լի իմ հոգին դեպի գալիքն ե թռչում։

Սավառնում ե իմ հոգին կյանքի վրա այն գալիք,  
Թեվ արծվենի հայացքով վար ե նայում անձկալի։

Յեվ տեսնում ե իմ հոգին յերանավոր այն կյանքում  
Մի մենավոր բանաստեղծ, վոր յերազում ե անքուն։

Այն յերջանիկ դալիքում նա դալիքն ե անրջում.  
Նրա յերազն, ասես թե, իմ յերազն ե մշտաչու։

Խորհում եմ թե՝ անցյալում քանի՛ քերթող մենասելը  
իրենց կյանքում թախծելով՝ իմ որերն են յերազել:

Նրանց յերազն յես եյի, ուրիշն՝ յերազ ինձ համար  
Մարմնավորության յերազը նորն ե ծնում մշտաբար:

Յեվ իմ հոգին, կարծես թե, սփոփոված այդ տեսիլքով՝  
Յետ ե դառնում լցված նոր իմաստությամբ և յերգով՝

իմ վերածին կյանքի մեջ, կյանքում յերկրորդ ման-  
կության,  
Դեռ թախծության ժամեր կան և ժամեր կան անձ-  
կության:

Իմ անձկության ժամերին յերազում եմ նորանոր  
ինձ անծանոթ աղխարհներ, անրջային, հեռավոր:

Յեվ անուրջի հրաշքով բացվում են բյուր ճամբաներ  
Հոգիս անխոնջ ուղերորդ ճամբորդում ե անվեհեր:

Ու բացվում են իմ առաջ դարբասները բյուրաբյուր  
Աղխարհներում այդ շքեղ, քաղաքներում վոսկեղուու-

Շուայլության, պերճության վոստաններում մշտալույս  
Թափառում ե իմ հոգին, վորապես անտես քննախույզ:

Նա տեսնում ե, վոր մարդու վոգին մեծ ու սրբազան  
Թպրտում ե վանդակում, ինչպես զարկված մի գաղան:

Անկնում ե մերթ այդ վոգին ու դառնագին հեծեծում,  
Ատելությամբ բոցավառ իր վանդակը մերթ ցնցում:

Աչքերի մեջ պայքարի, մեծ կռվի սուրբ հուրը կա  
թել յերազը մշտավառ՝ կյանքի հանդեպ հեռակա:

Այդ յերազն ե նրա մեջ մարտի սերը բորբոքում,  
Յերազում ե այդ վոգին հայրենիքը իմ հոգու:

Ու լցվում ե իմ հոգին նոր մի ուժով անսասան,  
Հպարտությամբ, ցնծությամբ ու սիրով վեհ, սրբա-  
զան:

Յետ ե գառնում կրկին նա մըրկարշավ, հողմասույր  
Դեպի հոգը մայրենի, խորհրդային հողը սուրբ:

Ու վերածին իմ կյանքում, կյանքում յերկրորդ ման-  
կության,  
Զքանում են ժամերը թախծության և անձկության:

ՄԱՐՆԱՎՈՐՎԱԾ ՅԵՐԱԶԱՐ

Սեր յերկնահեց լեռներում, մեր ձորերում՝ խորախոր,  
Մեր նորահերկ դաշտերում, ուր բացվել ե ուրախ որ,

Մեր հնամյա գյուղերի, քաղաքների վրա մեր  
Յես տեսնում եմ՝ թոչում են յերազների յերամներ.

Յերազների յերամներ, բյուր կարոտներ և իղձեր՝  
Աղնքան մաքուր, վոր անցյալ վոճիրներն իսկ չեն  
պղծել:

Նրանք թռած, գալս են, եյ, դարերի յետեից,  
Ցեվ որեոր աճել են մինչև յեկել հասել ինձ:

Ու տեսնում եմ յես, ահա, թռչուններն այդ տարադիր,  
Վոր ծնունդ են դարերի տառապանքին կրկնակիր:

Ո՛, շատերն ինձ ծանոթ են, դուցե մի որ մանկական  
իմ հոգուց են դուրս թռել, վոր այսոր յետ կրկին

գտնու

Դուցե նրանք թռել են մի տքնաջան հոր սրտից,  
Մի մայրական ջերմ կըծքից, վոր լույս-կաթ ե տվել  
ինձ...

Դուցե նրանք հույսերն են, դարեր առաջ, մի յեղբոր,  
Վոր տքնում եր անպուղ, մնում նոթի, ակնկոր.

Կամ հեռավոր մի քրոջ սրտի իղձերն անկատար,  
Վոր ազատ սեր յերազեց՝ սրտին կապանք ու կապար:

Դուցե քերթող մի սրտի՝ արջի կոտրած փեթակից  
Փախած յերգի մեղուներ, վոր փնտրում են հիմա ինձ...

Բայց շատերն ինձ եյությամբ անծանոթ են և ոտար.  
Եյ, ով գիտե, ծնվել են ինձնից առաջ քանի՛ դար:

Բայց ամենի թեսերին մի նիշ կա ինձ հարազատ,—  
Տառապանքի կնիքը՝ հույսի շողով հարազարդ:

Յեկ այդ նիշն ե, այդ նիշն ե անջնջելի միշտ գրված.  
Վոր մեր աշխարհը նրանց դարձընում ե հանգրվան:

Ահա, վորպես թիթեռներ՝ միշտ ծաղկասեր, լուսաբաղձ,  
Նրանք իջնում, թառում են մեր դաշտերին նոր ծաղ-  
կած:

Նրանք, վորպես լույսի շիթ, վորպես կաթիլ արևի,  
Մորում են վար ու ծեփվում մեր նոր տաղած

Քարերին:

Վորպես հոռյակի պսակում, վորպես կամքի կարմիր  
փայլ,  
Շողշողում են աշխատող գեմքի վրա տիրակալ:

Մանուկների աչքերում, մեր ջրերի պես վճիտ,  
Խլստում են այդ իղձերն, իբրև ծիծաղ ու ժպիտ:

Ու հիմա յել յերբ յես այս յերգի տողերն եմ գըում,  
Նրանք իբրև լույս խմաստ փոյլում են իմ տողերում...

Ո', ամենուր, ամեն ուր, վոր նոր կյանքն ե խլստում,  
Մարմնավորված իջնում են այդ յերազներն ու նստում.

Նստում են մեր լեռներին, մեր ձորերին խորախոր,  
Մեր դաշտերին կանաչած, ուր բացվել ե ուրախ որ:

1988

## ԱՐԱԴԱԾԻ ԿԱՆԹԵՂՆԵՐԸ

### ՆԱԽԵՐԳ

**Յ**ես մշտարաղձ, սիրով անհուն  
Բարձրանում եմ Արագած,  
Խնչպես յերդիչն ալն մեծանուն  
Մի որ գնաց դեսլի Հարց!

**Ո**'վ մեծ Հայնե, դու բարձրացար  
Լեռները Հարց՝ յերկնահաս,  
Վոր բարձունքից ալն՝ վեհարար  
Ներքե նայես ու ժպտաս.

**Ա**ռցող Ժալտով նայես ներքե  
Մարդկանց ճղճիմ, կեղծպարիշտ,  
Նրանց սրտում բանաս վերքեր,  
Քնքուշ խոսքով տաս մեծ վիշտ:

**Դ**ու բարձրացար լեռները Հարց,  
Վոր անցյալի մեջ նայես,  
Խրճիթներում խոնարհ մարդկանց՝  
Յերգեր յերկնես, հմայես.

Վոգեկոչես անցյալը պերճ,  
Ասպետական ու գերող՝  
Կախարդական տեսիլքի մեջ  
Մեր վորոնես յերգերով...

Ինչպես վոր դու, մեծ Անհանգիստ,  
Ճամբար ընկար դեպի Հարց,  
Բարձրանում եմ յևս վեհանիստ  
Շքեղ մեր լեռն՝ Արագած,

Բարձունքներից իմ հայրենի՝  
Դիտեմ կյանքը մեր նորոգ,  
Մեր աշխարհը հնամենի՝  
Վերածնված, լուսոռոց:

Հայրենիքիս հիանալի  
Ներկան տեսնիմ առնական,  
Նրա անցյալն արյունալի,  
Յերանավետ Ապագան:

Ինձ քո մտքի թոփչքը տուր  
Յեվ քնքշություն, նրբություն, —  
Ինձ անհաս են խոսքերդ սուր  
Յեվ հեգնանքդ՝ վերք ու թույն:

Յեղիր ինձ հետ, հանճար անմեռ,  
Վոր բարձրանանք հիմա Հարց,  
Ընդունիր մեղ հայրենի լեռ,  
Հրաշալի Արագած:

## ԱՐԱԳԱԾԻ ԿԱՆԹԵՂՆԵՐԸ

Լույս ե տալիս յերկամբ գաղեց  
Ու զառվում են միշտ տնչեց  
Սուրբի մաքուր արցունքները  
Յուղի տեղակ նրա մեջ.

Հովհ. Թումանյան  
Անկե լցված, անոր ջինջ արտա-  
սուքեն՝ յուղի անդ,  
Պլալացնդ քաղցրությամբ, պլ-  
պլալիք միշտ կանթեղ...  
Վ. Թեքեյան

Ձավատացին նրանք քեզ,  
Վոր կախված ես դու այդ տեղ:  
Արագածի մշտակեղ  
Ծնորական հին կանթեղ:

Այս աշխարհում՝ հորդաբուղիս  
Արցունքն եր լոկ միշտ առան.  
Կարծեցին, վոր իրը յուղ  
Վառվում ե նա անարատ,

Հավատացին թե քո մեջ  
Վառվում ե նա և բարի  
Էղւյս ե տալիս, հույս անշեջ,  
Մեր մթամած աշխարհին,

Արագածի բարձունքին  
Քեզ յերբեք վառ չտեսան.  
Հավատացին արցունքի  
Ուժին միայն սրբազան:

Արցունքն յերբեք աշխարհում  
Ուժ չի յեղել փրկության,  
Չի ցոլացել խավարում,  
Լույս չի տվել վոչ մի տան:

Արցունքներից առավել  
Մշուշելով աչք ու սիրտ՝  
Ծնորել, են, տառապել  
Մեր հայրերը միամիտ...

Նրանք հեռուն չտեսան,  
Նեղ պատյանից չելան դուրս,  
Այն ցնորդի լույսից զատ  
Չունեցան այլ վառվող հույս:

\* \* \*

Սակայն դու յԵրբ վառվեցիր,  
Կանթեղ, քեզ յԵրբ վառեցին.  
Արագածում ձյունածիր,  
Մեր աշխարհում վերածին:

Իրական ես դու, շքեղ  
Կարմիր կանթեղ մշտակեղ.  
Ասազերի պիս դունագեղ  
Բյուր լույսեր են պատել քեզ:

Աշխատանքի, տքնության  
Մարդկանց ձեռքով վառված հիր  
Նոր, ճիշտ ուղին փրկության  
Մեր աշխարհին ցույց տվիր:

Դու վառվեցիր՝ մեր հոգում  
Եերբ արցունքի տեղ անզոր՝  
Մեծ զայրույթն եր բորբոքում  
Ասելությունն ահավոր:

Դու վառվեցիր, յերբ մեր կույր՝  
Հավատի տեղ՝ ույժը մեծ  
Տվեց կովի կամք ու սուր:  
Հաղթանակի փառք տվեց:

Դու վառվեցիր, ցնորսքի  
Այն կանթեղը փշրվեց,  
Յերբ մարտնչող մեր վոգին  
Կապվեց պայքարներին մեծ:

Դու վառվեցիր, Հյուսիսից  
Յերբ շողջողաց Այդը մեծ  
Ու մշտավառ իր լույսից  
Քեզ վառվելու ույժ տվեց...

Ու վառվում ես հիմա դու  
Մեր լեռներում՝ ամեն տեղ,  
Ազատության լուսատու  
Նոյեմբերյան մեծ կանթեղ:

1984

Կ Ա Ն Զ

Թանկագին Ավ. Խանակյանին

Անցել ե նա այստեղից,  
Գուցե՝ նստել այս քարին,  
Սրտում կարոտ ու թախիծ,  
Ապավինած քնարին:

Յերազել ե՝ աչք հառած  
Յերկնի դալուկ կանթեղին,  
Յերազն ե այդ՝ կյանք առած  
Գուցե՝ թիթեռն այս գեղին:

Ունկընդրել ե ջրին այս.—  
Տարված տխուր մի սիրով  
Այս ջրերգի նման պարզ  
Սիրո յերգեր հյուսելով:

Յերգել ե նա հիացքով  
Ծաղիկները այս անրիծ,  
Վոր ջարոյի հայացքով  
Նայում են դեռ հիմա ինձ.—

Յերազել ե ու յերգել  
Հայացքն՝ յերկնի աչերին-  
թողել յերգեր ու վերքեր  
Արագածի լանջերին:

Յերգել ե նա սեր ու վիշտ,  
Սիրո արցունք, յերկնի ցող,  
Ու յերգերի վրա միշտ  
Տխրության մի անանց քող...

Եյ, մւը ես դու, հեռավոր,  
Իմ բարեկամ, անձկալիս.  
Յերգիդ նման թևավոր՝  
Ինչմւ, ինչմւ չես գալիս:

Նստած ահա այս քարին,  
Ուր նստել ես մի որ դու,  
Քեզ՝ եմ կանչում, եյ, արի,  
«Ծտից թե առ, արի տուն»:

Արի՝ նորից Արագած,  
Տես՝ թե չքնաղ մեր յերկրում,  
Գարնան հազար դույն հազած՝  
Ի՞նչ կյանքով ե նա բերկրում:

Դեռ յերբեք նա չի տեսել  
Այսպիսի կյանք ու գարուն,  
Այսքան խորունկ սիրտ ու սեր,  
Ճնծություններ վարարուն:

Մաղիները յերբեք դեռ  
Չեն ցոլացել այսքան վառ՝  
Մրտերի մեջ սիրաջեր,  
Աչքերի մեջ մեր պայծառ:

Զինջ ջրերի կարկաչին  
Այսքան դաշն վոչ մի ձայն  
Չի զողանջել այս լանջին,  
Քան յերգը մեր խնդության:

Սև տխրության վոչ մի ամպ  
Մեր սրտերին չի չոքում.  
Կյանքն անստվեր խնդությամբ  
Արևում ե մեր հոգում:

Մեր աշխարհում բյուրեղե  
Արագածն ե զողում վառ,  
Այսքան շքեղ չի յեղել  
Քո յերգերում վոսկերան:

Աստղերն իջել յերկնից ցած՝  
Վառվում են այս լանջերին.  
Մասիսն հեռվից հիացած՝  
Զի հավատում աչքերին...

Յես խնդությամբ ըռնկած՝  
Արագածի այս կողին,  
Կանչում եմ քեզ Արագած,  
Քեզ, Արագածն յերգողին:

Ապավինած քնարիդ՝  
Շատ ես տիրել այստեղ դու,  
Հեռուներից տուն արի,  
«Մենք քեզ կտանք խնդություն».

Նստած ահա այս քարին,  
Ուր նստել ես, թախծել դու,  
Քեզ եմ կանչում՝ շնոր արի,  
«Մտից թե առ, արի տուն»:

1984

## ՀՈՂԻ ԶԱՅՆԸ

Կարյուրամյա մի ծերուկ ինձ ասաց՝ «տես,  
Ճերմակել եմ Արագածի գլխի պես。  
Մերացել եմ, սակայն հոգով, —այդ հիշիր, —  
Մնացել եմ դեռ պատանու նման ժիր:

Դլուխոդ դիր կրծքի վրա այս մեծ մոբ,  
Լսիր նրա սրտի զարկը կրծքում խոր,  
Վոր հասկանաս թե հասակում այսքան ծել  
Հոգիս ինչպես պատանի յե մնացել...»

Յես գլուխս դրի հողին քարքարոտ  
Ու լսեցի կարծես խեղդված մի վորոտ,  
Ձայնը խուլ եր, ձայնը խոր եր, հեռակա...  
Պատրմնք եր այդ, դյութմնք, թթ ձայն իրական:

«Ձրի ձայն ե, լամմ ես դու, ջրի ձայն, —  
Ձրի ձայնով՝ ուրախ ասաց ծերուկն այն, —  
Յես ականջս հողին դրած այդ ձայնի  
Յերգն եմ լսել ու մնացել պատանի...»

Կենդանության, կյանքի ձայնն ե այս հողի,  
Վոր բացել ե իրեն համար նոր ուղի:  
Հնդացել ե հողի վրա դարերով՝  
Դողջագուրսված լեռնաշխարհի արևով...

Կարկաչել ե ջուրն այս լերան լանջն ի վար,  
Ուրախության յերգի նման կենարար...  
Բայց դարերով մի ահռելի տառապանք  
Խորտակում եր այս աշխարհում ամեն կյանք...

Ու բոնակալ հորդաներից առաթուր՝  
Չղտնելով աղատության վոչ մի դուռ  
Զուրը անգամ, հողի ձայնը մշտարթուն,  
Ընտրեց իրեն ստորհողյա մի նոր հուն  
Երբ ավեր եր մեր կյանքն ամբողջ, անապատ,  
Վորստում եր ջուրն ընդերքում անընդհատ,  
Կենդանության միակ նշանն աղեկեզ  
Բարախում եր վիրավոր մոր սրտի պես:

Յես զլուխս դրած կրծքին այդ խորտակ  
Նրա սրտի դարկն եմ լսել կենսունակ.  
Ճրի ձայն եր, կյանքի ձայն եր, կամ թե այն  
Վոտնաձմյնն եր միշտ ընթացող պատմություն...

Յես լսել եմ և զգացել վոր անմեռ  
Այդ ձայնը միշտ մոտենում եր, յելնում վեր.  
Այդ ույժը մեծ, հողի ձայնը կենդանի  
Պահել ե իմ վոգին այսպես պատանիք:

«Եմերուկ, գուցե դա պատրմնք ե,— հարցըրի,—  
Յեվ վհչ ձայնը քո սպասած այն ջրի...  
Մեր կյանքն արգեն զրնգում ե, կարկաչում,  
Այդ ի՞նչ ձայն ե դեռ հնչում քո ականջում»:

Ու ծերուկը պատասխանեց ժպտադեմ,—  
«Զրնգում ե մեր աշխարհը, այդ գիտեմ,  
Ու հենց ձայնը մշտակենդան, ջուրը այն  
Քարձրացել ե, վոռոգում ե կյանքն համայն»:

Կարկաչում ե կյանքը հիմա նոր; անհուն,  
Ու տալիս ե խոր արձագանդ ու գանգյուն,  
Յեվ այնտեղ, ուր կյանքի ձայնն եր խով թնգում,  
Հիմա նրա արձագանդն ե դղբդում...»

Դու գլուխդ հողի կրծքի վրա դիր,  
Հողը՝ մեծ մոր սրտի նման վշտակիր՝  
Քեզ կալանդե միայն ձայնը ճշմարիտ,  
Ու թող կրկնեն այն՝ լարերը քնարիդ»:

1984

ՔԱՐԵ ՎԻՇԱՊՆԵՐ

Զարհուրելի վիշապներ  
Թարամարմին, քարասիրտ,  
Զեղ յերբեք չե՛ շոշափել  
Ժամանակի ձեռքը բիրտ,  
Վոր կանգնել եք անվթար  
Այդպես ահեղ, դարեղար:

Ժամանակը, այդ անահ  
Միակ գազանն անընտել,  
Զեղ չի տվել ահ ու մահ,  
Դուք եք նրան կուլ տվել  
Ու կանգնել լուս, ակնապիշ  
Խնչպես հեգնող հարցանիշ:

Պատմում եք դուք համրաբար  
Թե՛ քանի՛ ազդ ու ազինք,  
Տիրակալներ անհամար՝  
Սպառազեն կամ անզենք  
Անցել են այս աշխարհից  
Փռել ավեր ու թախիծ:

Արդյոք մյու ե, միայն մյու  
Խմաստը ձեր գոյության,  
ԹՇ հայացքում ձեր անթարթ,  
Ծալքերում ձեր լոռւթյան  
Մի հին խորհուրդ կա խորին,  
Վոր անհայտ ե բոլորին:

Այն յերկրում հին, հեռակա,  
Ուր Նեղոսն ե գեռ հոսում,  
Սփինքսներ կան խոլական,  
Հասկանում են ձեր լեզուն.  
Դուք խոսում եք նրանց հետ  
Ձեր լոռւթլամբ անհեթեթ:

Դուք բլուրամյա մարդկության  
Մանկությունն եք միշտ հիշում,  
Խնչպես յես իմ մանկության  
Որերն արնոտ մշուշում,  
Ռ'վ պատմության վկաներ,  
Անսիրտ ու լուռ հսկաներ:

Փոթորկվում ե իմ հոգին  
Անցյալի, դեմ մթասե.  
Խսկ դուք լուռ ու անհոգի  
Վորքան վաճիր եք տեսել  
Ու նայում եք, նայում դեռ  
Ամեն ինչին անտարբեր:

ԹԵ դարավոր արնածով  
Ավերումին աղեկեղ  
Ականատիս լինելով  
Չեք դիմացել և այսպես  
Սոսկումներից ահազին  
Քար ե կտրել ձեր հոգին:

Տեսէք, այս հին մեր յերկրում,  
Որրանում ձեր մանկության,  
Մենք կերտում ենք ու յերկնում  
Բախտն յերջանիկ մարդկության.  
Ժպտացեք դուք գեթ հիմա,  
Մ' սփինքսներ մեր անմահ:

3984

## ԼԵՌՆԱՑԻՆ ՆԱՂԻԿ

Գեղադիր մի ժայռի վրա բարձրաբերձ,  
Վոր չի հոգնել դեռ դարերը համրելուց,  
Շողլողում ե կենսաթրթիռ, յերկնամերձ  
Լեռնային մի չքնաղ ծաղիկ անմատույց.  
Բուլը ե տալիս, թույր ե տալիս ու համբույր  
Միայն սարի զեփյուռներին մշտասույր:

Քանի՞ գարուն, քանի՞ սերունդ նա այնտեղ  
Ծաղկել ե վառ ու ժպտացել առանձին,  
Մինչ ներքեսում՝ մարգերի մեջ՝ մի ահեղ  
Խշրացով որորվել ե գերանդին,  
Նա պահել ե ժայռի վրա թույր ու բույր՝  
Միշտ անմատույց ավերներին առաթուր:

Իմ լեռնային ու հին յերկիր, Արագած,  
Վոր բացվում ես անմարելի գույներով,  
Դու պահել ես դարեր, դարեր հավաքած  
Գույներ, բուլրեր ու մշտավառ մի կորով.  
Պահել ես այդ, լերք մեր յերկրում ամեն ուր  
Սուրը հանած թափառել ե մահը կույր:

Խնչ պահել ես քո ժայռերում անմատուց,  
Հիմա այս մեր արևի տակ նոր ծագած,  
Հողի վրա այս արգավանդ, հինավուց,  
Փարթամորեն աճում է, ով Արագած,  
Աճում է այս նոր աշխարհում բազմաթույր  
Յեվ ունի յուր բույրը հատուկ, գույնը յուր:

1984

Մ Ա Յ Ի Ս 1920

ՀԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՅԵՐԵԿՈ

Սոր սրտի պես սիրով՝ ջահը գեղանի  
Մազում եւ վար ջերմությունն իր անվազ,  
Գուրգուրելով գլուխները ալեմազ,  
Վոր հակված են լայն, թավշերես սեղանին:

Պարտիզաններ, բանվորներ են ապստամբ,  
Հերոսական, պերճ փայլ տալով սրահին՝  
Նրանց կրծքին, սպիսների վրա հին,  
Շողջողում են նշանները վեհությամբ:

Նրանք,—ինչպես գուսաններն են վիպերգում,—  
Պատմում են մեզ հերոսական դրվագներ  
Մայիսյան մեծ ընդվզումից, նվագներ,  
Վոր զողանջով ծավալվում են մեր հոգում:

Շշակներն են դուրս աղմկում տենդագին,  
Գնացքներն են զղրդացնում շուրջը մեր...  
Բայց կլանված ու պահած մեր շունչը, գեռ  
Աւսկընդիր ենք միայն նրանց նվագին:

Ու ներկա յե դառնում անցյալն արնալերդ,  
Խսկ մեր ներկան դառնում գալիք անձկալի՝  
Ու գնում ենք մարտի ընդդեմ անցյալի  
Այս ապստամբ բանվորների գնդի հետ...

1886

## ՄԱՅԻՍԻՆ ԵՐ...

Մայիսին եր, վոր զնգաց մեր աշխարհում մի նոր հիմն,  
Կռվի կարմիր բառերով,  
Մայիսին եր, վոր անցավ ըմբոստության մեծ վոդին  
Մեր ձորերով, սարերով,  
Մայիսին եր, վոր բացվեց գարունը մեր յերկրում հին,  
Ուր ձմեռ եր դարերով:

Վորքմն վարդեր բացվեցին մեր աշխարհում ավերակ,  
Վորքմն սրտեր վարդի պես,  
Վորքմն աչքեր բացվեցին հոկտեմբերյան լույսի տակ,  
Վորքմն հույսեր հրակեղ,  
Վորքմն վեր եր բարձրացել փրկության մի արեգակ,  
Վորքմն մոտիկ եր նա մեզ:

Մայիսին եր, վոր նորից ձմեռ յեղավ տարաժամ,  
Ո՛, բռնության չար վոգի,  
Մայիսի վառ վարդերը վար թափվեցին այդ դաժան,  
Շառաչի տակ սառ բռւքի,  
Մայիսի մեծ ընդլացման հերոսները՝ դրոշակ՝  
Հանձնվեցին խարույկի:

Դարնան շունչը, սակայն, խոր թափանցել եր ամեն ուր,  
Վորքան բուքը գաղաղեր,  
Դարունը մեր պիտի դար, բերեր վարդերն իր պուրպուր,  
Բերեր նոր կյանք ու նոր սեր,  
Դարունն աշնանը յեկալ, բերեց այնքան կամք ու հուր  
Ցել վերածնեց կյանքը մեր:

Նոյեմբերին Մայիսյան յերդը զնդաց, մի նոր հիմա՝  
Վերջին կովի բառերով,  
Նոյեմբերին սլացավ ազատության մեծ վոգին  
Մեր ձորերով, սարերով,  
Նոյեմբերին բացվեց վառ գարունը մեր յերկրում հին,  
Ուր ձմեռ եր գարերով:

1986

## ՄԵՔԵՆԱՎԱՐԵ

Աայում եմ քո աչքերին, մեքենավաս ալեզարդ,  
Այնտեղ վորքամն կրակներ, հույզեր կան ինձ հարազատ։  
Թովում ե քո աչքերի խորությունը հեռավոր,  
Ինչպես վճիտ աղբյուրն ե կանչում մարդուն վիրավոր։  
Քո հայացքի գծերով,—ուղեփակն ե արդեն բաց,—  
Խոյանում ե հայացքո, վորպես գնացք սրբնթաց։  
Քո ոչքերի դրներով թափանցում եմ հոգիդ ջինջ,  
Ուր բացվում ե մի աշխարհ տեսիլքի պես հմայիչ։  
Այդ աշխարհում, և, վորքան հարստություն, վորքան-  
գանձ,  
Վորքան հուրեր մշտարծարծ, վորքան կյանք կա  
կուտակած։  
Այդ գանձերից մեկը թող հիմա հանեմ ասպարեզ,  
Յերգս զուգիմ նրանով ու այդ յերգն ել ձոնեմ քեզ..

Ահա որերն հեռավոր տարիների յետևում...  
Համատարած խավարում ինչ լույսեր են յերեսում։

Յերկու պողպատ գծերի վրա մի վեհ խստությամբ  
Զրահապատ գնացքն ե ահա կանգնել ապստամբւ

Նրա աչքերն են կիսում խավարն ամբողջ շրջակա,  
Ուր մի հզոր պոռթկումի, ըմբոստության շունչը կա-

Նրա աչքերը, վորպես ազդանշան ընդվզման,  
Դուժում են խիտ խավարին սկիզբն ահեղ փլուզման:

Ու պոռթկում են դուրս ահա բանակները տքնության,  
Վոր մահամերձ մեր յերկրին ազատություն ու  
կյանք տան:

Ու ծաղկում ե Մայիսը կրակներով բյուրավոր՝  
Կրծքի վրա մեր յերկրի, վոր ընկած եր վիրավոր:

Ու Հյուսիսի այդը մեծ, հոկտեմբերյան շունչը տաք  
Զիրմացնում ե մեր կյանքը, վորպես անմար արեգակ...

Զրահապատ գնացքը, վոր սլանում ե ազատ,  
Դիւ յես վարում ապստամբ, մեքենավար ալեգարդ...

Ես քո հոգու մեջ գտա այն որերի մեծազոր  
Ըմբոստության կրակը, վոր վառվում ե մինչ այսոր:

Այդ կրակով շողջողա թող հոգերուղիս յերգն իմ այս,  
Վոր յես քեզ եմ նվիրում, մեքենավար ալեմազ:

## ՄԵՇ ՊԱՏԱԽԻ

Դրւկաս Դրւկասյանի հիշատակին

Քսանամյա պատանի,  
Լերան արծիվ անդադար,  
Քեզ մվ տվեց տիտանի  
Ըմբռատության հուրը վառ:

Պատանեկան քո հոգում  
Այդ լինչ ուժ եր առնական,  
Վոր քեզ այրում, բորբոքում,  
Մզում եր դեպ ապագան:

Պատանեկան կարկաչի  
Յերգը՝ հոգում քո արի՝  
Զուզակցում եր շառաչին  
Յեվ ամպրոպին պայքարի:

Պատանեկան հայացքիդ  
Խորության մեջ այնքան ջինչ  
Վառվում եյին մեր կյանքի  
Կրակները հմայիչ:

Թսանամյա պատանի,  
Ճերան արծիվ հոյափառ,  
Քեզ մվլ տվեց տիտանի  
Ըմբռստության հուրը վառ:

Բանաստեղծին անվանի  
Ո՞վ ե տալիս անմահ բոց,  
Վոր մեղ դյութե ու տանի  
Յերգի հանճարն ալեկոծ:

Կամ վարպետին ձեերի  
Ո՞վ ե տալիս գույն ու գիծ  
Վոր շուայլ ե անթերի  
Դեռ պատանի հասակից:

Այդպես եյիր դու լցված  
Ըմբռստության տարերքով,  
Դա հանճարն եր՝ բռնված  
Ազատության յերկունքով:

Քսանամյա պատանի,  
Լերան արծիվ նետահար,  
Քեզ մվ տվեց տիտանի  
Հմբոստության հուրը վառ:

Տառապանքը ահավոր  
Հողի մարդկանց քրտնասուն՝  
Դրել եր քո հոգում խոր  
Հմբոստության սաղմը սուրբ:

Լենինյան մեծ հանճարի  
Արևի տակ բուռն աճեց  
Քո այդ վոգին քաջարի,  
Ու պատանի՝ դարձար մեծ:

Այգաբացին վողջակեղ  
Դարձար, սակայն դեռ քանի՛  
Կովի դու մեզ կտանես,  
Քսանամյա պատանի:

1985

## ԽԱՐՈՒԹԿԻ ՎՐԱ

Ս. Ալանվերոյանի, Բ. Ղաջեթևանյանի  
յեկ Ս. Մուայելյանի հիշատակին

Այստեղ, ձորակում այս քաղաքամերձ,  
Զեր դահիճները՝ արնաշուրթ վոխի  
կատարեցին դարչ պղծություն իրենց,  
Զեր շքեղ կյանքը դարձրին մոխիր:

Դուք, վոր ուզեցեք յերկրում ավերակ  
Մեր կյանքը շարժել, վարել նոր հունով,  
Այրվեցիք արնոտ խարույկի վրա,  
Ինչպես վոր այրվեց. Զորդանոր Բրունոն:

Դուք նահատակներ դարձաք, միշտ անմտհ,  
Վկաներ մի նոր, վեհ դավանանքի,  
Վոր այսոր շողում, վառվում ե անմար,  
Վորպես վոգին մեր այս ազատ կյանքի:

Այն աշխարհը սև, մոալյ անհոգի,  
Վոր ձեղ խարույկով դարձրեց նահատակ:  
Հիմա, հանձնված մի խոլ խարույկի,  
Փլվել ե արդեն մեր վոտների տակ:

Ու նրանք, վոր ձեր կյանքը մեծազոր  
Հանձնեցին խարույկին, —այսոր մարած, —  
Կթողնեն կյանքում արյունոտ մի լոր  
Ու մի սև անուն՝ հավերժ խարանած...

Իսկ դուք չեք դարձել վոգիսպառ մոխիր,  
Վոր մոռացությունը հողմահարի,  
Դուք կաք և ամեն մեր քայլափոխին  
Հանդիպում եք մեզ մեծ ճանապարհին:

Մեզ հետ եք դուք մեր պայքարում ահեղ,  
Մեզ հետ եք ստեղծագործության ժամին.  
Մենք ձեր վոզին հնք մեր սրտում պահել,  
Վորըն անզոր եր այլել թշնամին:

Դուք դեռ ապրում եք և կապրեք դարեր,  
Սերունդների հետ, քանի կապուտակ  
Յերկնքում շողա մի պայծառ արե  
Յեվ կյանք բարախե այդ արևի տակ:

1985

## ՍՈՆԵՑՆԵՐ

ԿԱՏԱՐԻՆԵՑԻՆ

Անցյալի նման ծանոթ, պարզ ես դուք,  
Յեվ բաղձալի յես դու, վորպես գալիք,  
Առավոտվա պես թեթև, անձկալի,  
Վորպես յերեկո՝ ծանր ու խմաստուն։  
  
Յերբ աչքերիդ մեջ լուռ խոհն ե նստում,  
Կամ խինդն ե հոսում ալիք առ ալիք,—  
Լսում եմ լերդը արևագալի,  
Կամ մայրամուտի մեծ վեպն եմ թերթում...»

Յեվ ինչժռ յես դու, ով իմ ցանկալի,  
Այդքան հարազատ և այդքան ազդուն,—  
Ո՛ դու բերել ես քո հետ անցյալից

Խչ միայն լավն եր, և այն ունես դու  
Խչ վոր տալու յե գալիքն ըղձալի,—  
Վաղվա հույզերիս չքնաղ կենսատու։

## ԴԱՄԵՐԻ ԱԹԱՎՈՑ

Առավոտներ կան, վոր բացվում են բյուր

Դարերի համար և սերունդների,—

Անհուն առավիտ մեծ Հոկտեմբերի,

Գալիք դարերի առատ լուսաղբյուր,

Բացված ժպտում ես կարմիր, համասփյուռ

Մեր մեծ աշխարհի բոլոր ծերպերին,

Ու մեր աշխարհի դյութիչ ափերից

Հորձանք ես տալիս աշխարհում հանուր...

Յեզ ողակ-ողակ այս մեր մարտերի

Առավոտների միջով ընթանում,

Դու, վոր մեր յերկրին նոր կյանքը բերիր,

Գալիքի համար մեր փառքն ես տանում,

Մեր պայքարի մեծ վոգին, անթերի՝

Ստեղծագործության կորովն անհատնում:

1989

## ՆԱՀԱՆ

Կան նոր կարոտներ և նոր հույզեր կան,  
Նոր բաղձանքներ կան՝ դեռ ինձ անծանոթ,  
Վոր վառ դույների նոր ծիածանով  
Գոտեսորում են իմ աճող ներկան:

Տեսնում եմ արգեն յերգերս չերգած՝  
Դրոշների պես հեռվում ծածանող,  
Նրանք դաշնում են հոգեբուղիս ձայնով  
Իմ նոր հույզերի քայլերգը զնդան...

Յես եմ նրանց դեմ սիրտս բաց անում  
Վոր տիրեն հույզերն այն նոր աշխարհի,  
Ինչ կառուցվում ե մեղնով, ինձանով...

Այդ տիրապետման հաղթական պահին,  
Իմ ներաշխարհի մի խուլ կածանով  
Նահանջում են իմ կարոտները հին:

## ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒ ՑԵՐԳ

Այսոր մի ձայն՝ ներքին, մտերմական  
Աշխատանքի ժամին իմ ականջին  
Անբառ խոսքեր ասաց, և բազմաճիչ  
Գործի շառաչի մեջ հալվեց, հանգավ...

Սակայն աշխատանքից յերբ տուն յեկա,  
Արձագանքը այդ անբարբառ կանչի, —  
Նման հեռվից հնչող մի դողանջի, —  
Յերգի մարմին առավ, տողեր հագավ...

Ու փողփողաց աչքերիս դեմ վճիտ,  
Վորպես դրոշ կարմիր, վորպես պատգամ, —  
Ու չիմացա՝ յթրդն եր այն իմ գրչի,

Թթ այն գործի վողին, թեեր հագած,  
Սավառնում եր զլսիս և կանչում ջինչ  
Ինձ դեպի մեր գալիքն անեղբական!

## ՏԵՂԱՆՔ

Արտի անհուն տրոփով եմ սպասում  
Ամեն գիշեր՝ ճեղքվող կարմիր լուսայդին,  
Անցած որվա իմաստությամբ իմ հոգին  
Բեռնավորված՝ նոր որվան եմիշտ վագում...  
  
Մեծ առորյան,—վոր նույնիսկ այս ավագում՝  
Շաղախի մեջ նոր կառուցվող այս զենքի՝  
Հույզ ե դնում,—իմ սրտի մեջ կրկնակի  
Կուտակում ե հազար բաղձանք ու հուղում...  
  
Ահա մղված այդ ուժերից անձկագին  
Յեվ ապրելով փոխանցումի փլուզում,  
Յես փարվում եմ առավոտին այն կյանքի,  
  
Վոր կերտվում ե ամեն վայրկյան քրտնասուն.  
Ու տենչում ե հոգիս նրան անհանդիսա  
Ամեն վայրկյան, նույնիսկ, նույնիսկ յերազում:

ԿՅԱՆՔ ՈՒ ԹՈՒԶՔ

— „Պոետի համար ել չկա յերազ...  
Մեր կյանքն ավելի շքեղ ե, թովիչ,  
Քան ըյուր ցնորքի, տենչանքի հովիս,  
Քան հազար սիրո հեքյաթ ու միրաժ...”

Յելի՛ր, քնարիդ լարերի վրա  
Հնչեցրու յերգը կովի, կորովի,  
Յերգի հորձանքով կյանքը հոլովիր,  
Միմիայն հովին վոտդ պինդ դրած...»

— «Սակայն, բարեկամ, փոթորկոտ ծովի  
Բաղխումների մեջ մեր այս առողյա,  
Պոետի վոգին մաքառման, կովի

Հզուր թոիչքի սուր թևեր առած  
Գեաք ե վեր թռչի, հաճախ յերգով իր  
Տեսնի դեռ անհայտ ափեր վարարած:

1982

## ԽՈՐՀՈՒԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

1

### Հազարամյա նախերգանք

Ար հաղարամյակն և հիմա կյանքիդ,  
Արարատյան աշխարհ, ոռւ հին յերկիր  
Անվարձ տքնության ու լացող յերգի,  
Ակտի նախճիրների, խրախճանքի:

ՅԵՐԵ եր, մարդդ՝ վստահ անդուլ ջանքին՝  
Գծեց իր առաջին ակոսն հերկի,  
Վոր հետո նրան արյունով ներկի  
Գալիք ամբողջ բանակն աշխատանքի:

Ո՛, քանի՞ դար կալի, տառապանքի  
Սերմ ես ցանել և սպասել բերքի,  
Տիրել և սպասել մեծ բերկրանքին:

Դեռ նոր բացվեց առավոտդ անգին,  
Անցյալդ եւ մի գիշեր, նա նման է յերգի՝  
Հերոսական վեպի նախերգանքին:

## 2

## Նոյեմբերյան կրտի

**Տ**արիներով հեռու յենք մենք գիշերից այն,  
Նոյեմբերյան ցուրտ գիշեր, մահագույժ աշուն.  
Կյանքն անհույս մի յերգ ուներ սրտմաշուկ՝  
Մարդուն դեպի մահ հրավիրող մի ձայն.

Սակայն պայթեց մի ըմբոստ հրացան,  
Խավարում շողաց փրկության դաշույն...  
Գիշերը քաջեց թևերն արնաշուք,  
Կյանք ու առավոտ մեկից լուսացան:

Ու վորոտներից այդ առավոտյան,  
Դրոշակներից վառ կենսաշղուկ  
Պոետներն իրենց կրակն ստացան:

Կույր հոգիները շատ ուշ իմացան,  
Վոր արդ կրակներն, յերգերն հրաշունչ  
Անթեղված եյին գիշերում անցած:

1982

3  
Աւելիոր լուսարձակ

Տքնություն եյիր, քրտինք ապարդյուն,  
Տառապանքի դեմ լոկ լոին բողոք,  
Ապա դու քինով լիցվեցիր, վոխով  
Ցասմամբ, զայրույթով վրիժառու մարդու:

Հետո ընդվզում, կոխվ դարձար դու,  
Վեհ ըմբոստության դրոշ փողփողոզ,  
Ապստամբության մեծ սուրն անողորմ,  
Վոր միշտ արյամբ և իր ուղին հարթում:

Հիմա դու կյանք ես և ազատություն,  
Դու նոր աշխարհն ես պայծառ, լուսողոզ,  
ՅԵվ յերդ ես սրտում, և՛ հաց ես արտում:

Քո դեմ զալիքն ե բաց հուրիքատում,  
Ու լուսավորված նրա շեկ շողով  
Քո վերելակն ես կառուցում անդուլ:

## ԱՆԿԱՊՏԱԼԻ ԴԱՆԱ

Շնթափել ե վոգիս աղատ բեռը հին,  
Յեզ միտք, և' սիրտ հողոտող մի դեղին մաղձ,—  
Հողարամյա մոլություններն ընշաքաղց,  
Վոր դարեղար տիրում եյին աշխարհին:


Պաշտամունքը չունիմ հանգեպ իրերի,  
Զկա նախորդ մարդու տենչը՝ վոսկերաղձ,  
Ինձ տրված ե անկապտելի մի նոր գանձ,  
Մեծ պարգևը հոկտեմբերյան որերի:

Աշխատանքի դու իրավունք սրբազան,  
Աշխատության հաճույք վեհ ու կաթոգին,  
Վոր տիրում եք մեր աշխարհում անսասան:

Դուք լցրել եք նոր հույզերնիկ իմ հոգին,—  
Գանձ անսպառ, անկապտելի, լուսավոր,  
Վոր ջատանում, մեծանում ե որից որ:

1984

ՅԵՐԿՈՒ ՊՈԵՄ



## ԻՐԻԿՈՒՆ

Հայաստանի ՀՅԱՀՆՅԱՄ

ԿՈՄՅԵԹԻՏՄԻՌՎԹՅԱԽԱՆ

ՆԱԽԱՆՔ

Աերջին շենքը մեր գեղեցիկ,  
Այս քաղաքի ծայրաթաղի՝  
Այն հին շենքն ե, յեկեղեցին,  
Վորպես պահակ հին կենցաղիւ  
Վորպես փառքի ավարտ պսակ  
Թեև զմբեթն ել չի ցոլում  
Շեկ ցերեկվա արեի տակ  
Կամ իրիկվա ոսկե ծովում.  
Իր թեսքը գոհ ու միտիկ  
Ել չի փոհւմ խաչը նրա,  
Վոր քաղաքը հանգիստ նստի,  
Ինքն որհնություն թափե վրան,  
Նա զլխիլայր ընկել ե ցած,  
Փշրված ե փառքն իր հիմա,  
Կարմիր աստղն ե վերև ցցված՝  
Հին խաչի տեղ մի նոր իմաստ:  
Ել չի հնչում կերկեր ու դող  
Ժամերգություն ու պատարագ.  
Պյոներական յերգն ե հաղթող,  
Ցերգը ռիթմիկ, հատու, արագ:

Յեկեղեցին ակումբ ե նոր  
Ողակնիքին պյոներական,  
Յեկեղեցին նոր չե բեմով,  
Մի նոր կյանքի բեմ ե սակայն:  
Ու կարմրաթև աստղի ներքո,  
Բայց շենքի մեջ յեկեղեցու,  
Նոր սերունդը մի նոր հիմքով  
Իր կենցաղն ե նոր կառուցում:  
Ու պիտ մի որ հինը փլվի,  
Հիմքը լենե արեի տակ.  
Նոր կենցաղը պիտի փռվի  
Յեկ ամենուր տիրի, խայտա:  
Բայց գեղ վերջում մեր գեղեցիկ,  
Այս քաղաքի ծալրաթաղի՝  
Այն հին շենքն ե, յեկեղեցին՝  
Խառնուրդ հին ու նոր կենցաղի:

### I ԵՐԵԿՈՒՆ

#### 1

Յերեկո. շեկ մայրամուտ,  
Հորիզոն՝ լիճ վոսկեջուր,  
Արել շիկնած, վարանոտ  
Լողանում ե վոսկե լճում:  
Սուզվում ե կամաց սահուն  
Արել վոսկեշեկ ծովում.  
Միայն վարսերն են լուսահյուս  
Ջրերի վրա ծածանվում:

Սուզվում ե լեռնածոցում,  
Խեղդվում ե արևն հրակ  
Այն վոսկելին հալոցում.  
Վոչ վոք չի ոգնում նրան։  
Ու մայրամուտից հետո  
Կապոււմ ե այն ծովը շեկ։  
Կամաց փռվում ե դյութող  
Մի կապույտ, մուգ կապույտ գիշերու։

## 3

Մտառողի, անց ու դարձ ե.  
Խառնվել են մարդիկ իրար,  
Ուզում են գնալ, կարծես,  
Արեին փրկելու համար։  
Բայց ուզ ե, խեղդվել ե նա,  
Կյանք նրան չեն հասցնի.  
Բայց զիտեն, վոր նա գնաց,  
Հրաշափառ կվերածնի։  
Ո՞ մայրամուտը լավ ե,  
Վոր արեց նոր հրով դա,  
Բերե լավեր ու լսովեր,  
Բերե որեր ապագա...  
Աստղերն են արդեն զուգել  
Հորիզոնն արեակուլ...  
Հանգարտ հոսում են զույգեր  
Անտառից մինչեւ ակումբ։

Ակումբի բակը մութ ե.  
 Զույգեր են գալիս, գնում.  
 Ակումբում յերեկույթ ե,  
 Ակումբում «Կարմիր կնուք»:  
 Ակումբը արդին լիքն ե,  
 Լեցվել ե բերնե բերան,  
 Հորդ ե, հաղթ ե զալիքը...  
 Հին տեղը նեղ ե նրանու  
 Բայց հո ձեռներ չենք ծալի,  
 Վոր նորը ինքնիրեն գա.  
 Այսոր այս ե ցնծալին,  
 Մինչև բերենք ապագանու  
 Բերել ե պյոնհեր-բյուրոն  
 Հավաքել մի տաս մանուկ,  
 Հատուկ հրավերով, հուրով,  
 Կազմակերպել ե «Կնուք»

Թնդում ե զառաչը յերգի,  
 Յերգը «Ինտերնացիոնալ»...  
 Վերջացավ յերգն ել վերջին,  
 Գալիք սերնդին ձոնածու  
 Ակումբից դուրս են թափվում  
 Մայրերը, — ժպիտ, հույզեր...  
 Մայրերը տուն են շտապում  
 Գըկած մանուկներ լուսեւ

Մանկիկներ, չիմացաք, այս ելու  
Դեռ ծեսի մի լուրջ հանաք.  
Բալց վաղը հպարտ պիտ ասեք՝  
«Զի կնիվել մեզ ժահանան»,  
Իսկ մենք պիտ ջանանք ելի,  
Վոր այս հին յեկեղեցում  
Զկրկնենք հին, ատելի,  
Սին ծեսի և վոչ մի ցույց».

## 5

Դիշեր ե. լություն չորս կողմ-  
Դատարկ ակումբը փակած,  
Հերթապահները չորսով  
Անցնում են բակով կամաց:  
— Սը՞ս, զջունջ, փըսփսուկ.  
— Շնտիր, դե նատիր. կըծկիր...  
— Ո՞վ եք, ով, չե՞ք լսում.  
Լուցկի, լուցկի, լուցկի...  
— Կաց, կաց, Եյ կաց. փախավ.  
— Փախավ! — Թւր պիտի փախչի.  
— Մեկը փախավ. — վհր կողմ, տղա...  
— Մեկն ահա, կիսամերկ... աղջիկ...  
— Ա'խ դու, թւմ հետ ես դու...  
Յեվա, Յեվա, Յեվա...  
Լոռություն: Քար լոռություն.  
Մեկն սկսեց հեկեկալ, հեալ

Յեվ անցավ բերնե բերան  
 Իրիկվա այդ դեպքը չար,  
 «Ասեղը դարձավ գերան»  
 Անկյուններում քչփշան,  
 Գնում են բակն ակումբի  
 Հաճախ խմբեր մարդկային,  
 —«Ահա կողքը այս թումբի,  
 Յետև այս շիրմաքարի...»  
 Ու մեկ մեկ ասվում ե այն,  
 Կարծես թե իրենք տեսան,  
 Ո՛, քաղաք գավառական՝  
 Բութ ու փուտ ստերի հեսան,  
 Հահոռց, ծիծաղ, հանաք,  
 Նոր մի նյութ դատարկ վեճի  
 Ու լեզենդներ բամբառակ...  
 Լուրը գնաց բջիջին:

Բջիջում նոր եր ընդունվել  
 Նրան նոր աշխարհ եր սա.  
 Անփորձ եր դեռ, անընտել  
 Նոր տասնհինգ գարուն տեսած:  
 Դեռ շըշանն հարազատ այս նոր  
 Վոչ իր նորությամբ; Վոչ ել  
 Տասնուհինգ տարին անցնող  
 Չեն տվել նրան վոչինչ:

Նա կակուղ, —կակուղ խմոր՝  
Նոր եր այդ զրջանն ընկել  
Յեղ վորից կենցաղը նոր  
Պիտ կերտեր մի պայծառ ընկեր:  
Բայց հինը դարան մտած  
Դավում ե ամեն նորի.  
Թեև նա փլվում ե փտած,  
Բայց ուզում ե ապրել նորից:

## 3

Տարիներն անցած, ստվեր,  
Վորպես ջրախառ գինի,  
Նրան արրունք, հափրանք եյին տվել  
Ուզում եր... ինչ վոր բան լինի:  
Շիկնում եր հաճախ, ինչու.  
Խաշվոր անծանոթ մի բան  
Սահում եր մարմնի միջով  
Մի ահսովոր քաղցրությամբ:  
Յերբ գարնան չնչով կրակ  
Մաղկում եր յերկիրը շեն  
Ուզում եր՝ կրծքի վրա  
Գարունը մի բան նշեւ  
Ու հաճախ մտորում եր,  
Տխուր եր կարծես Յեվան,  
Յերբեմն նա խորհում եր  
Զար լինել, ջարդել մի բան:

Մի որ մոտեցավ նրան  
 Անտառում ստար մի դեմք,  
 — «Բարե՛ ձեզ, որիորդ Յեղա,  
 Մենք, գիտե՞ք, հին ծանոթ ենք...»  
 Շիկնեց նա, վոչինչ չեր հիշում.  
 Զիմացավ լուրջ եր, թե հեգնեց.  
 Ու Յեղան, կարծես մշուշում,  
 Նրան իր ձեռը մեկնեց:  
 Մի փրքրիկ զրույց, վոչինչ ել.  
 Պինդ սեղմեց ձեռքը Յեղայի.  
 — «ԶԵ՞ք ուզում ինձ հետ իջնել»,  
 Ասաց նա ժպտով ներվային:  
 — «Հի՞ ասաց Յեղան. Ու նա իջավ.  
 — Նորեկն ընկեր եր, հին ծանոթ եր սա...»  
 (Ուզում եր բարկությամբ ճշալ)  
 Բայց ինչո՞ւ «որիորդ» ասաց...

Այնուհետև վիճակ անել, —  
 Յեղան ուր ուզեր գնալ  
 ծամբի վրա նրան եր  
 Հանդիպում անակընկալ  
 Հաճախ անտառում նստած  
 Տեսնում եր՝ մոտեցավ կամաց,  
 Ժպտաց, բարեկց վստահ...  
 Ինքն ել ժպտում եր ակամտե

Անցել եր շաբաթ. (ամառանոց, ամառ)  
 Բայց ալղքան բավ եր մեկեն,  
 Վոր Յեվան յերբ տուն դառնար,  
 «Ուղեկից» ունենար մեկին:  
 Մի շաբաթ միայն, և ահա,  
 «Ակումբում կարմիր կնուք», —  
 Կարդում են նա ու Յեվան,  
 Իրիկունն ակումբ գնում:

### III ԹԱԽԱՌԻՄ

#### 1

Բջիջի դռնփակ նիստը  
 Բաց հայտարարեց Կարոն.  
 Թեև արտաքուստ հանզիստ եր,  
 Բայց այրվում եր ներքին պայքարով,  
 Ընկերները լուրջ ու խոհուն  
 Սպասում եյին ակընդետ,  
 Ծանրությամբ եյին խորհում,  
 Ո՞վ պիտի խոսի հակառակ, դեմ:  
 Ամեն մեկը վորոնում եր  
 Միայն մի միտք հրատապ,  
 Ինքն իրեն վորոշում եր,  
 Թե ինչ վճիռ պիտի տա:  
 Ու ահա սեղանի վրա  
 Կարոն այդ հարցը հանեց,  
 Բացվեց վարագույրը մռայլ  
 Սկսվեց տաք բանավեճ:

— «Հեռացնել, նրա վարքը  
 Ամենքիս վարկարեկեց».  
 — Այդքան ե միայն մեր վարկը  
 (Սա խոսքն ուրիշ կողմ թեքեց), —  
 Զի՞ ընկնի մեր վարկը, յեթե  
 Մենք հանենք խակ վորոշում  
 Ու մեր ընկերը նետենք  
 Փողոցի ցեխում, փողում.  
 — «Ի՞նչ ուներ Յեվան. ի՞նչ գործ,  
 Ո՞ւմ հետ. ի՞նչ աստիճան, մինչ այն...  
 Հիմա ել թող գնա գլխիկոր,  
 Ուր յերթա այն տղան մեշչանա:  
 — Վոր պոռնիկ դառնա անողորմ  
 Փողոցի նեխված ճահճթւմ.  
 Այդպես ե մեր կենցաղը նոր  
 Հին կենցաղի դեմ մարտնչում.

— Ընկերներ, ասաց Կարոն,  
 Մի ընկեր զոհնենք հնին.  
 Կոմսոմոլը պայքարող՝  
 Նախապաշարմունք շունի.  
 Նախապաշարմունքը վատ  
 Պետք ե թողնենք անցյալին,

— «Գալվառը գեռ ոտար և զմաւ  
Քո ասած նոր կենցաղին»:  
— Մի անփորձ ընկեր հնից  
Խարդած ե, պետք և միթե  
Հեռացնենք մեր շարքերից  
Մատի շարժումով թեթև  
— Թողեք թող խոսի ինքն ել,  
Առաջարկ. իսկ մվ և դեմ,  
— Լռություն, լռություն, ընկեր,  
Յեվա, խոսքը քեզ. խնդրեմ:

## 4

Նա ուղեց բարձրանալ տեղից  
Հպարտ ու ինքնավստահ,  
Բայց չուջը թվաց նեղիկ,  
Ու ճնշված մնաց նստած:  
Առաջին ամոթի նման  
Գլուխը կախ եր, մռայլ.  
«Առաջին մեղքն» իր ծանրությամբ  
Ծոռւմ եր վիզը նրա...  
Ուղեց ինչ վոր բան ասել  
Ու կարծես ասեց մի բան.  
Ո՞վ լսեց. վոչ վոք չլսեց,  
Ու վոչինչ չասաց Յեվան:  
Ու... դարձավ կրկին մհղսախույզ  
Սուր հայացքների հեսան.  
Նա վոր ծաղիկ եր ծիծաղուն,  
Նոր տասնհինգ գարուն տեսած:

— «Վիճելու ել նյութ չկա».  
 Մի քանիսն ասեցին արագ,  
 Ու բաղդը մատադ աղջկա  
 Բարձրացավ մատների վրա:  
 Զեռնպահ վոչ վոք չեղավ.  
 Դուրս հանել կամ խիստ բողոք:  
 — Ո՛, ի՞նչ եր այս վճիռը խակ! —  
 Աղջկան նետել փողոց.  
 — Ի՞նչու անպալման փողոց.  
 Ո՞ւր և այն տղան հարուստ,  
 Թող գնան, հեղնեց, փողով  
 Ստեղծեն կարգին ապրուստ...»  
 — «Կարծում ես միդ ե, մնց և կենում՝  
 Վճռեց մի շարժմամբ մատի.  
 Հարցը գավկոմ ե գնում.  
 Գավկոմն ել պիտ հաստատի»:

## IV ԿԱՐԱԳԵՆԻՆ

Ընկել եր քաղաքում շշուկ.  
 Դարձել եր փաթաթան մատի,  
 Թե՝ «կոմսոմոլն ել դուրս ե քցում»  
 Աղջկան այն դեռատի:  
 Վորպեսզի չկորչի նա,  
 Զհասնի ավելի վատին,  
 Ասացին, պետք ե գնա  
 Ու դործը հանձնի դատի»

Այս ե, միայն մի պահանջ՝  
Մնացած վերջին ուղին,  
Պիտք ե դատով աննահանջ  
Աղջիկը հանձնել տղին։  
Թե չե, այն մվ ե, վոր  
Կառնե աղջկան «ապրած»  
—«Կմնա նա տանը իր հոր,  
Վորպես ցեցակեր ապրանք»։

## 2

Կգնմը գործը դատի՝  
Թե հերոսն այն հնածին  
Զծլկվեր սուս ու հանդարտիկ  
Հաջորդ որն իսկ արկածի։  
Յել, վորպես պատիժ յերկուսին,  
Մի մահի՞ճ կլիներ առաջարկ,  
Յերկու ոտար ամուսին՝  
Կապված դիպվածով մի չար։  
Ու չանցած յերկու ամիս,  
Դեռ «զիպված» չմարսած,  
Բեմ յելներ այս անգամին  
Վերջնական... ապահարզան։  
Թե այլ յելք, լուծում ուրիշ  
Պիտի այս գործն ստանար։—  
Հերոսը մի յերկու տարի  
«Նստեր» ու... հանգստանար։

Թայց հերոսը արկածի,  
 Հենց գեղքի հաջորդ յերեկոն,  
 Իր տանը հանգիստ պառկած եր  
 Գոհ տարած «հաղթանակով»:  
 Վերադարձել եր քաղաք,  
 (Վոր այնքան հեռավոր չեր)  
 Ուր կան զեռ անկյուններ տաք  
 Անհայտ մնացած վորջեր,  
 Դարձել եր քաղաք, վոր ջանա  
 Ապրելակերպն իր յերկարել.  
 Վոր կյանքը տիղմով լճանար,  
 Ճնշված կողերով քարե:  
 Կարծում եր կենցաղը նոր  
 Մի ափ ջուր և ճահճի յերեսին,  
 Իսկ ինքը ընկած ե խոր  
 Ու վոչինչ իրեն չի հասնի:

Յերբեմն ել նա... վիճում եր,  
 Մարդկանց գեմ բարկ գաղաղած.  
 — «Հա, նորը, նորն ել ինչումն ե»  
 Յերբ չկա սերը ազատու  
 Ինչու, ինչու պիտի նա  
 Ելի անկարելի գնով,  
 Հնի պես ճգնի տիրանալ  
 Ամեն մի դյութիչ կնոջ:

Խնչմւ չսիրի ազատ  
Հենց սիրած հանդիպողին,  
իսկ յիշը վոր մարմնին հասավ,  
Փնտրի մի նոր անկողին...  
Ու նա պնդում եր թե՝  
«Այդ ե կենցաղը գալիք որվա,  
Խնչմւ ալսոր այս խորթ ե».  
Փնչում եր նա վրդովված:

## 5

Նա այդ եր պնդում, այն ինչ,  
—Վորածես անտառում խոնավ,  
Փթած տերէների միջից՝  
Հնի ավիշով սնած,  
Յելնում ե զվարթ ծիլ առ ծիլ  
Ծառերի սերունդ մի նոր.—  
Բացլում ե կենցաղը նորածին  
Պաշարված փթած հնով,  
Բայց որվա արևը շեկ  
Ժպտում ե ծիլերի աճին,  
Կոր վաղը ընձյուղներ քշեն  
Ու կյանքը շքեղ կանաչի...  
Տերեները մգլած ու գեջ  
Հանկարծ լուռ, տիրաթախիծ  
Կտիսնեն՝ փաված անվերջ  
Մի անտառ սաղարթախիտ:

1

«Բջիջի դռնփակ նիստը  
 Փակված ե»—ասաց կարոն,  
 Վոր արտաքուստ հանգիստ եր,  
 Բայց այրվում եր ներքին պայքարով:  
 Ուզում եր մնալ նստած  
 Ու մենակ լինել մի բողե,  
 Վոր սիրտը գաղտնի չմշգստար,  
 Վոր ազատ ու լայն տրոփեր...  
 Յերբ դուրս եր յելնում ակամա  
 Միջանցքից դեպի լայն մի բակ,  
 Թվում եր՝ սրտից ամպամած  
 Պիտ պոռթկար ուղացած մի բան:  
 Ուղացմծ. բայց մվ առալ կեց,  
 Վոր այլիս հասնել չի կարող.  
 Ու սիրտը հատու զարկեց,  
 Ու արագ քայլեց կարոն:

2

Իրիկվա վճռից ել հատու  
 կարոն վճիռն իր հանեց,  
 Թեև նույնպես իր սրտում  
 Յեղել եր պայքար, բանավեճ,  
 Մաքերի մաքուր քամին  
 Քշել եր մշուշը մոայի

Վոր հնուց մնացած անմիտ  
Ծանրացել եր մտքի վրա  
Ու սրտից մշուշը կաթնաթույր  
Քշվում եր, շնուռ հեռանում,  
Բացվում եր լիճ մի մաքրաջուր  
Ու... լողում եր Յեվան նրանում:  
Ու ելի զդաց կարոն,  
Վոր խոսքը դատարկ ե, սին,  
Վոր պետք ե գործի պայքարով  
Բայքայել ֆեաիշը հին:

## 3

Վաղուց եր. լուսեղեն մի կարթ  
Յոլումով հառագայթի  
Ու... կարոյի սիրտը կը թպրտար  
Կախված լուսեղեն կարթից,  
Վաղուց եր Յեվան նիզակել  
Կարոյի սիրտը անզրահ,  
Բայց կարոն չեր խիզախել  
Սիրո խոսք ասել նրան:  
Գտել եր, վոր գեռ զուտ ե,  
Թող նորով Յեվան ամրանա.  
Ու կամքով իր քշում եր  
Հույզերի հոսանքը նա,  
Իսկ հիմա որն եր հերթի,  
Վոր կարոն ամեն ինչ բանա  
Ու «մեշան» հնի կոկորդին  
Դնի մի բացված դանակ:

Գալիքի շողազող ռանգերով  
Պայծառ եր դեմքը կարոյի,  
Աչքերում ինչ վոր բան կար գերող՝  
Հսայքը վաղվա կարոտի;  
Զգում եր կրկին կարո՞ն՝  
Հանձնված քաղցր անուրջին՝  
Վոր չկա վոչինչ խանգարող,  
Վոր իրենց սերը չի կորչի;  
Թող շուրջը լինի փսփսուկ  
Յեվ կամ բաց ճակատ պայքարի,  
Կկորչի փսփսուկը քսու,  
Կհաղթե իր կամքը արի;  
Ու տեսնում եր պայծառ կարո՞ն  
Իր առաջ փոված ճամբա՞ն,  
Ու տանում եր առաջ պայքարող  
Իր վճիռն հատու, ճնասպա՞ն:

## 5

Զգում եր կարո՞ն, մի անկեղծ  
Հավատով, համոզմամբ լեցուն,—  
Հարցը վոր կոմիտե տարվեց՝  
Կստանա ուրիշ լուծում:  
Կհաստատի՞ միթե  
Այդիսի սխալ վորոշում  
Կոմյերիտմիության կոմիտեն,  
Ո՛ վոչ, կրեկանի անշուշտ:

Այն հվ եր վոր ճիշտ ասաց՝  
«Չի վճռում շարժումը մատի.  
Կյանքն ունի վճիռ անսասան...  
Կոմիտեն չի հաստատի...»  
Յեվ այդ համոզման հենած  
Հանեց վճիռներ և այլ  
Ու հանգիստ քայլերով, մենակ  
Նա գնաց դեպի Յեվան,

### ՎԵՐԶԵՐԴ

#### 1

Վերջին շենքը մեր գեղեցիկ,  
Այս քաղաքի ծայրաթաղի  
Այս հին շենքն ե, յեկեղեցին՝  
Մուայլ պահակն հին կենցաղի,  
Յեկեղեցին ակումբ ե նոր  
Ողակներին պյոներական,  
Այդ հին շենքը նոր չե բեմով,  
Մի նոր կյանքի բեմ ե սակայն  
Հին ժամտունը և նոր ակումբ  
Խառնվել են իրար հիմա,  
Պայքարում են մի նորագույն  
Յեվ մի հինցած, գիշուկ իմաստ  
Գիտենք—հինը պիտի փլվի,  
Հիմքը յելնի արևի տակ,  
Նոր կենցաղը պիտի փռվի  
Յեվ ամենուր տիրի, խայտա...»

Թրիկուն, դու իջել ես  
 Հին յեկեղեցու վրա.  
 Ներսում մոմերը շիջել են,  
 Հոգևարք և անկրակ:  
 Վորպեսզի, ով շենք դու հին,  
 Թո հոգևարքը չ'երկարի,  
 Ու հոգևարքիդ ժամին  
 Զունենաս տենչ պայքարի,—  
 Մենք խրել ենք արդեն  
 Սրտիդ մեջ դառնակսկիծ  
 Աստղը սույրուայր, հնգաթե  
 Հենց այս գմ եթի գլուխու

1925

## ՓԵՅ ՇԱԳԻԿԸ

### ՎՈՐՊԵՍ ՆՍԼԽԵՐԻ

Աշնան չար քամին, չաչուն, սառ քամին  
Սուրում, սըվսըվում, սաբսում և փոռում,  
Կարծես հաղար տեղ հենց մի անդամից  
Դանակներ, սուսեր, սուրեր են սրում:  
Դեղին տերեներ՝ անթիվ անհամար,  
Պարտված զորքի պես գերի խուճապին,  
Զվում են անկարգ, փախչում քամահար,  
Ունկընդիք միայն սոսկումի չափին...  
Բոթաբեր, խոժոռ նայիրյան աշունն  
Ամեն տեղ սուլում, զուլում և փոռում,  
Կարծես հաղար տեղ սրում են դաշույն,  
Հաղար տեղ սուրսայր սրեր են սրում:

Արշավ... Թաղիմ կարա թեկիք փաշան  
Կարսը առավ, առավ առանց կըռվի...  
Ել ի՞նչ կափի, բանակ, զինապաշար...  
Ինչ դրոշ կա՝ թող դա գետին փըռվի...  
Ով չմեկնեց խաղաղ հաղտության ձեռ,  
Թող պարտության ճերմակ դրոշ պարզե...  
Նայիրյան ցուրտ աշուն, ձմեռ, ձմեռ,  
Պաշտպանության ժանդոտ դորշ հրազեն...

Արշավ... Քաղիմ կարա Բեկիր փաղան,,.  
Խուճապ ու կրկին խուճապ, ո, կրկին  
Տունդ այրիր, փախիր դու անպաշար,  
Մահը արշավում ե, հոգիդ Փըրկիր...  
Գաղթ, Հայկական սայլերը ճըռընչուն,  
Եեղներ, գոմեշներ՝ կրիայի քալով.  
Մահը գալիս ե, դու դարձիր թըռչուն,  
Թե չե չես ազատվի յեղան սայլով,  
Մարդը կիսամարդ ե, կիսագաղան,  
Վախն ե միայն, վախն ե հիմա սրտում...  
Ահա լեղապատառ ու մահասաստ  
Փախչում ե մայրը՝ նետած վորդուն...  
Գաղթ եւ Խուճապ եւ Պարտության սելավ,  
Մավառնում ե հսկա մի գիշատիչ թոշուն,  
Չես ազատվելու հայկական սայլով,  
Զուր ես յեղների վրա մռնչում:

Գյումրու կայարան... վաղն, արշալույսին  
Նա յե ազատվում, ով նստեց գնացք ..  
Մի կերպ բարձրացիր կողքինիդ ուսին  
Ու քեզ վագոն նետիր ուղագնաց,  
Ով վոր մնաց՝ մնաց մահի բերան,  
Իսկ մահն արշավում ե փախիր, փախիր.  
Մագլցիր գոնե վագոնի վրա  
Սիրտդ չպայթի թող մահի վախից:  
Այս արհավիրքում առանց մայրիկի,  
Փոքրիկ, քրոջդ գտնեյիր գոնե...  
Կյանքն ելի քաղցր ե, դու մի ընկրկի,  
Մակր, թագնվիր տակը վագոնի:

Ո՞ւր ես գնում, գնացք, ուր ես տանում  
Խուճապի ալիքը... կիշեցնեն գնացքից:  
Վոչ մեկը տեղ չունի Վրաստանում:  
Վոչ մեկը չունի ազատ անցագիր...  
Թոլագերան Հետո՝ Շէղոք Լոռից:  
Հիմա սրտոտ ե պահակը վախկոտ.—  
«Իշեցրեք, վար իշեցրեք բոլորին,  
Ով անանցագիր նստել ե վագոն...»  
Վագոնի տակից, փոքրիկ՝ դուրս չգաս,  
Զհազաս, կուլ տուր քո մաղձը լեղի:  
Թերիդ ուժ տուր, յեղիր զգասա.  
Ահա գնացքը կշարժվի տեղից...

Արթուն հսկիր, չար աչք, արթուն յեղիր՝  
Քանի կա կյանքը, արևը ծագող,  
Մահից փախչողը կարող ե տեղին  
Սողոսկել նույնիսկ ասեղի ծակով,  
«Հանցանք՝ խիստ պատժի արժանի», սակայն  
Արդար, արդար ու սրբազան «հանցանք»—  
«Զեղոք գոտուց» այնքան մարդիկ, այնքան,  
Աներեռյթ կերպով սահմանն անցան...  
Վագոնի տակից, փոքրիկ, կամացուկ  
Սողոսկիր, արագ դուրս յեկ, մի մնա,  
Սառչում ես արդեն, ցուրտ ե մահացու,  
Հենց այս ասացին շեն գյուղը գնաւ

ԴԱՆԳՈՒՆ ԱԶԻԵՐԸ

Հանդերում չկա ել հովվի կըրակ.  
 Հանդերն ու արտերը թափուր, թափուր...  
 Դեղնած, սպրդնած դաշտերի վրա  
 Յերկինքն իր ճերմակ թախիծն և թափում։  
 Հանգչում ե գյուղը Ամեն տան գրան  
 Մռայլ կանգնած ե աթարի մի դեղ՝  
 Վոր գլխին ճերմակ փափախը ղրած՝  
 Մի յափընջավոր պահակ ե ասես  
 Ամեն խըրճիթից ու ամեն տընից  
 Սև ծուխն ե բղխում պալան-պալան,  
 Ու քամին ծուխը կտրի բերանից  
 Խլում, քշում ե, վորպես թալան։

Ճնշիչ ու ծանր գիշերն ե նստում,  
 Եեվ ամրանում են գյուղում փակ ու նիդ.  
 Այստեղ ու այնտեղ շներն են վընգստում.  
 Քամին ծեքծեքում ե դուռ ու տանիք։  
 Իրար են փարվում քամի, մութ ու ձյուն.  
 Եեվ նրանց զրկում վախկոտ, կիսաթաղ  
 Ճրագներն են լոկ հատ հատ առկայծում,  
 Ինչպես գայլերի աչքերը խարդախ..  
 Խրճիթից խրճիթ Մորփեոսն ե շրջում,  
 Բաշխում ե ծանր յերազ ու ցնորք։  
 Յեկ կարծես գյուղում վոչ վոք չի շնչում.  
 Անեացած են ահով ու քնով։

Գյուղի կենտրոնում սակայն դեռ անքուն  
ծըլճըպացնում են աչքերը պղտոր  
Գինետունը գաղջ, տամուկ ու տաքուկ,  
Յեվ նրա տերը՝ մշտարթուն Բըղդոն։  
Ուշում—իշնում ե դեռ տիկը դինու,  
Վորպես վիթխարի, այլանդակ մի ծիծ,  
Ծորում ե, ծորում անվերջ, անհատնում  
Թթվաշ ու կարմիր կաթը նրանից։  
Ու մագնիսացող սեղանին կպած  
Դեռ մի քանի մարդ թասեր են քամում,  
Զրույց ևն անում զվարթ, սրտաբաց,  
Ուշը չեն դարձնում կատաղած քամուն։

Անկյունում կանգնել ե բատրակ Համզոն,  
Թոշնած նայում ե Բղդոյի թասին,  
Սպասում ե, վոր գինու նոր թասով  
Բղդոն հրամայի, մի նոր բան ասին  
Նա ջանք ե թափում, իրեն ստիպել  
Անքըթիթ նայիլ, հրամանը վորսալ,  
Բայց վիզը՝ թռմած տանձի կոթի պես,  
Զի կարող պահել զլուխը պարզած։  
Իզուր ե նայում ճրագի բոցին,  
Քունը աչքերից նրանով քշելու...  
Ախ, թնչ կլինի աչքերը գոցի,  
Վոր չծակուավեն անզութ փշերով։

Համզոյին թվաց, վոր ահա այս եր  
Միակ յերաղած ցանկալի բախտը,

Յերբ Բղդոն մի կողմ հրելով թասը,  
Յերկար հորանջից՝ ռքնելու վախտ եւ:  
Սեղ անին կպած հյուրերը՝ շուղելով  
Մի կերպ պոկվեցին տարտամ ու անկամ...  
Համգոն դուրս յելավ քաղցր հույսերով,  
Յեվ գյուղում վերջին ճրագը հանգավ:  
Դրսում քամին ե սլանում, սուրում,  
Գյուղն ահից, ասես, լռել ե, մնջել...  
Համգոն քնած ե յեղան մսուրում  
Յեվ յերազում ե, ով գիտե, ինչե՞ր:

Ինչ վոր տեսել ե, ապրել զգացել՝  
Նորից տեսնում ե Համգոն յերազում.  
Քմահաճ բախտը դրանով գուցե  
Համգոյին անվերջ տանջել ե ուղում:  
Քունը դառնում ե ծանր մղձավանջ,  
Քամու վոռնոցը թվում ե նրան  
Խելագար աղմուկ, անհույս ճիչ ու կանչ  
Հուսահատ գաղթի կույր ճամրի վրա...  
Զարթնած խորհում ե մսուրում այդ մութ  
Աչքերը հառած դեպի առաստաղ.  
Վերից նայում են անիմաստ ու բութ  
Յեղան աչքերը, ինչպես սառած աստղ:

Ու միտք ե անում պատանի Համգոն,  
Մոտիկ դեպքերը սարսուռավ հիշում,  
Անցած որերի ցավի դեմ անզոր՝  
Դեպի գալիքն ե մըտքերը քշում:

Արդեն հասել ե մի կտոր հացի,  
Բայց այսպես ապրել, յեղան մսուրթւմ...  
Ու վոչ, յերբ կանաչ գարունը բացվի,  
Այլև Համզոն չի մնա այս որում:  
Ի՞նքը, վոր այնպես խելօք բան արեց  
Յեկ մինչև հիմա պահում ե թաքուն,  
Կարող ե նորից մի բան հնարել...  
Առայժմ բավ ե մսուրը տաքուկ:

### II ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆԴՈՒՅՑ

Կյանքն այսպես չարքաշ՝ մահվան համազոր,  
Գոնե ձմեռը յթրը պիտի անցնի,  
Իր ցավի մասին ում պատմի Համզոն,  
Մի բարի խորհուրդ ումբց հարցնի:  
Բղդոյի շունը յերջանիկ ե, քան  
Բղդոյի բատրակ Համզոն այս գյուղում,  
Ցերեկն անդադար հագար գործ ու բան,  
Գիշերն ել անքուն մգլած նկուղում...  
Ել ով կա գյուղում իրենից բացի,  
Վոր այդպես չարքաշ սկ հաց ե ճարում:  
Ո՛, նրանք շատ են, արի՝ հասկացիք  
Վորքան բատրակ կա ամբողջ աշխարհում,  
  
Լսել ե Համզոն, վոր Հայաստանում  
Աղեն հանգիստ ե, վոչ կոիվ վոչ գաղթ,  
Լսել ե Համզոն, բոյց չի հասկանում  
Վորտեղից պիտի գար այդպիսի բախտ  
Իսկ գինետանը ծորում եր պղտոր,  
Փըրփըրուն գինին թասերում անհագ...,,

— Բոլենիկները, ասում եր Բղդոն,  
Քանդել են յերկիրը հիմնահատակ...  
Քատրակը ուրիշ մի խոսք ե ասում;  
Ուրիշ խոսք՝ ասողն հարուստ ե յեթե...  
Այս, ձյո ն չվիներ, տես ինչպես Համզոն  
Անձամբ պիտ զընար ճիշտ խոսքի յետե.  
  
Կարմիր դրոշը րորը ծածանվում ե...  
Նրա հմայքը հասնում ե, թովում.  
Ու անտես մի ձեռք համառ ցանում ե  
Հաղթության սերմեր արգավանդ հողում:  
Ծեվ գյուղում, ասես, անտես մի խլուրդ  
Քանզում ե անդուլ արմատ ու հիմեր...  
Իսկ այնտեղ, մոտիկ լեռներում այն լուրթ  
Արդին թընզում ե հաղթական հիմնը:  
Իրարանցումը՝ փափսուկից խուլ՝  
Աճում ե, դառնում ե սպառնալի...  
Հիմքն որորվում ե, խարխուլ ե, խարխուլ  
Զկա փրկության վոչ մի բանալի:

— «Սպիտակ արջը գալիս ե կրկին,—  
Խոսեց ժողովում վարժապետ Տիգոն,  
Հիմա ավելի կատաղի լըլիշ...»  
Թողնելու յե մեզ միայն վարտիկով:  
Ինչ ունենք չունենք պիտ որբի, տանի  
Բոլենիկ հորդան... յես պարզ եմ ասում  
Ինչ որի հասցրին մեծ Ռուսաստանին,  
Նույնը պիտ անեն այստեղ, Կովկասում:

Պիտի կորցընենք տուն, նամուռ ու կին,  
Յեթև անտայրեր մրափենք հիմա,  
Ամենքս, վորապես մի սիրտ, մի հոգի,  
Պատնեղ պիտ կապենք թշնամու դիմաց».

— «Վարժապետն, անջուղտ ճշմարիտն ասաց,  
Դալիս և նորից մեր հին թշնամին,—  
Յեվ կուլակ Բղդոն թընդյունով հազաց,  
Ապա ծոր տվեց բառեր մի առ մի.—  
Մառք ընկնում և կացնի հարվածից,  
Կացնի կոթն ել հենց նույն այդ ծառից և...  
Այդ դրսից յեկող թշնամուց բացի  
Մեր ներսում ունենք թշնամի գուցեւ  
Դըրսի թշնամուն աեսնում ենք հիմի,  
Կըսլի զուրս կտանք, անվախ դեմ առ դեմ:  
Հապա ի՞նչ անենք, յերբ մեր թշնամին  
Հենց մեր ներսից և պայմեցնում բերդը»:

— «Եսոսքը տալիս եմ տես հայր իսակին».  
Ու տեր Իսակը բաց արեց ժանիք.—  
«Նղովյալ լինի ցեղը Վասակի  
Յեվ աղքակործան վատ Մեհրուժանի...  
Մեզ պահապան ե աչքը աստծու,  
Յեվ մեզ առաջնորդ՝ աչը Գրիգորի,  
Թող անհետ կորչեն կըրքերը կրծուժ,  
Համերախ դիմենք վճռական որին»...  
Ու բարձրացնելով խաչը վոսէ, եղոծ  
Հանդիսավոր ու կերկերաձայն  
Մարգարեացավ քահանան հալոց՝  
— «Եսաչն և զորավիգ մեր մեծ հաղթության»:

Հսում եր Համզոն խոհուն, ուղադիր,  
Վորոճում մըտքով խոսքերը խըրթին.  
Մի բան հասկացավ քչից ու շատից,  
Բայց այնքան բաներ մնացին մթին.  
Ինչժև չխոսեց մի բատրակ, հովիվ,  
Կամ մի գեղացի, աղքատ, հասարակ...  
Են մվ, ինչ զոռաց տեղից ժողովից,  
Նախազահն ինչժև նրան զուրս արավ...  
Համզոյի զլսում հաղար մի հարցում  
Անձրեի նման բուռն տեղացին...  
Այդ մասին արդիոք ինչ ե մտածում  
Պարզ ու հասարակ աղքատ գյուղացին:

### III ՓՐԵՌԻԹՅԱՆ ԴԻՇԵՐ

Համառում ե ցուրտ փետրվարը դեռ,  
Որերը միզոտ վոստայն են սարդի,  
Այդ վոստայնի մեջ զյուղը կիսամեռ  
Թըպրտում ե դեռ, սպասում մարտին  
Սպասում ե և Համզոն նոր գարնան՝  
Որերից դժողոհ, կարիքին հլու,—  
«Գարնանը պետք ե յետ վերադառնամ,  
Հույս ունեմ կորած մորս գտնելու»:  
Գաճաճ ամիսը յերկար ե, անծայր,  
Ջմրան կարճ որը թվում ե տարի...  
Բայց յերկինքն ասես, բացվում ե պայծառ,  
Ու ցածանում ե դեղը աթարի:

— «Ուաքո ուզում եմ թղղոյի մոտից  
Ըսդմիշտ հեռանալ, Ալեք-պոլ գնալ,  
Սպասում եմ քիչ քամին հանդարտի,  
Ճանապարհներում սկսվի ծընհալ»:  
— «Լավ չես մտածել, զուտով հենց այստեղ  
Կյանքը կփոխվի, Հայաստանի պես,  
Ժպատակու յի մեզ բախտի նոր աստղ,  
Մի քիչ դիմացիր, զոչաղ պահիր քեզ...  
Համզոյին թվաց թե զա լերազ ե,  
Յեվ հենց վոր Սաքոն հեռացավ վորազ,  
Համզոն, Սաքոյի ստվերն եր ասես,  
Շարժվեց նրա հետ, հետեւց նրան:

— «Համզո, դու ժիր ես, դոչաղ ու սրտոտ,  
Կարիքի բովում թըրծում ես դու,  
Ու քեզ քամելով եդ կուլակ թղղոն  
Հասունացնում ե քենը քո սրտում:  
Բայց փոքր ես դու զեռ և ուժդ պակաս,  
Տարիքդ բնչ ե,—տասնումեկ տարի, —  
Դեռ պիտի աճես, զորանաս ու զաս՝  
Պատանի լինես մեր մեծ պայքարին:  
Հիմա տուն դարձիր, ձյուն ե ու քամի...»  
Ասում և Սաքոն հանգիստ խրատով.  
Ախ, այդ ջերմ խոսքը լավ բարեկամի՝  
Շատ ծանր եր թվում, սիրաը թրատող:

— «Զարկում ե արդեն ժամն որհասական.  
Վերջին պայքարը կյանքի ու մահու,  
Թշնամին արթուն հսկում ե, զակայն  
իր վերջին բռպեն զեռ չի կուահում:

Յելել Են վոտի և՝ քաղաք, և՝ գյուղ  
Տիրող լծի գեմ անհաջոտ, հակադիր  
Յելնում ենք և մենք վստահ, աներկյուղ  
Ու միանում ենք կարմիր ճակատին  
Մեր այս կռվի մեջ դաժան ու արդար  
Հենց մեր ոգնության առաջին ձայնին՝  
Կարմիր բանակը միշտ յեղբայրաբար  
Պատրաստ ե պահում փողը հրացանի»...

Դիշերը հսկա մի թխսի հանգույն  
Թևերն ե փռել գյուղերի վրա  
Ու սավառնում են ամպերն յերկնքում,  
Վորպես գիշատիչ ուրուրի յերամ:  
Մուայլ ե մութը՝ գաղտնիքին գիտակ,  
Ասես, կրում ե յերկունքը ցավոտ,  
Եեվ սև գիշերվա ծոցում սպիտակ  
Խլրտում ե մի կարմիր առավոտ:  
Ու հորիզոնի լիռների ուսին.  
Արեց, վորպես կարմիր աքաղաղ,  
Պիտի բարձրանա, շեկ արջալույսի  
Յերգով զարթեցնի և՝ գյուղ, և՝ քաղաք:

Դեռ խիտ ե մութը, բայց շեկ մի խոսառում  
Փոխած ե արդեն սարերի վրա...  
Մութ խրճիթներից դուրս են սողոսկում  
Սև սև ստվերներ տենդագին արագ:  
Գյուղի ծուռ ու մուռ նեղ փողոցներում  
Ճռռում ե ձյունը անդգույշ յերթից,  
Ճերմակ գետինը վխտում ե, յեռում  
Ու ստվերների շարժումից, տենդից:

Տեղատեղ ձայներ են ծնվում ու լռում,  
Ապա փովում ե փսփսուկ մի խուլ,  
Զգացվում ե մի զըսպված զըրգուում  
Ու... շնահաշը փովում ե գյուղում,

Համզոն չի կարող աչքերը գոցիւ  
Երջվում ե մեկ ալս ու մեկ այն կողքին.  
Այս գիշեր մի բան կատարվի գուցե,  
Սպասում ե նա նոր բախտի զողքին,  
Սպասում ե և... իջնում են կամաց  
Կոպերը ծանր յերազի բեռով.  
Ու սավառնում ե համզոն ակամա  
Յեղան մսուրից հեռու, շատ հեռու...  
Հանկարծ մի պայթյուն, կրկին ու նորից,  
Յեկ արձագանգից մութ գոմն ե թնդում...  
Յեկ դուրս ե ցատկում Համզոն մսուրից  
Մուզվելով անհետ գիշերվա մթնում...

#### IV. ԿԱՐՄԻՐ ԼՈՒՍԱԲԱՑ

Բացվում ե որը, լեռների ուսից  
Արել խարտյաշ ու կարմրակատար  
Փռում ե հստակ խուրձերը լույսի  
Յեկ վողողում ե լույսով դաշտ ու սար:  
Թընդում և գյուղը բազմապահակ,  
Վորպես բյուրագլուխ մի հսկա մարմին...

Ու ծածանվում ե վառ արևի տակ  
Ամեն կտուրին մի զրոջ կարմիր  
Բացվում են բոլոր դռները փակած,  
Հոսում են մարդիկ դեռ ամեն կողմից...  
—Վողջույն արևի անաղարտ ծագման,  
—Վողջույն գյուղական կարմիր հեղկոմին:

Հաղթության դափնին թող յերբեք մըափ  
Չրերի կարմիր մարտիկի համար,  
Յեվս մր զրոն թշնամու վրա,  
Վոր ընկնեն վերջին դիրքերը համառ,  
Ոգնություն ե պիտք հարևան գյուղին,  
Եւկել ե ջտապ կարմիր սուրահանդակ.—  
«Գրավել մոտիկ պոստն, յերկաթուղին,  
Մինչև վոր հասնի բանակին ոժանդակ»,  
Թնդանոթները՝ յերախները բաց՝  
Գոռում են, վորպիս վոհմակ հովաղին,  
Բանակն հաղթական ու համառնթաց  
Նշան ե բռնել սիրտը կովկասի:

— «Զյունը նստած ե դեռ հաստ ու հասաւատ,  
Կթաղվես, կորչես քո այդ հասակով  
Ամելի լով ե՝ դու նամակն այս տար,  
Հասցըու հեղկոմին», ասում ե Սաքոն:  
— «Կտանեմ, ցերեկ դեռ կա վեցը ժամ,  
Յես գյուղ կհասնեմ անպայման այսոք,  
Իսկ վաղը նորից շալակած պաշար՝  
Յետ եմ դառնալու», ասում ե Համզան:

— «Վաղր, ով գիտե ուր ենք լինելու,  
Գուցե թիֆլիսը—արդեն գրավել...»  
Համզոն Սաքոյի խորհրդին հլու  
Վերապառնում ե, վորպես գրաբեր:

Գնում ե Համզոն՝ իր դերին գիտակ՝  
Խոհուն, լրջաղեմ, ցըտիդ կարմրած.  
Ի՞նչ փույթ թե ցուրտ ե... տաք ե կրծքի տակ-  
Փափախի ծալքում նամակն ե դրած:  
Թվում ե նրան թե իր փափախում  
Պահված ե բախտը ամրող տշխարհ,  
Ու սիրտն ավելի թունդ ե բաբախում,  
Արականում են քայլերը մանրիկ:  
Յեվ մութը նոր եր գյուղին վրանել  
Գյուղը գեռ նոր եր կըպցնում ճրագ:  
Յերբ Համզոն կապույտ ծրաբը հանեց,  
Հեղիոյի կարմիր սեղանին դրավ:

Հաղթության ուղին մաքրած ու հարթ ե,  
Թշնամու վերջին ճիղը՝ ապարդուն.  
Խորհրդային ե Վրաստանն արդեն,  
Կապահանական ազգաբարություն:  
Թիֆլիսն ել ընկավ զբեթե անկըսիլ,  
Թշնամուն՝ ջարդված յերեկվա մարտում՝  
Իր մենշևիկյան ուժերը ցըխվ  
Քաղում ե գեղի Քութայիս, Բաթում...  
Ուր մենշևիկյան ուժիմը զեղին  
Դեսկս տեր ե սըտով, մտրակով,—  
Բուավառած ե արդեն կատաղի  
Ապստամբության կարմիր կրակով:

Գարուն ե, ձընճալու, առու, հեղիղատ  
Հորդել են անզուսպի, մոլի փըրփըրուն,  
Ճեղքում են հողի կուրծքը անաղարտ  
Ու բաց են անում նոր ճամրա, նոր հուն.  
Բոլոր սերմերը կենսունակ ու սերտ  
Ճայթում են հողում հրճվանքով յեռուն  
Ու, վորպես սրտում բողբոջած հույսեր,  
Եերկրի յերեսին ժպիտ են փռում:  
Գուրգուրանքներով իր լուսաճաճանչ  
Եեկ համրույրներով մայրական ու ջերմ  
Արևն ե շոյում ծիլերը կանաչ,  
Ժպտում են անթիվ շրթեր ու աչեր:

Բացել ե կյանքը հազար զսպանակ  
Ու հեռու նետել առաստաղ ու ծածկ,  
Եեկել ե հանդես հզոր մի բանակ,  
Ճայիս ե կյանքին նոր հուն և ընթացք:  
Փռված ե գետին հին կյանքը մըսայլ  
Ծնկած ե, մեջքը կոտրած արջի պես,  
Նա զեռ սօղում ե թաթերի վրա,  
Ճգնում ե, չամզհ, նորից տանջի քեզ:  
Հոգևարքը ղեռ գուցե յերկարի,  
Դժվար ե մեռնում... չի ուղում մեռնել,  
Բայց մերն են արդեն դիրքերը վերին  
Ու բոլոր հատու զենքերը մերն են:

Ն ՆՈՐ ԶԵՆՔԵՐ

Անցմն որերը, վոր քահրուբարի  
 Հատիկների պես դեղին ու գունատ  
 Հատահատ քաշում եր, համրում վողչ տարին-  
 Չորցած մատներով մի բիձա իգնատ  
 Կտրել և թելը բարակ ու փթած,  
 Յեվ հատիկները դժգույն ու դեղին  
 Ցանուցիր յեղած, կորուստով անդարձ  
 Խառնվել հյին փողուն ու հողին  
 Ու յիշած ամուր ոելսերի վը՝  
 Զվարթ զնդոցով կյանքը. տողորող՝  
 Ընթանում ելին որերը արագ  
 Դեպի գալիքը պայծառ ու նորոգ.

Նոր և սկսվում ամեն, ամեն ինչ,  
 Յեվ նոր ձեռներով, և նոր ձեռով.  
 Մարդ բեր, վոր գլուխ հանի ամենից,  
 Ամեն բան գրկի մտքի թեռով:  
 Այնքան հասարակ ու այնքան հեղա և  
 Յերեում հեռվից ամեն բան ու գործ,  
 Հապա մոտեցիր և փորձիր ճշտել  
 Մի ծոված ողակ ձեռներով անփոք:  
 Դու յես կյանքի տեր և բոլոր նրանք,  
 Վոր քեզ պես զրկված, զոհ եյին, Համզու  
 Պետք ե սովորել կառուցել նոր կյանք,  
 Միացյալ ուժով, տոկուն, անձնազոհ:

Յերկրորդ տարին և՝ խորհուրդը գյուղում  
Պահում և արդեն հյուղ-լնթերցարան,  
Գյուղացին մտքի ակներն և յուղում  
Յեվ ջուր են խմում մտքերը ծարավ,  
Իսկ իրիկնալին դպրոցը հե թով  
Ընթերցողներ և տալիս խրճիթին,  
Բատրակը չարքաշ իր գ. թծից հետո,  
Գրքով և ցրում մշուը մթին,  
Մեկ-մեկ բացվում են որերն, արեւում,  
Վորպես հանգույցներ խճճված թելի,  
Ու ճամբան այնպես պարզ և յիշեռում,  
Գալիքի թովքը վառ՝ անհաղթելի:

Ամուր կառչել և Համզոն նոր կյանքին,  
Աճում և մտքով, կամքով, տարիքով,  
Նրա վորոնող միտքը անհանդիսա  
Մի լան և զտնում ամեն յերեկու  
Դիմավորում և տասնչորս տարուն,  
Անցած որերի տանջանքի բովում  
Իր կյանքը թրծած համառ պատանուն  
Իր նոր որերի հոգսն և վրդովում  
Խնչ վոր անորոշ նախազգում եր նա  
Հիմա հասկանում և կամաց կամաց,  
Կոմյերիտական ջուտով կդառնայ,  
Վոր ել ավելի լինի բանիմաց:

Թող կուլակ թղղոն հիմա կատաղի,  
Զայրույթից ուռչի, գինու տկի պես,  
Զայրույթի թույնը թող ծորա դեղին,  
Անզոր և, Համզո, մսաս տալու քեզ,  
Նրա պայքարը խորտմանկ ու նենգ,  
Թունոտ ժաղիտը՝ աչքերում դավող,  
Ակընհայտ զենքը,—հիմա կընդունենք  
Վոչ վորպես քո զեմ անհատի մի վոխ:  
Նրա դեմ, Համզո, քեզ հետ միաձույլ  
Ամբողջ մի բանակ կա կուռ, հաղթական,  
Վոր արորելով ամեն ծառացում  
Գնում ե անկանգ դեպի ապագան:

Կովի ձները հիմա ուրիշ են,  
Դուցե ավելի դժվար, աննահանջ  
Պետք ե հիմնական դիրքը վորոշել,  
Ամբողջ ճակատով շարժվիլ առաջ:  
Բազմադեմ ե մեր թշնամին այսոր,  
Հայանվում ե նա յերեմն անհայտից,  
Յերեմն Շընկեր ե փարված մեր վզով,  
Յերեմն թույն ե նենգտվոր խալթի...  
Ամբողջ ճակատով՝ քաղաքիցը գյուղ  
Յեվ գյուղից քաղաք՝ մեր բանակն անտէ  
Հարթելով ուղի, ուղսեր ե ձգում  
Յեվ շարժում կյանքը դեպի կոմունա:

Հարթվում և ուղին... հիմա զենքի տեղ  
Այստեղ՝ քաղաքում հանդես ե բերված  
Գործարանների ջոկնդը ահեղ,  
Յել ծով քրտինքը արյունի դիմաց  
Փնչում և շոգեգութանը գյուղում,  
Ճղմում ե, ջարդում արոր ու գութան,  
Փլշում ե մենակ, առանձին հյուղը,  
Զուլվում է հսկա մի տնտեսության  
Ամբողջ ճակատով... ահա թե ինչու  
Այդպես աւհաղթ ենք... և ընկած անզոր,  
Զարդված սայլի պես հինն ե ճռչում  
Իր վերջին յերգը, կոմյերիտ Համզու

### VII ԱՆՇԱՂԹԵԼԻՆ.

Դաշտերի վրա, լեռների լանջին  
Փոված են զարնան գորգերը խնդուն.  
Վորպես մանուկներ ժպտանուշ ու ջինջ՝  
Գորգերի վրա կառներ են խայտում:  
Ու հովիվների կատակը՝ վոնց վոր  
Զրի կարկաչը կանաչած ձորում,—  
—Աղջիկ ևս, Համզո, թշերդ խնձոր,  
Վոչ բեխ ունես դու և վոչ իլ մորուք»:  
Նրա աչքերում ժպտում ե նազով  
Անծանոթ մի փայլ՝ այնքան գրավող,  
—Աղջիկը դու յես՝ դարձնում ե Համզոն  
Յեկ ալեկոծում աչքելն մրահոն:

— Եսոսքով չի լինի, հապա մի գործով  
Ցույց տվեք՝ տեսնենք աղջիկը ով ե.  
Դե, կոխ բռնեցեք, ով ե վար գըցող,  
Թե չե ի՞նչ իմաստ՝ գլուխը գովեր  
Ցեռում ե աշխույժ արյունը նրանց  
Պատանեկության կայտառ կրակով,  
Ու փաթաթվում են յերկուսը իրար,  
Սեղմում ու քամում իրար մեջք ու կողտ  
Ցեղ թավալվում են կոնաչի վրա  
Իրար փաթաթված ընկերն ու Համզոն.  
Նրանց այտերից՝ շիկնած, կարմըրած՝  
Բավականության հույզեր են վազում:  
Զգում ե Համզոն իր այրվող դեմքին  
Ընկերոջ շունչը դուրեկան ու տաք...  
Ու մի ցանկություն մութ և անմեկին  
Ծնունդ ե առնում նրա կրծքի տակ:  
Անցնում ե մարմնով մի ոտար սարսուռ,  
Ցեղ թուլանում ե Համզոն դողահար...  
Ու չի ցանկանում ջանք թափել իզուր՝  
Ընկերոջ տակից դուրս գալու համար:  
Ուժ ե հավաքում, իբր թե կրկին  
Ճգնում ե դուրս գալ մի քիչ բարկացած,  
Ու չի ցանկանում... ուզում ե կրծքին  
Շարունակ զգալ ծանրություն ու ցավ:

Ու հանկարծ Համզոն, կարծես թե խայթված  
Ցնցում ե իրեն... առանց ջանքերի  
Իրեն հաղթողին գլորում ե ցած  
Ցեղ դուրս ե պլրծնում նրա ճանկերից.

Լեցվում են նրա աչքերը խորունկ,  
Յեկ արցունքները, ցողի պես առատ,  
Շիկնած այտերի վրայից գլորվում,  
Թափվում են դարնան խոտերի վրա:  
— «Ամոթ ե, Համզո, քեզ նման տղին,  
ԶԵ վոր հանաք եր այդ ընկերական...»  
Պախարակում են նաև հաղթողին,  
Վոր նա Համզոյին վշտացրեց այդքան:

Առանձնանում ե Համզոն մտախոհ՝  
Ինքն իր հետ մենակ մնալու մի պահ,  
Աչքերը լեցուն արցունքով, վախով՝  
Խեղդելու սրտում բըռնկված մի բան:  
Խեղդելու սրտում... խեղդել սակայն ի՞նչ...  
Հենց սիրտը ներսից բըռունցքի զարկով  
Բաղխում ե կրծքի փեղկերը ճընշիչ,  
Ուզում ե ջարդել, դուրս արծնել անքող:  
Բայց... միայն սիրտը... մարմինը ամբողջ՝  
Փշե շապիկրվ քողված զըսպանակ՝  
Ուզում ե ճեղքել հազուսուց բանդող,  
Մարմինն ու հոգին միասին բանալ...

Թուխ ստվերները սողում են, տսես  
Վախեցած անուժ, դեղնավուն լույսից.  
Արեր, ինչպես ընթրիքի ափսե,  
Սահում ե այն կողմ լեռների ուսից:  
Յեկ նրա վերջին շողերը սուզվում,  
Սողում են խորհող խոտերի միջից.

Մաղիկներն, ասես, քնել են ուզում,  
Փակում են իրենց աշխաները ջինջ։  
Հովիլ ու վոչխար դառնում են հանդից,  
Գյուղը լցվում և աղմուկով, կանչով...  
Դսում և Համգոն լուռ, տըրտմաթախիծ,  
Սրտում իր պահոծ գաղտնիքը տանջող։

Պառկել և Համգոն... մարմընի վրա  
Սողում են կարծես սառ-սառ ասեղներ...  
Վորպեսզի բարձր, բարձր չգոռա՝  
Ատամներով իր շրթներն ե սեղմել։  
Ուզում և գտնել մի յելք, մի հնար,  
Վոր չմտածի ու տարվի քընով։  
Նա պինդ փակում և աչքերը քնատ  
Ու պինդ սեղմում և տտամ ու ծնուա  
Վխտում են գլխում մռայլ ալիքով  
Անորոշ ձեեր, մտքեր անոգուտ,  
Յեվ բարձրանում և կուրծքը ալեկոծ,  
Ու հեկեկում և նա հոնգուր հոնզուր։

### VII ՎԵՐՃ ԽԱՄ ՍԿԻԶԲ

Ամբողջ ճակատով՝ քաղաքիցը գյուղ  
Յեվ գյուղից քաղաք՝ մեր բանակն անահ  
Հարթում և ուղին, սելսեր և ձգում  
Յեվ շարժում կյանքը դեպի կոմունա։  
Քաղաքը, վորպես յերկաթ—ղեկավար,  
Անթիվ թելերով կապված և գյուղին,  
Նա վոլորները կատարում ե վարժ,  
Յեվ գյուղը տանում ընթացքով ուղիղ։

Ու ղեկավարը խոհուն—սրատես  
Դիտում ե զգաստ, աչալուրջ հսկում,  
Ստուգում հաճախ ողերը պես-պես,  
Արգելակները սեղմում ե խսկույն:

Այնքան մարդիկ են հավաքվել ելի  
Կարծես միտինգ ե գյուղի դպրոցում...  
Ով վոր յեկել ե, անխուսափելի  
Թղթի մի կտոր պահում ե ծոցում,  
Եեվ սպասում ե, յերբ հերթը հասնի՝  
Ներս մտնի դանդաղ, նախ մի քիչ հազա  
Եեվ ապա ծոցից դիմումը հանի,  
—«Մի խնդիրք ունեմ, ընկեր կոմիսար...»  
Հատուկ մարդիկ են յեկել քաղաքից,  
Հարց ու փորձում են, քննում են անվերջ,  
Ծանոթանում են գյուղի կարիքին,  
Տեղում լուծում են և՛ գանգատ և՛ լիճ:

Մտնում ե՞ Համզոն՝ գույնը կորցըրած՝  
Մոտենում ե նա դանդաղ, անարի,  
Հանում ե ծոցից մի ճիշլած ծրար,  
Անվտահ մեկնում ե կոմիսարին:  
Նա ընթերցում ե... կլանվում մի պահ...  
Դեմքին զարմանքը, ժպիտը շռայլ  
Խաղում են պայծառ, փոփոխվում ապա,  
Վորպես լույսերը եկրանի վրա...  
Եեվ քրքջում ե լիաթոք, սրտանց  
Ու մոտ ե քաջում շիկնած պատանուն...»

Համզոյի թուղթը ձեռքից ձեռք գնաց,  
Հետաքրքրության քամին եւ տանում...

«Ընկեր կոմիսար - գրում եւ Համզոն, -  
Տասնհինգ տարիս լրացավ այսոր,  
Վերջին հինգ տարին առաց ծնողի  
Անցել եմ չարքաշ իմ կյանքի ուղին:  
Ապրելու համար յես ինչեր չարի...  
Մի գաղտնիք ունեմ արդեն հինգ տարի,  
Հինգ տարի չասած և վոչ մի մարդու...  
Այլևս անզոր եմ, իմ սիրտն եւ պայթում:  
Ինչ գիշերներ եմ անցկացրել անքուն:  
Իմ ով լինելը պահելով թաքուն:  
Ապրել եմ վարպես մի տղա Համզո,  
Բայց յես աղջիկ եմ, անունս Նազու:  
Անցած իր կյանքը ինչպես մոռանա...  
Պատմում եւ Համզոն իր կյանքը մռայլ  
Ու տարիների թախիծը, վոր նա  
Կրել եւ սրտի և դեմքի վրա.  
— «Ընկեր կոմիսար յես այլևս անզոր  
Ու անկարող եմ թագնված մսալ,  
Կոմյերիտական եմ թեև այսոր  
Բայց և դարձյալ չեմ կարող դիմանալ:  
Ինչից թագնվել և ինչու համար,  
Փոխված ե կյանքը... աճել եմ և յես...  
Միակ խնդիրս ե, ընկեր կոմիսար,  
Ինձ այսոր վերցնես ու քաղաք տանես...»


Հանձնաժողովը մեկնում ե գյուղից...  
Նազոն նստել ե զոֆերի կողքին.  
Յերջանկությունից ու նոր յերկյուղից  
Ալեկոծված ե աղջկա հոգին,  
Շրջապատված ե մեքենան անանց  
Խուռն բազմության ողակով անձուկ.  
Ճշում ե, գոռում մեքենան հանկարծ՝  
Փռելով շուրջը խիտ փոշի ու ծուխ:

— «Բարի ճանապոհ...» լսում ե Նազոն-  
իր ընկերների կանչն ե յերեխ...  
Իսկ ընկերները շվար, յերազկոտ  
Նայում են վազող կառքի յետևից

Նազո, հիմա դու մեր մեծ պայքարի-  
Վմբ ճակատումն ես և վմբ ողակում-  
Անցել ե նորից մի քանի տարի,  
Ի՞նչ ես սովորել հզոր քաղաքում:  
Ո՞ւմ հետ ես հիմա, սիրելի ընկեր,  
Ենվ ինչ գաղտնիքներ ունիս հիմա դու,  
Նոր կովի համար վորպիսի զենքեր.  
Ստացար այնտեղ կարող և հատու...  
Գյուղն սպասում ե, Նազո, քո դարձին,  
Դու յիտ ես գալու, դու յիտ ես դալու...  
Գալու յես կրկին մեր գաշտերն անծիր,  
Գյուղին քաղաքի տեսպերը տալու:

1929

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ԺՆՈՒՆԴԻ

9

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՆՈՒԲԱՆԵՐ

ԿԱՐՈՏԻ ՂՈՂԱՆՁՆԵՐ

Ժամացույց	15
Կարոտի զողանջներ	15
Կարոտի մայր	17
Աղբեկու հույս	19
Անրջանք	20

ՎԱՅՐԿՅԱՆԻ ՑԵՐՆԵՐ

Գատրանք	21
Նախազդացում	22
Ցերդ ու ծաղիկ	23
Ժպիտ	24
Դյուժանք	25
Stella	26

ՊԱՌԵԱԿՆԵՐ

Անհաս	27
Աստղեր	28
Մրածան	29
Լույսեր	30
Գտնձ	31
Հայացք	32

ՊԱԶԵԼՆԵՐ

Լույսեր	33
Անանց ծիածան	34
Ցերկնային սեր	35

Վարդոնում	35
Որհնություն	38
Իմ գնչուն	39
Վոստայն	40
Շերամի պես	41
Համբույքի վայրկյան	42
Վարսերի յերգը	43
Բաղձանք	44
Ցերմակ թելեր	45

### ՈՐԵՐԻ ԾԵՄԱԽԻՆ

#### ՏԵՐՄԱԿ ՏԵՍԻՎՆԵՐ

Դեղի տուն	49
Բանաստեղծը	50
Հայրս	51
Մայրս	52
Թույրս	53
Ջեղբայրս	54
Վորբը	55
Լուսնի մահը	56
Խարխափում	57
Մեղուն	58
Վերջերդ	59

#### ՈՐԵՐԻ ԱՅՐԵ

Վայելք	60
Աըշավ	61
Վազք	62
Կաբոտանք	63
Վահան	64
Նոր սեր	65
Զոհը	66
Դեղի մեկիա	67
Լուսայդ	77

ԽՈՐՀՈՂԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԻՔ

ՄԵՇ ԴՐԱՅԻ ՏԱԿ

Լևին	89
Ցեղակի յերդ	91
Ներբող նուեմբերյան առավոտին	93
Շահումյանի արձանին	95
Առաջին յերդը	98
Ցերեք քանյակ տարիներ	99
Կարմիր ժպիտը	100
Առավոտ	101
Ցերդեր առավոտյան	102
Պառավիր լացը	105
Ցերկու արե	108
Լուսատոն	111
Դիշերգիա յերդը	113
Սրնդահարը	114
Սկան	116
Փողոցը	118
Լոռու ձորը	120
Սահմանապահը	127
Հայրը	131
Պղինձ քանդողները	133
Պղնձաքարը	137
Ժանդը	140
Ցերկու պուտ	142

ՀԱՅԻ ՑԵՐԵԿԸ

Ցերդ հողի մասին	146
Թաղված այգի	149
Խոհեր	151
Հացը	157
Դյուղական	160
Սերմեր	162
Աշնանացան	163
Հունձը	164

ՅԵՐԿՎՈՒԹՅՈՒՆ	165
Լիություն	166

#### ԿԱՐՄԻՐ ԼԱԶԱԿՆԵՐ

Քըղջս լաչակը	168
Մայրերը	170
Կարմիր լաչակներ	173
Փոքրիկ տիկինը	177

#### ՄԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Միլը	183
«Խուժանական».	184
Փոքրիկ Աղբինեն	186
Մանուկները	187

#### ՆԵՐԱՇԽԱՐՀ

##### ՅԵՐԳԵՐ ՅԵՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ինքներգություն»	193
Զարկ սիրտ իմ	195
Մաքառում	196
Ցերգ ուրախության	198
Կանաքամանը	200
Ներքին ճակատ	202
Մալը	204
Ոտար կաթը	207
Մոլախոտը	209
Քնարական	210
Ցերզը	212

#### ՍԻՐՈ ԲԵՐԲԵՐ

Գարնանային	215
Նտմակ	218
Պատիժ	222
Փրկություն	223
Աչքերը	225

<i>Սիրո յերդ</i>	226
<i>Համբուլբ</i>	227

**ՅԵՐԳՆԵՐ ՄԱԾԻ ՄԱՍԻՆ**

<i>Պայքար</i>	229
<i>Տողերիս գասակներով</i>	231
<i>Արեին</i>	234
<i>Վահան Տերյանին</i>	235
<i>Իմ Վիքովիլը</i>	237

**ՅԻՐ ՈՒ ՑԱԿ**

<i>Արե</i>	239
<i>Շոայլություն</i>	240
<i>Այգելութ</i>	241
<i>Բեռը</i>	242
<i>Աճում</i>	244
<i>Հեքյամբը մայրիկին</i>	246
<i>Բնութան յերդը</i>	248

**ԱՐԱԳԱԾԻ ԿԱՆԹԵԴՆԵՐ**

<i>Կարուսել</i>	253
<i>Մտորումներ</i>	258
<i>Այծելություն</i>	261
<i>Զահը</i>	263
<i>Ցերազանք</i>	265
<i>Մարմափորված յերազներ</i>	269

**ԱՐԱԳԱԾԻ ԿԱՆԹԵԴՆԵՐ**


<i>Նախերդ</i>	272
<i>Արագածի կանթեղները</i>	274
<i>Կանչ</i>	278
<i>Հողի ձախը</i>	282
<i>Թարե վիշապներ</i>	285
<i>Լեռնային ծաղիկ</i>	288

ՄԱՅԻՍ 1920

Հիշողության յերեկո	290
Մայիսին եր	292
Մեքենավարը	294
Մեծ պատանին	296
Խարույկի վրա	298
ՍՈՒՆՑԱՆՐ	
Կատարինեյին	301
Դարերի առավոտ	302
Նահանջ	303
Ազնասանք ու յերդ	304
Տենչունք	305
Կյանք ու թորիչք	306
Հաղաբամյա նախերդանք	307
Նոյեմբերյան կը ակ	308
Վերելքի լուսարձակ	309
Անկապտելի գանձ	310

ՅԵՐՆՈՒ ՊՈՆՄ

1. Իրիկուն	313
2. Փշե շապիկը	333



ՆԿԱՏՎԱԾ ԿԱՐԵՎՀՈՐ. ՎՐԻՊԱԿԻՆԵՐ

23-րդ եջի 1-ին տողում պակասում է բակը մեր (վոչ բոլոր  
որինակներում)

37-րդ եջի 1-ին տողում վոմանքից հետո պակասում է հոգնուծ  
բառը

եջ	Տող	Տպված հ	Պետք և լինի
44	3 ն.	վարսերդ	վարսերիդ
77	4 փ.	բյուրեր	բույրեր
79	7 3	համբյուր	համբույր
83	8 3	ույժերն	ուժերին
125	13 փ.	ով	վոր
127	1 ն.	վոտեղ	վորտեղ
318	5 3	մշտականչ	մշտականաչ
237	7 3	վիրդի	վիրդիլ
240	1 3	այսո	այսորտ
246	5 3	յոթը	յոթ
253	վերնագիրը	կարուս	կարուսել
262	4 ն.	Զդում ես	Զդում ես
283	9 փ.	երբ	Յերբ
297	6 ն.	ըռայլ և	շռայլի
313	8 փ.	ոսկե	վոսկե
320	8 ն.	այնուհետեւ	այնուհետ
352	5 ն.	վոչ իլ	վոչ իլ



Συδρ.  
187